Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91.99
J-37

A 6886.

Mars.

ԵՓԻՄԷ

(ՄՈՌԱՑՈՒԱԾԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Հրատ. Յ. Յովսէփեան:

ՎԷՊԻԿ

ԲԱԳՈՒ
Տպարան „Արօր“
1903.

19 NOV 2011

891.99
Ս-37

Mars.

ԵՓԻՄԷ

(ՄՈՌԱՑՈՒԱԾԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1001
6096

Հրատ. Յ. Յովսէփեանի:

ՎԷՊԻԿ

Հայկական Գրադարան
Армянская Библиотека
7/II 1922
Москва, Мясницкая
Ա. ՍՅԱՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
Տպարան „Արար"
1903.

26.06.2013

42795

Дозволено цензурою, 26 Октября 1902 г. гор. Тифлисъ.

ՄՈՌԱՅՈՒԱԾԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Առաջին անգամն էր, որ արտասահման էի գնում։

Յունիս ամսի տասին, շաբաթ օրը, երեկոյեան ժամը մօտ չորսին, Ռուսական ընկերութեան „Ռոստով“ շոգենաւը, Բոսֆորի օձապտոյտ և զեղազուարճ նեղուցը նաւաճեմ անցնելով, կանգ առաւ Ոսկեղջիւրի մէջ, Զալաթիայի առաջ։

Պատմական Բիւզանդիոնը, իւր հսկայ շէնքերով, մզկիթների հարիւրաւոր մինարէթներով, զեղնագոյն ընդարձակ զօրանոցներով և սքանչելի ճարտարապետութեամբ կառուցած վիթխարի պալատներով,—աչքիս առջևն էր։ Անկարելի էր մտնել այդ նեղուցը և չը հիանալ։ Բնութիւնը՝ Մարմարեան և Սև ծովերը միմեանց խառնելու ժամանակ, կարծես աչքի առաջէ ունեցել մահկանացու մարդուն հիացում պատճառելու միակ միտքը, որի առաջ կանգնողը ակամայ խոստովանում է իւր մտքի, իւր կարողութեան և ուժերի անսահման ոչնչութիւնը։

Ես արդէն մոռացել էի հինգ օր շարունակ կրած նեղութիւններս շոգենաւում, նաւապետի հետ ունեցած վէճ ու կռիւներս, շոգենաւի ծակուծուկերը լցուած մէկքա գնացող պարսիկ ուխտաւորների պատճառած գարշահոտութիւնները և՝ վերջապէս, այն ամենը, ինչ որ սպասելի է մի շոգենաւային ընկերութիւնից, որ իւր շահերին զոհում է ճանապարհորդների հանգստութիւնն ու առողջապահութիւնը։ Այո, ես մոռացել էի այդ ամենը և միտքս բոլորովին յափշտակուածէր շրջակայ տեսարաններով, որոնք՝ թէև անծանօթ էին ինձ, բայց սքանչացնում էին։

Հազիւ թէ շոգենաւը խարիսխ էր ձգել, երբ հարիւրաւոր նաւակներ շրջապատեցին նրան։ Եւ տեղի ունեցաւ մի սարսափելի իրարանցում։ Ճանապարհորդները, հրդեհից կամ հեղեղից փախչողների նման, միմիանց հրելով ու բոթելով անցնում էին առաջ, խռնւում սանդուխտի վրայ, որ տեղից կարծես գլորւում էին ուղղակի նաւակների մէջ։ Նաւակավարներն իրենց կոկորդի լայնութեամբ և աշխարհիս բոլոր լեզուներով յաճախորդներ էին կանչում. որին երբեմն յաջողւում էր զուարճալի տուր ու թմբոց։

Այս վայրենի աղաղակները մի բոպէում ցրեցին քաղցը տպաւորութիւններս և ստիպուած եղայ մոռանալու, թէ պէտք է ցամաք դուրս գալ։ Բայց ո՞ւր գնայի։ Ես արդեն աչքովս տեսել էի Բոսֆորի մի ծայրից մինչև միւս ծայրը երկարող քաղաքը և տեսնում էի շուրջս տիրող խառնաշփոթութիւնը, վայրենի աղաղակը, հայհոյանքներն և՝ ի լրումն այս ամենի, առաջնորդ կամ ուղեցոյց կոչուած պարոնների անխեղճ կեղեքումները միամիտ ճանապարհորդներին։

«Ո՞ւր գնամ, ինչպէս ինքս ինձ յանձնեմ այս անծանօթ կեղեքիչներին, ո՞ւր իջնեմ, որ կեանքիս վտանգ չսպառնայ»... անդադար մտածում էի ես և չէի համարձակւում կանգնած տեղից մի քայլ անգամ առաջ շարժուել։ Ես շատ բան էի լսել Եւրոպայի ժուլիկների մասին. լսել էի որ օրը ցերեկով մարդուս կօշիկները ոտից դուրս են քաշում, թէ փողպատը արձակում են վզից, թէ խլում են վերարկուն, թէ... և այլ հազար ու մի անհաւատալի բաներ, որոնց վախենում էի հանդիպել Պոլսում։ Լսել ու կարդացել էի նաև հռչակաւոր Ենիչէրիների մասին, որոնք դուրս գալով իրենց գերեզմաններից պատկերացել էին աչքիս։ Ինձ թւումէր, թէ տեսնում եմ նրանց հսկայ հասակները, ահարկու դէմքերը, գաղանային աչքերն ու արիւնլուայ ձերքերը։ Եւ տիրում էր ինձ մի անծանօթ սարսափ։ Պատրանքն այնքան կենդանի էր, որ՝ պաշտպանողական դիրք բռնած, մի քայլ յետ գնացի։

Այդ ժամանակ ինձ մօտեցաւ մի անծանօթ մարդ։ Չնայելով ֆէսի տակից երկարող ալեխառն մազերին, նրա դէմքը դեռ առոյգ էր, ուր՝ որպէս ազգային մի փառաւոր յատկանիշ, փայլում էր նրա յաղթական քիթը։

Ոտիցս մինչև գլուխս մի լաւ չափելուց յետոյ հարցրեց։

— Դուք ո՞րտեղացի էք, պարո՞ն։

— Կովկասցի եմ, պատասխանեցի ես, սակայն չնայելով, որ հայերէն էր խօսում և հայկական քիթ կրում իւր դէմքին, այնուամենայնիւ աչքիցս չփախցրի նրա ոչ մի շարժումը։

«Միթէ չկա՞ն հայերի մէջ ժուլիկներ» մտածեցի ես և զգուշութեան համար ինքս ինձ մի քիչ հեռու պահեցի։

— Առաջին անգամն է օտարութիւն էք դուրս գալիս, կրկնեց իւր հարցը, շարունակելով միշտ նոյն նայուածքով դիտել ինձ։

— Ո՛չ... Ռուսաստանում շատ եմ պտտել։

— Ի հարկէ վաճառականութեամբ.,.

«Քննի՞չ է, ինչէ, ասացի ես մտքումս և նախազգուշութեան համար որոշեցի ճանապարհորդութեանս բուն նպատակը թաղցնել նրանից։

Ո՛չ, Ամերիկայ եմ գնում գործ որոնելու։

— Հապա ինչու չէք դուրս գալիս, ինչու էք շուարել, ամենքն էլ գնացին,

— Խնդրեմ ասացէ՛ք, դուք ո՞վ էք, նախ քան նրա վերջին հարցին պատասխանելը, հարցրի ես

— Ես Հաջին եմ, չէ՞ք լսել, պատասխանեց նա այնքան ինքնավստահ շեշտով, որպէս թէ ինքը Բիսմարկը լինէր, գէթ որի անունը պէտք էր որ ամենքը լսած լինէին։

— Ես ալէքսանդրապոլցի Հաջին եմ, Ռուսսկի մաղազայի մարդը,—շարունակեց նա նոյն ինքնավստահութեամբ.—պ. Մանթաշեանը, Բաթումի Տէր Կոստին, կապիտան Վարձելով և շատ շատերն ինձ ճանաչում են։ Պարիզի պ ո զ ի ս ի օ ն գնացողներից շատերն էլ ծանօթ են, իսկ դուք չէ՞ք լսել...

Հաջու խօսակցութեան եղանակը ինձ շատ դիւր եկաւ։

Որքան կարողացել էի նկատել, կեղծ, իրենք իրենց վրայ վստահութիւն չունեցող մարդիկ չեն կտրող այսպիսի շեշտով խօսել։

«Ուրեմն Հաջին լաւ մարդ է, վստահելի մարդ է, եթէ ժուլիկութեան արհեստը ոսկի մեդայլով աւարտողներից չէ», մտածեցի ես և պատմեցի կանգնելուս պատճառը։

Հաջին խօսքիս վրայ բարձր ծիծաղեց ու նկատեց։

— Կարդացողները միշտ այդպէս են, Բաբելոն չեն գնում, կարծելով թէ աշտարակը մինչև այսօր էլ քանդւում է։

Հաջու միտքը ես լաւ էի հասկանում. նա ուզում էր ասել, թէ կարդացողներն ամեն բան գրքի խօսքերովն են չափում ու դատում, թէև գրքի ու իրականութեան մէջ միշտ ահագին տարբերութիւն է լինում։ Օրինակ. ես կարդացել էի Կ. Պոլսոյ, Բոսֆորի և Ոսկեղջիւրի մասին զանազան աշխարհագրական տեղեկութիւններ և այլ նկարագրութիւններ, որոնց ազդեցութեան տակ կազմել էի իմ մտապատկերը։ Բայց այժմ տեսնում էի, որ կարդացածիս ու իրականութեան մէջ ոչինչ նմանութիւն չկայ կամ շատ քիչ նմանութիւն կայ...

— Մի վախենաք, աւելացրեց Հաջին.—սա առաջուայ Պոլիսը չէ, որ օրը ցերեկով մարդիկ էին կողոպտում ու մորթում... Ուրէ ձեր փրթիները. եթէ այդքան վախլուկ էք, ես էլ ձեզ հետ կը գամ...

Հաջին յանկարծ խօսքն ընդմիջելով, ֆէսն առաւ և բարևեց մեր մօտից անցնող նաւապետին, որը բարեհաճեց հարցնել Հաջու որպիսութիւնը և թէ ինչ է բերել վաճառելու։ Հաջին պատասխանեց նրան ինչ-որ ռուս-չինական լեզուով և կրկին դարձաւ ինձ։

— Ձեզ մի լաւ և ժան օտել կը տանեմ. իսկ յետոյ, եթէ կուզէք, կը ծանօթացնեմ ձեր ղեմլիակ-ներից մեկի հետ, որ մի շատ լաւ մարդ է։

Վերջին խոստումն ինձ աւելի ուրախացրեց. պատրաստ էի Հաջու շրթունքը համբուրել, եթէ՝ իրաւ՝ ղեմլեակս նրա ասածի չափ լաւ մարդ դուրս գար։

Առնելով ճանապարհորդական իրեղէններս կամ՝ Հաջու խօսքով, փրթիներս, ինչպէս նաւակ և անցագրի մասին մի կարգ խիստ գործողութիւններ յաջողութեամբ կատարելուց յետոյ, սենեակ վարձեցի նաւամատոյցին մօտիկ մի հիւրանոցում։ Այս բոլոր անհրաժեշտ գործողութիւնները կատարելուց յետոյ, Հաջին առաջնորդեց ինձ երկրացուս տունը, միշտ կրկնելով թէ՝ շատ լաւ մարդ է, թէ՝ չպէտք ղղջամ նրա հետ ծանօթանալուս համար։

Երկրացիս կամ՝ աւելի ճիշտ ասած՝ համաքաղաքացիս մի միջահասակ, թուխ դէմքով և համակրելի արտայայտութեամբ տղամարդ էր։ Առաջին տպաւորութիւնը, որ թողեց վրաս, այն էր,—որ կեանքի դառնութիւնները ճաշակած մի մարդ էր։ Այդ բանն ապացուցանում էր հենց նրա դէմքի արտայայտութիւնը և ժամանակից առաջ մորթը ակոսող բարակ կնճիռները։ Սակայն այդ դէմքի վրայ փայլում էին մի զոյգ կրակոտ աչքեր, որոնցով միայն ճանաչեցի համաքաղաքացուս։ Իսկ երբ մենք ձեռք մեկնեցինք միմիանց, կրկնելով մեր անունները, տեսայ, որ չեմ սխալուել։

Այո, նա ինքն էր. մոռացուած մարդը։

Հափտղանցութիւն արած կամ երկրացուս համեստութիւնը վիրաւորած չեմ լինիլ, եթէ ասեմ—շատ քիչ երիտասարդների կարող է յաջողել անձնական արժանիքներով միայն հասարակութեան մէջ գրաւել այն դիրքը, վայելել այն անկեղծ յարգանքը և խօսեցնել տալ իւր մասին, որպէս երկրացիս։ Ընկերութիւնների կամ ընտանիքների շրջանում նրա մասին խօսում էին միշտ լաւ, միշտ գովասանքով և յարգանքով։ Մի խօսքով՝ ամբողջ երիտասարդութեան մէջ եթէ կային իրենց սեփական արժանիքներով աչքի զարկող մի քանի հոգի, նրանցից մէկը, եթէ ոչ առաջինը, նա էր։

Բայց հասարակութեան, տգէտ ու նենգամիտ հասարակութեան աչքը չվերցրեց այդ։ «Ո՞վ է նա որ մելիքի որդին, ինչ հարստութեան տէր, որ այդքան խօսում են» ասում էր հասա-

բակութեան այդ չարամիտ դասը և չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ թէ, հասարակ ծագումից, հասարակ մարդու որդին, առանց հարստութեան ու տիտղոսի արժանի լինէր ուշադրութեան։ Քծնում էին նրա առաջ շատերը, բայց հտնից հոր էին քանդում նրա համար։ Եւ բանն այն տեղը հասաւ, որ խորտակուեց նա որպէս մի նորակառոյց շէնք, որի հիմքը դրուած էր հայրենասիրական և մարդասիրական գաղափարների վրայ, գաղափարներ, որոնք հիմք կազմելու համար դեռ շատ խախուտ էին։

Այո, ընկաւ նա և այլևս ոտք չկոխեց իւր այնքան սիրած հայրենիքը՝ չգիտեմ, իւր ամօթապարտ դէմքը հասարակութեան ցոյց չտալու, թէ նոյն հասարակութեան սև երեսն ինքը չտեսնելու համար։

Եւ շուտով մոռացուեց նա։ Մոռացան նրան իւր բազմաթիւ ընկերները, սրտակեցներն ու ծանօթները, մոռացաւ նաև ժողովրդի այն մասը, որ բացառութիւն էր կազմում միւս չարամիտներից։

Ես էլ մոռացել էի...

Բայց ահա, հանգամանքներն օտարութեան մէջ, այն էլ անսպասելի կերպով հանդիպեցնում են ինձ վաղուց մոռացուած մարդուն։ Դա երազ չէ, պատրանք չէ, ես կանգնած եմ նրա առաջև. նայում եմ խորտակուած մարդու ուրուականին, որ սակայն ինձ վրայ թողնում է նոյն վհոտ և նոյն պատկառելի տպաւորութիւնը։

Եւ ուրախութեանս չափ չկայ, պատրաստում Հաջու վրով փարելով համբուրելու նրան, որ բերեց ինձ հայրենակցիս մօտ։

— Ահա, այսպէս, Հաջի չէնք շնորքով հայրենակիցներիս միշտ մօտս բեր, որի համար շնորհակալ կը լինեմ... չգիտես որքան ուրախանում եմ... դրանով առնում՝ եմ հայրենիքիս կարօտը։

Ասաց նա Հաջուն և գառնալով ինձ աւելացրեց՝

— Հաջին գործի մարդ է, նա կարող է դնալ ընտանիքի համար հաց վաստակելու։ Իսկ դուք կը մնաք ինձ մօտ...

— Աւելի լաւ չի՞ լինել, որ ուրիշ անգամ գամ, ասացի։

Ի՞նչու... այսօր յոգնած էք... երևի Կովկասից Պոլիս ոտքով էք եկել։

— Ո՛չ. ես յոգնած չեմ, բայց տեսնում եմ, որ մենք խանգարեցինք ձեզ։ Բացի այդ Պոլսոյ ոլորպտոյտ փողոցներին դեռ անծանօթ եմ և առանց Հաջու դժուար կը լինի վերադառնալ։

— Պարապ խօսքեր, այսօր միասին կնթրենք, իսկ երբ քնել ուզենաք, ձեզ կառաջնորդեմ ձեր հիւրանոցը։

Հաջին, որ մեր խօսակցութիւնից օգտուելով դուրս էր գնացել. կրկին ներս մտաւ, գրկում ունենալով մի փոքրիկ, բայց ծիր երեխայ, որը հօրը տեսնելուն պէս, առանց ինձնից քաշուելու, հնչիւն ձայնով կանչեց «պապա, պապա» ու քիչ մնաց դուրս թռչէր Հաջու գրկից։

— Ահա աղջիկս, առաց նա գրկելով,—սրա թոթոված իւրաքանչիւր մի բառը անսահման բերկրանքով ողողում է սիրտս և վարդ է ցանում կեանքիս փշոտ ճանապարհի վրայ։ Վիկտոր Հիւգոն ասում է «Մանուկները հրեշտակների լիզուով են խօսում, իսկ հրեշտակները՝ Աստուծոյ» իսկ ինձ թւում է թէ մանկական լիզուով կարծես նախախնամութիւնը մի բան է ուզում ասել մեզ։ Սա անդրանիկս է։ Շուտով առիթ կունենաք մօր հետ էլ ծանօթանալու։ Գիտէք՝ մենք ոչ ծառայ ունենք, ոչ աղախին. ընտանիքի կառավարութեան հոգսը մենք բաժանել ենք մեր մէջ և իւրաքանչիւրը մեզանից անտրտունջ կատարում է իւր պարտականութիւնը։ Հակառակ այն մեծ աղմուկին. որ յարուցուածէ կանանց հարցի շուրջը—մենք նրան արդէն լուծել ենք։ Դժուար չէ գուշակել, թէ բնութիւնը մեզանից իւրաքանչիւրին ինչի համար է ստեղծել և որպէսի իրաւունքներով... Այժմ նա որպէս խոհարարուհի, խոհանոցումն է, իսկ երբ իւր գործը կատարի, այն ժամանակ որպէս ընտանիքի իշխանուհի, կը նստի մեզ հետ սեղան։ Մենք բոլորս պարտաւոր ենք հնազանդուելու նրա բոլոր կարգադրութիւններին, որովհետև բնութիւնը այդ իրաւունքը նրան է տուել...

Ես նրա խօսքերը լսում էի առանձին յափշտակութեամբ,

որովհետև դա ինձ համար նորություն էր։ Եւ միշտ կրկնում էի մտքումս։

«Ահա ընտանեկան բուն երջանկությունը, ահա այդ երջանկության լոգիկան, որ անծանօթ է մինչև անգամ բարձր դասակարգի ընտանիքներից շատ շատերին»։

Ընորհակալությանս հետ միասին նաև վարձատրելով հաջուն, ճանապարհ դրի։ Մենք մնացինք մենակ։ Նա սկսեց իւր տարբեր հարցերով ողողել ինձ։ Նա հարցրեց ժողովրդի կեանքի, նրա նիստ ու կացի, ներքին և արտաքին պայմանների մասին. նրա նիւթական կացութեան և մտաւոր ու բարոյական առաջադիմութեան մասին. դպրոցների և այլ կրթական հաստատութիւնների մասին. ընդհանուր վաճառականութեան, արհեստանոցների և սրանց մէջ տեղի ունեցող մրցութիւնների մասին և այլ բազմաթիւ հարցերի մասին, որոնցով՝ ինչպէս երևում էր, չափազանց հետաքրքրւում էր նա։

— Հարցնելու շատ բան ունեմ, սակայն չեմ ուզում միանգամից ձանձրացնել ձեզ, աւելացրեց նա.—բացի այդ ես էլ մի քիչ դրելիք ունեմ. խնդրեմ հանգստացէք, մինչև որ գործս վերջացնեմ։ Շատ չի քաշի. ընդամենը մի քառորդ ժամ. յետոյ ազատ կերպով կը խօսենք։

Ու նստեց սեղանի առաջ մեր ներկայութեամբ ընդհատուած ինչ-որ հաշուական գրութիւնները վերջացնելու։ Իսկ ես մի քիչ հեռու դրած տաճկական օթոցի վրայ նստելով, սկսեցի շուրջս դիտել։ Ցան մի անկիւնում դրած գրադարանը, որ լիքն էր փառակազմ ու խիստ ճաշակով դասաւորած գրքերով, ուշադրութիւնս գրաւեց։

— Ներեցէք, կարող եմ ձեր գրքերը նայել. հարցրի։

— Ինչու չէ, ձեր տրամադրութեան տակ են։

Մօտեցայ գրադարանին ու նախ կարդացի նրանց անունները, որ ոսկի տառերով տպուած էին կազմի ետևում։ Նրանցից մեծ մասը ֆրանսերէն էին։ Ռուսերէն գրքերի մէջ աչքի էին ընկնում Տուրգենևի, Լերմոնտովի, Գոնչարովի, Դոստոևսկու և այլ ռուսական գրականութեան փայլուն տաղանդաւորների անունները։ Ընորհիւ տեղային պայմանների հայ ինքնուրոյն հեղինակութիւններ շատ քիչ կային. մնացածներից մեծ մասն էլ թարգմանութիւններ էին, որոնց մէջ առաջին տեղը բռնում էր Վիկտոր Հիւգոյի «Թշուառներ»։ Ես դուրս քաշեցի այս վերջինիս առաջին հատորը, բայց չնայելով իմ ծայրահեղ ուշադրութեան, նրա հետ դուրս եկաւ և մի ձեռագիր տետրակ, որ դրուած էր Ա. և Բ. հատորների մէջտեղում։ Այդ ձեռագրի վրայ աչքիս ընկաւ հետևալը՝ «Եփիմէ. (մի պատկեր իմ կեանքից)»։

"Եփիմէ՛ անունը յիշողութեանս մէջ զարթեցրեց մի ամբողջ դէպք, որ իւր ժամանակին բաւական զբաղեցրել էր մեր քաղաքացոց։ «Արդեօք այն դէպքն է գրի առել» մտածեցի ես և հայեացքս ակամայ դարձաւ նրան։ Նա էլ ինձ էր նայում, որով տեսած լինելս թագցնել այլ ևս կարելի չէր։

— Ներեցէք... գրքի հետ դուրս եկաւ, կըմկըմացի ես. — սակայն խոստովանում եմ, որ շատ հետաքրքրեց ինձ հերոսուհու անունը, որով կնքած է այս փոքրիկ գործի ճակատը։

Նա ժպտաց ու հարցրեց.

— Միթէ ծանօթ է ձեզ այդ անունը։

— Կարծեմ՝ այո, մանաւանդ երբ ձեր գրքերի մէջ է գտնւում։

Նա գլուխը քարշ ձգեց ու խորին կերպով հառաչեց։ Ինձ թւաց թէ այդ հառաչանքի ձայնը լսում եմ մի շատ խոր անդունդից կամ շատ շատ հեռուից, որքան հեռու անցեալում կատարուել էր այն դէպքը։

—Կարող եմ կարդալ, հարցրի, զգալով միևնոյն ժամանակ, որ սրածս չափազանցութիւն է և համաքաղաքացուս հիւրասիրութիւնն ի չարն եմ գործ դնում։

— Խնդրեմ. այժմ ոչ մի արգելք չկայ... տարիներ են անցել վրայից. ժամանակն ու պայմանները փոխուել են, որով անցել են այն վտանգները, որ կարող էին առաջ գալ և անախորժ աղմուկ յարուցանել իւր ժամանակին։

Նա շատ երկար չէր և գրուած էր շատ որոշ ու մաքուր

ձեռքով, իսկ տակին գրած իւր անունը։ «Արդեօք կարելի չէ տպագրել տալ» անցաւ մտքովս, բայց այս միտքը յայտնեցի նրան մի քանի ամիս յետոյ, երբ համոզուեցի թէ՝ քիչ ու շատ գրաւել եմ իւր վստահութիւնը։

Նա մի քիչ տատանուելուց յետոյ հաւանութիւն տուեց, միայն այն պայմանով, որ գործող անձերի անունները փոխուեն, գործողութեան տեղն ու ժամանակը չյիշուի և իւր անունը յիշուի միայն դերանունով։

Եւ ես այս օր յանձնում եմ տպագրութեան յարգելով իւր առաջարկած բոլոր պայմանները։

ԵՓԻՄԷ

Ա.

Երկար չվէտքէ պատմեմ, թէ՝ ինչպէս թողնելով դպրոցական նստարանները, վիճակուեց ինձ նստել ոսկերչութեան դազգահի առաջ և գիրք ու գրչի տեղ ձեռքս առնել ոսկի ու արծաթ, չաքուճ ու զնդան։

Բաւական է ասել թէ՝ հենց այդ տարին վախճանուեց հայրս, մեզ որբ թողնելով։ Թէև փոքր էի, դեռ նոր լրացել էր տասնուհինգ տարիս, բայց տան երէց որդին լինելով, պարտական էի փոխարինել հօրս, որով վեց հոգուց բաղկացած ընտանիքի հոգսը ծանրացաւ վրաս։

Այդքան փոքր հասակից ընտանեկան հոգսերով ծանրա-

քեռնուելու առաւելութիւնները և իմ մտաւոր ու բարոյական զարգացողութեանս վրայ գործած ազդեցութիւնը ես շատ տարիներ յետոյ միայն հասկացայ։

Պայմանների այսպէս անսպասելի փոփոխութիւնից մի քանի ամիս յետոյ վշտացած սրտով ասացի մօրս.

— Մայրիկ, հանգուցեալ հայրս խոստանում էր ինձ համալսարան ուղարկել, կրթուած ու յայտնի մարդ դարձնել... բայց ընդհակառակը պատահեց... ես թաղուած եմ խորին անյայտութեան մէջ. ամենքն էլ խեթ աչքով են նայում վրաս, շատերը ծիծաղում են ձեռք ու երեսս մրոտ տեսնելով. հին դասընկերներս անգամ այժմ մի տեսակ արհամարանքով են նայում վրաս և տեսնելիս երես են դարձնում, կարծես ամաչում են մինչև անգամ բարևել։

Մայրս քնքշաբար դլուխս շոյեց և հաստատուն շեշտով պատասխանեց։

— Դու միշտ անյայտ չես մնալ, եթէ քաջութիւն ունենաս համբերութեամբ առաջադիմելու։ Կեանքը աւելի մեծ դպրոցն է, ուր աշխատողը կարող է զարգանալ, իսկ արհեստանոցը նոյնպիսի մի համալսարան է, որտեղից դուրս են դալիս բժշկների ու փաստաբանների նման մասնագէտներ։ Աշխատիր, համբերութեամբ աշխատիր և կը տեսնես, որ ասածս ճիշտ է։

Մեր թաղի մէջ ամենքն էլ մօրս համարում էին որպէս մի շատ խելօք կին։ Այդ ես լսել էի շատերից, որպէս և հանգուցեալ հօրից։ Ուրեմն իմ մանուկ ուղիղը ուրիշ տեսակ հասկացողութիւն ունենալ նրա մասին չէր կարող։ Այդ պատճառով նրա քաջալերական խօսքերը, որպէս մի սրբազան պատգամ, անջնջելի կերպով դրոշմուեցին ուղիղիս մէջ։ Այնուհետև այլևս ուշադրութիւն չդարձրի շատերի արհամարանքին և հոգով սրտով նուիրուեցի արհեստին, որ այդ ժամանակ նահապետական յետադէմ վիճակի մէջ էր և չկար մէկը, որ զոհ լինէր իւր ար-

հեստից, որ արհեստը կարողանար ապահովել արհեստաւորի գէթ օրական պարէնը։

Այնժամանակ ես դրա պատճառը չգիտէի, բայց յետոյ փորձը ինձ ապացուցեց, որ մեղաւորը իրենք՝ արհեստաւորներն են եղել, որ արհեստը, պարապմունքը չէ մարդին բարձրանողն, այլ մարդն ինքն է թէ իրեն և թէ արհեստին, պարապմունքին բարձրացնողը։

Արհեստանոց մտնելուս օրից անցել էր մօտ հինգ տարի։ Ես դարձել էի խելահաս պատանի, գոհ էի իմ վիճակից, գոհ էի նաև արհեստի արտադրած արդիւնքից։ Քաղաքում տղէն վաղուց խօսում էին իմ մասին, իսկ յաճախորդներս օր օրի վրայ աւելանում էին։ Բանն այնտեղ էր հասել, որ քաղաքի հարուստ և ինտելիգէնտ դասը ոչ միայն չէր քաշւում հետս յարաբերութիւն ունենալուց, այլ ընդհակառակը նիւթապէս ու բարոյապէս էլ քաջալերում էր ինձ։ Ինարկէ դեռ գտնւում էին մարդիկ, որոնք խօսակցութեան ծամանակ „էհ, արհեստաւոր է, էլի“ ասում ու արհամարանքով շրջում էին երեսները, սակայն սրանք էլ շուտով հաշտուեցին հանգամանքների հետ։ Հաշտուեցին նաև արհեստակիցներս, սրանք առաջ ծաղրում էին ինձ «դպրոցի աշակերտ» կոչելով այն համոզմամբ թէ՝ դպրոցականից արհեստաւոր դուրս գալ չի կարող, թէ՝ արհեստաւոր լինելու համար արհեստաւոր պէտք է ծնուել, այսինքն փոքր հասակից պէտք է սկսել վարպետի կօշիկները սրբելուց և հասնել վարպետութեան։ Սակայն փորձով տեսան, որ սխալուած են, որ դպրոցում մշակուած ուղեղն աւելի ընդունակ է արհեստի գաղտնիքն ըմբռնելու և նրա մէջ թափանցելու, քան տղէտ վարպետի կոպիտ բռունցքի տակ բթացած ուղեղը։

Պէտք է ասեմ, որ այս աշկարայ երևոյթներից այն կողմ ես ոչինչ չէի տեսնում, որովհետև ամբողջ օրն զբաղուած լինելով, աղատ ժամանակ չունէի։ Ասացի, որ իմ մասին արդէն սկսել էին խօսել.— այդ ես գիտէի, բայց ինչ էին խօսում, ինչով էին հետաքրքրւում—ես այդ չգիտէի։ Ես դեռ այն կարծիքին էի, թէ ինչ էլ լինեմ—արհեստաւոր եմ, սահմանափակ շրջանակի մէջ. որտեղից դուրս գալ չեմ կարող, որ հասարակութեան աչքում կարող եմ լաւ արհեստաւոր լինել, բայց չեմ կարող յայտնի մարդ լինել, որ կազմում էր իմ մտածութեան միակ առարկան կամ՝ մոդայական բառով՝ իդէալս։

Ամեն անգամ երբ մտածում էի այս մասին, մի տեսակ յուսահատութիւն էր գալիս վրաս և գլուխս ու ձեռքերս հրաժարւում էին գործել։ Բայց միևնոյն վարկենին հնչում էր ականջիս մօրս խօսքը՝ „Դու անյայտ չես մնալ, եթէ քաջութիւն ունենաս համբերութեամբ առաջադիմելու“...

Ու կրկին ոգևորւում էի և մի ինչ-որ նոր ու թարմ ուժերով սկսում էի աշխատել։

Ռուս-թրքական պատերազմը կարծեմ դեռ վերջացած չէր, երբ մի օր տեղական X-եան օրիորդաց դպրոցի տեսչի կողմից մի նամակ ստացայ։ Պէտք է ասած, դա ինձ համար նորութիւն չէր. տարեկան մի քանի անգամ այդպիսի նամակներ ստանում էի։ Դժբաղդ հանգամանքների բերմամբ ուսումս թերի թողնելուց և արտասուալից աչքերով դպրոցին ակամայ հրաժեշտ տալուց յետոյ էլ՝ սիրտս անքակտելի կապերով կապուած էր մնացել այդ հաստատութիւնների հետ։ Ես սիրում էի նրանց այնպէս որպէս կարող է սիրել մէկը իւր սրբութիւնը, իւր իդէալը կազմող առարկան։ Եւ ինքս ինձ ճանաչած օրից սկսած, աշխատում էի կարողութեանս չափ թէ՝ նիւթական և թէ՝ բարոյական տեսակէտից օգտակար հանդիսանալ յիշեալ հաստատութիւններին։ Այս բանի մէջ ես գտնում էի այն մեծ սփոփանքը, որպիսի սփոփանք որդեկորոյս մայրը որոնում է սիրած զաւակի գերեզմանի վրայ թափած ջերմ արտասուքի մէջ։

Ինարկէ իմ այս տրամադրութիւնը անծանօթ չէր դպրոցի տեսչին ու հոգաբարձութեանը։ Եւ սրանք երբեմն դիմում էին ինձ դրամի խնդիրքով, շատ անգամ էլ դպրոցական այս կամ այն հանդիսին ներկայ գտնուելու համար։

Ենթադրում էի՝ թէ վերջին նամակն էլ մի այդպիսի բան

պիտի բովանդակելիս լինէր, սակայն որքան մեծ եղաւ զարմանքը երբ կարդացի։

Ահա թէ ի՞նչ էր գրած։

«Պարոն №... №...

«Աչքի առաջ ունենալով, որ դուք ոչ մի առիթ չէք փախցրել օգտակար հանդիսանալու ձեր սիրած դպրոցներին, թատերասէրների խումբը, որոնց ստորագրութիւնը կը կարդաք ստորև, խոնարհաբար խնդրում է՝ բարեհաճէք ներկայ դտնուելու երեկոյեան ժամը 8-ին տեղի ունենալիք ժողովին և որևէ մի դեր ընդունելու «Զուշանիկ» ողբերգութիւնից, որ տրուելու է յոգուտ X-եան օրիորդական դպրոցի»։

Սոյն համառօտ նամակի տակ գրուած էր նախ՝ նոյն դպրոցի տեսչի և ապա՝ թատերասէրների ստորագրութիւնը, տեղային երիտասարդութիւնից բաղկացած։

Ե՞ս ու թատրոն և այն որպէս դերասան,—սա շատ տարօրինակ բան էր։

Այստեղ աւելորդ չեմ համարում անել մի այնպիսի խոստովանութիւն, որպիսին ինձ նման շատ շատերը մեծ խնամքով կը ծածկէին, լսողի ծիծաղը չը շարժելու համար։ Այդ այն է, որ՝ չնայելով ես արդէն քան տարիս անցրել էի, որպիսի տարիքում ուրիշները կեանքի բոլոր բովերից ու խաւերից անցած են լինում.— ես կեանքիս մէջ ոչ միայն թատրոնի երես չէի տեսել, այլև նրա մասին ամենահասարակ ու տարրական հասկացողութիւն էլ չունէի։ Գիտեմ, որ սա մի ծանր խոստովանութիւն է, որ ուրիշները ձեզ կը հաւատացնէին, որ Զէքսպերի Համլէտը իրենց մօր արգանդում եղած ժամանակ անգիր գիտէին—բայց ես իրողութիւնը չեմ սուղում կեղծել։ Որքան յիշում եմ, սրանից շատ տարիներ առաջ, երբ, ի հարկէ ես դեռ փոքր էի, թատրոն անունը ականջովս ընկել էր, որ՝ կարծեմ տեղի էր ունեցել թեմական դպրոցում։ Բայց թէ ի՞նչ բան էր նա՝ ուտելիք թէ խաղալիք—այդ բացարձակապէս չգիտէի։ Իսկ այնուհետև մեր

քաղաքում ոչ թատրոն էր գոյութիւն ունեցել, ոչ էլ առիթ ունենայի նրա մասին լսելու։

Եւ այժմ հրաւիրում էին ինձ գոնէ ոչ որպէս պարզ հանդիսատես, այլ որպէս դերասան, որ շատ տարօրինակ էր գալիս ինձ։ Դրա մասին որոշումս տալուց առաջ, մտածեցի խորհրդակցել մեր տանը. թէև շատ էլ յոյս չունէի, թէ մայրս թոյլ կը տայ։ Բայց որքան զարմացայ երբ նա ոչ միայն հաւանութիւն տուեց ու համառօտակի բացատրեց թատրոնի ինչ լինելը, այլև ասաց, որ արդէն ժամանակ է, որ ես հասարակութեան մէջ երևամ...

— Տեսար, որ արհեստի մէջ էլ մարդն անյայտ չի մնալ, նկատեց մայրս ծիծաղելով և աւելացրեց. — միայն ամօթխած չպէտք է լինել, ապա թէ ոչ կը խայտառակուես։

Աւելորդ եմ համարում ասել, թէ առաջին անգամ յանձնեցին մի շատ փոքրիկ դեր։ Այնուամենայնիւ ես ծանօթացայ թատրոնի ու նրա պայմանների հետ, ու սիրելով շարունակեցի մասնակցել։ Զնորհիւ գէպի թատրոնը տածած մասնաւոր սիրոյս, այնքան ընտելացայ բեմին, որ խումբը սկսեց յանձնել ինձ աւելի պատասխանատու դերեր այնժամանակուայ ազգաստիկ պիէսներից, որոնք վաղուց արդէն կորցրել են իրենց հետաքրքրութիւնը։

Այդ օրից սկսած կեանքիս եղանակը մասամբ փոխուեց։ Ես ճանաչեցի շատերին, շատերն էլ ճանաչեցին ինձ։ Ստիպուեցայ ընդունելու հրաւէրներ սրա ու նրա մօտ, որպէս և հրաւիրել սրան ու նրան։

Ընկերներիս ու ծանօթներիս շրջանն անհամեմատ լայնացաւ։ Մասնակցում էի ընտանեկան հանդէսներին, խնջոյքներին ու երեկոյթներին, որոնց մէջ գանուում էին և քաղաքի յայտնի ընտանիքներից։

Նախ դպրոցի և ապա արհեստանոցի փակ, միակողմանի կեանքից դուրս գալով, յանկարծ ինքս ինձ զգացի բուն կեանքի հոսանքի մէջ, կեանքի բազմակողմանի վայելքների, շքեղու-

թիններին ու հմայքներին առաջև կանգնած ճակատ առ ճակատ։ Կարծես վանդակում ծնուած ու մեծացած թռչուն լինէի, որ դուրս թողած ժամանակ, մի քանի րոպէ շուարում է, չգիտանալով դէպի ո՞ւր գնայ, կրկին դէպի վանդակը թէ՝ սաւառնի ազատ երթերքում։

Կեանքի այս նոր եղանակն սկզբներում ինձ շատ խորթ ու անյարմար էր երևում. զգում էի՝ որ զգայարանքներս սասիկ յոգնում են, մի տեսակ թմրութիւն է գալիս վրաս։ Աղմկալից կեանքի գինովութեան բոպէներում մտածում էի խոյս տալ այդ աղմուկից և վերադառնալ իմ սովորական խաղաղ կեանքի գիրկը—բայց չէր յաջողում ինձ։ Ես՝ որ միշտ և ամեն դէպքում իշխող էի հանդիսացել կամքիս վրայ, սանձել էի քմահաճոյքներս, այժմ տեսնում էի որ կամք ասածդ բանն իմ մէջ երես էր առել և ես անզօր, շատ անզօր էի դիմադրելու նրա անսանձ ձգտումներին։ Զգում էի, որ ուժերս կամաց կամաց թուլանում են, որ հակառակ իմ կամքի նրանք տեղի են տալիս ինչ-որ տարբեր ոյժի։ Իհարկէ այդ բոլորը տեղի ունեցաւ սկզբներում, բայց վերջապէս ընտելացայ աղմկալից կեանքին կամ աւելի ճիշտն ասած, ինքս ինձ յանձնեցի մարդկութիւնը ողողող կեանքի յորձանքին։

Այս բոլորը յիշելուս գլխաւոր պատճառն այն է, որ սրանք կազմում էին այն նշանաւոր դէպքերը, որոնք ահագին ազդեցութիւն ունեցան վրաս, ինձ տարան բոլորովին ուրիշ ճանապարհով, որ գուցէ երբէք չգնայի, եթէ դուրս չգայի արհեստանոցի փակ պատերից։

Արդէն գրութեանս գլխաւոր նպատակը հենց այդ դէպքերի ամփոփումն է, որոնց գրի առնելով, որպէս կենդանի և իրական օրինակներ, կուզեմ աչքիս առաջև ունենալ մինչև կեանքիս վերջը։ Մարդը բաղադրուածէ այնքան փափուկ ու ճկուն տարրերից և շրջապատուածէ այնպիսի խարուսիկ երևոյթներով, այնքան խոտորեցուցիչ պայմաններով, որ սխալանքները միշտ անխուսափելի են։ Սակայն ճշմարիտ է և այն, որ նոյն մարդն աւելի քիչ կսխալուի, եթէ իր անցեալը պատկերացրած ունենայ աչքի

առջև։ Մարդուս այսօրուայ քայլը վաղուայ քայլի փորձը պէտք է լինի, վաղուանը՝ միւս օրուայ և այսպէս միշտ և յաւիտեան, մինչև որ նա կհասկանայ իւր արածի հետևանքն ու արժէքը...

Բայց ես շեղուեցի։

Բ.

Մի օր ծանօթներիցս մէկը հրաւիրեց ինձ իւր հարսանեաց հանդիսին ներկայ գտնուելու։

Ես չմերժեցի, որովհետև արդէն սովորել էի չմերժել։

Պէտք է նկատեմ որ այսպիսի նուիրական հանդէսները մեր քաղաքում կատարում են մեծ շքով և վերջանում են ճոխ ճաշկերոյթով ու լիառատ հիւրասիրութիւնով։ Սա՝ իհարկէ՝ մնացորդ է նախնական սովորութեան, իսկ սովորութիւնը հիմնուած հայ ժողովրդի աւանդական հիւրասիրութեան վրայ, որ ոչ գլորուող տարիները, ոչ արիւնահեղ պատերազմները, ոչ գերութիւն, հալածանք, ջարդ և ոչ որև է այլ տխուր հանգամանք չեն կարողացել հայ սրտերից ջնջել պապերից ժառանգած այդ նուիրական սովորութիւնը։ Թէև այդ հանդէսները նիւթական մեծ զըրկանքների են մատնում ժողովրդին, սակայն դրանք ունեն նաև իրենց բարոյական օգուտները։ Այսպիսի համախմբումները մի տեսակ պարտաւորեցուցիչ շփում են առաջ բերում, որտեղից ծագում է փոխադարձ սիրոյ և յարգանքի զգացում։ Սրանք լայնացնում են ծանօթների, բարեկամների շրջանը, կապում են միմեանց զանազան կողմնակի կապերով, կազմելով մի ահագին ընտանիք։ Այս գեղեցիկ սովորութիւնը կարող էր աւելի մեծ օգուտ բերել, եթէ նա մնալով հանդերձ, ծախքերը կրճատուէին։

Ցիշեալ հարսանեաց հանդէսը նոյնքան շքեղ էր ու մեծածախք։ Երկսեռ հիւրերի մի ահագին բազմութիւն լցրել էր հարսանքատունը։ Ասիական դափ ու դուռնան զղրդեցնում էր ամբողջ թաղը, արձագանք տալով նաև հեռաւոր թաղերում։ Զուրնա-նազարային դաշնակցում էին հանդիսականների խլացուցիչ ծափերն ու բացականչութիւնները։

Սենեակի օդը ծանրացել էր բազմութեան արտաշնչութիւններով։ Անսովոր մարդը մի բոպէ չէր կարող նստել այդ ապականուած օդում։ Մենք մի քանի հոգով գտնուում էինք պատշգամբում և մէկը մեզնից խօսում էր այդ տարուայ անսովոր թանգութիւնների մասին, որը սով էր սպառնում քաղաքի բնակիչներին, մանաւանդ աղքատ դասակարգին, որ առանց այն էլ հազիւ կարողանում էր իւր թշուառ գոյութիւնը պահպանել։

Խօսակիցներից մէկը, որ ուրախ ու անհոգ բնաւորութեամբ մի երիտասարդ էր և երբէք սովորութիւն չունէր վաղուայ մասին մտածելու, երևի տեղի ունեցող խօսակցութիւնից ձանձրացած, առաջարկեց ինձ գնալ կանանց բաժանմունքը, ուր տիկիններն ու օրիորդները պարում էին։

Քանի որ միջանկեալ խօսեցի աւանդական գեղեցիկ սովորութեան մասին, ուրեմն աւելորդ չի լինիլ մի քանի խօսք ասել նաև հարեմական մի կարգ սովորութիւնների մասին, որոնք ժառանգական լինելով հանդերձ շատ խոր արմատներ են գցել հասարակութեան մէջ։ Երկու սեռի մարդիկ, բացի մօտիկ ազգականներից չեն կարող միասին նստել, միևնոյն սեղանին մասնակցել, միասին խօսել։ Այդ ամօթ է, անպատշաճ է, շատ դէպքում մահացու մեղք է որպէս հայ-կնոջ, նոյնպէս հայ-տղամարդի համար։ Ուստի կանանց սենեակը, նրանց սեղանը միշտ զատ է լինում տղամարդկանց սենեակից ու սեղանից, մի բան, որ քաղաքակրթութեան արգելք դառնալով հանդերձ, ամենևին արգելք չի դառնում անբարոյականութեան մուտք գործելուն։

Այնուամենայնիւ ես մերժեցի կանանց բաժանմունքը գնալ ի նկատի առնելով տիրապետող կարգերը։

— Այդ ոչինչ. մենք նրանց մօտ չենք գնայ, այլ դրնից կը նայենք պարերին։

Ես կրկին մերժեցի, երբ նա իւր սովորական շաղակրատութեամբ սկսեց համոզել ինձ, թէ այնտեղ մենք մենակ չենք լինի, թէ բոլոր երիտասարդներն այնտեղ են, թէ դա սովորութիւն է, որովհետև հենց այսպիսի տեղերում են հարսնացուներ ընտրում։

— Իսկ ես դեռ միտք չունեմ հարսնացու ընտրելու, պատասխանեցի։

— Քեզ աղաչող էլ չկայ, բայց գնանք, չես զղջալ, ասաց նա և համարեա զօրով քարշ տուեց ինձ դէպի կանանց բաժանմունքը։ Այստեղ, դրան առաջև տեսնելով երիտասարդների մի ահագին բազմութիւն, ես մի փոքր սիրտ առայ։

Այս բաժանմունքը տղամարկանց բաժանմունքից աւելի ընդարձակ էր։ Հարեմական կեանքի մէջ նոյն իսկ քնքոյշ սեռը համեմատաբար աւելի մեծ յարգանք էր վայելում։ Սակայն ես կարծում եմ, որ այդ յարգանքի զգացումը չի բղխում այն համոզումից, որպիսի համոզումից բղխում է ճշմարիտ քաղաքակիրթ մարդու յարգանքը դէպի կինը։ Իհարկէ ուրիշ են Եւրոպացիք, ուրիշ ենք մենք։ Հայ կինը՝ իրաւ՝ համեմատաբար աւելի հաւատարիմ ամուսին է, բայց այդ հաւատարմութիւնը մի սեռակ բռնադատական է։ Հայ կնոջ պակասում է շատ բան. նա քաղաքակրթութիւնից մերկ է, բոպիկ է, մի հանգամանք, որ ուրիշ պայմաններում կարող էր ընկնել աւելի ցած, աւելի խոր, քան Եւրոպացի կինը։ Ամենից առաջ կրթութիւն, ապա լիակատար ազատութիւն։ Իմ կարծիքով հիմնաւոր կրթութիւն չստացած կնոջ կարելի չէ ազատ թողնել, այլապէս նրան չի դիմանայ ոչ մի սանձ, նա կը փշրի, իւր ճակատն էլ ջախջախելով անառականոցի պատերին։ Իհարկէ դեռ երկար ժամանակ պէտք է, մինչև որ տեղի ունենայ մի այսպիսի յեղաշրջում, քանզի հայ տղամարդը կնոջ վրայ չի նայում որպէս իւր ընկերոջ վրայ, այլ որպէս մի համեղ պատառի, մի ծաղկափնջի վրայ։ Եթէ դուք ունիք մի գեղեցիկ առարկայ, մի սիրուն ծաղիկ, բնականաբար դուք նրան ոտքի տակ չէք գցիլ ու չէք տրորի...

Ուզում եմ ասել՝ թէ որքան նեղ համոզումից է բղխում հայ-մարդու յարգանքը դէպի հայ-կինը։

Կանայք ու օրիորդները սենեակի պատերի ուղղութեամբ նստելով, իրենց մէջ տեղը բաց էին թողել մի դատարկ տարածութիւն պարողների համար։ Զուռնաչիները ծալապատակ

նոտել էին դրան մոտիկ մի անկիւնում և այտերն ուռեցնելով նուագում էին զանազան պար-երգեր։

Ինձ այդ սենեակն առաջնորդող երիտասարդի շնորհիւ մի ազատ անկիւնում աթոռ տուին նստելու։ Պէտք է ասել, որ հենց սկզբից պարերն ինձ չէին հետաքրքրում և ես չգիտեմ ինչու պարը համարում էի մի վայրենի սովորութիւն։ Բացի այդ ես այնքան կրիտիկական դրութեան մէջ էի, որ թւում էր ինձ թէ՝ փշի վրայ եմ նստած։ Երբէք այդքան կանացով շրջապատուած չէի եղել, ոչ էլ այդքան կանացի աչքեր միանգամից նայել էին ինձ։ Այդ նայուածքներն այնքան ծանր էին երևում, որ ես նրանց տակ ճնշւում էի։ Տեսնում էի, որ շատերը նրանցից իրար ականջի թեքուելով, ինչ-որ քըշփշում են. շատ կարելի է նրանց քըշփշոցի նիւթը բոլորովին ուրիշ բան էր, սակայն ես կարծում էի թէ նրանք խօսում են իմ մասին։

Պարողները հերթով փոխւում էին, որպէս և նուագածուները փոփոխում էին եղանակները։ Ի միջի այլոց պարեց նաև մի 15—16 տարեկան օրիորդ, որի հագուստից կարելի էր ենթադրել, որ X-եան օրիորդաց դպրոցի աշակերտուհի էր։ Երևում էր, որ նա շատ լաւ է պարում, որովհետև այդ ժամանակ բաղմութիւնը աւելի ոգևորուած էր ծափահարում և աւելի աղմակալից ցոյցեր անում նրա հասցէին։ Ըստ երևոյթին այդ խեղճ աղջիկն էլ ինձ նման անփորձ էր, որովհետև հանդիսականների ոգևորութիւնը կարմրացնում էր նրան։ Հագիւ թէ վերջացնելով պարը, երբ օրիորդն ուզում էր դուրս գալ հրապարակից, ընկերս կանչեց նրան։ Ես շատ լաւ նկատեցի, որ օրիորդը տհաճութեամբ եկաւ։

— Խնդրեմ ծանօթանաք, ասաց նա ինձ դառնալով. — քեռաղջիկս է՝ Եփիմէն, X-եան օրիորդաց դպրոցի ջանասէր աշակերտուհիներից մէկը։

Դրութիւնս աւելի կրիտիկական դարձաւ. հարիւրաւոր աչքեր մեր վրայ էին սևեռած։ Չգիտեմ նայողները նկատեցին, բայց ես զգում էի, որ մինչև ականջներս կարմրել եմ։ Մի տեսակ այրող քրտինքով ողողուեցի ես, գլուխս կարծես բոցերի մէջ տապակուելիս լինէր։ Այնուամենայնիւ ինքս ինձ տիրապետելով վեր ելայ և քաղաքավարութեան օրէնքը լուծած չլինելու համար, մեծ անվստահութեամբ բռնեցի նրա ձեռքը,..

Օհ, այդ ձեռքը, այդ բոպէն...

Խոստովանում եմ, որ դա կեանքիս ամենանշանաւոր բոպէներից մէկն էր, որ երբէք մոռանալ չեմ կարող։ Այդ առաջին անգամն էր, որ ես զգում էի մի օտար աղջկայ այնքան մօտաւորութիւնը, զգում էի նրա շնչի ջերմութիւնը, խօսում էի նրա հետ, բռնելով ձիւնի նման սպիտակ և այնքան շնորհալի ձեռքը։ Յիշում եմ, այս բոպէիս էլ յիշում եմ, որ երբ մեր ձեռքերը հպուեցին միմեանց, մի անսովոր, ինձ համար անհասկանալի սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս. աչքերս մշուշակալեցին, գլուխս կամացուկ դարձաւ և կուրծքս զարկեց ամենայն արագութեամբ։ Մի վայրկեան ինձ այնպէս թւաց թէ ձեռքիս մէջ է դանվում էլէքտրական տարրի գլանները և թէ նրա զօրեղ հոսանքն է, վազում երակներիս միջով։

— Ես ձեզ ճանաչում եմ, ասաց օրիորդը նոյնպէս չփոթուելով,—ձեզ մի քանի անգամ տեսել եմ մեր դպրոցում։

— Այո՛ մի քանի անգամ եղել եմ ձեր դպրոցում, պատասխանեցի ես կարելոյն չափ տիրապետելով ինձ։

— Իսկ դուք ինձ չէ՞ք ճանաչում, հարցրեց անփորձ աղջկայ միամտութեամբ։

— Տարաբաղդաբար, ոչ. ձեր դպրոցում այնքան շատ օրիորդներ կան, որ ամենքին յիշել ու ճանաչել շատ դժուար է։

— Իսկ մեր աշակերտուհիները բոլորն էլ ձեզ ճանաչում են, գիտեն ձեր անունը...

— Շատ կարելի է, օրիորդ, որովհետև շատերը միաժամանակ կարող են մէկին ճանաչել, իսկ այդ մէկը շատերին միանգամայն ճանաչել չի կարող։

— Դա շատ բնական է, մէջ մտաւ ընկերս՝ օրիորդի մօրեղբայրը և կատակով նկատեց—այ, օրինակ, այստեղ կանգնած

բոլոր երիտասարդներն էլ քեզ անպատճառ ճանաչում են, այն-
ինչ դու ոչ մէկին չես ճանաչում։

— Ինձ փոյթ չէ՝ թէ նրանք ճանաչում են... ես նրանցով
չեմ հետաքրքրւում, պատասխանեց օր. Եփիմէն և կրկին ձեռքս
սեղմելով, հեռացաւ մեզնից։

— Հ՞ը, ինչպէս է քեռաղջիկս, հարցրեց ընկերս ականջիս
թեքուելով։

Ես ոչինչ չպատասխանեցի և տեսնելով որ գլխիս պտոյտն
ու սրտիս թրրթրոցը չեն դադարում, դուրս ելայ կանանց բաժ-
նից։ Սակայն այդ էլ չօգնեց։ Թէ ինչպէս կատարուեց պսակի
խորհուրդը, ինչպէս վերջացաւ հարսանեաց հանդէսը և ինչպէս
տուն եկայ—այդ բոլորը կատարուեց մի տեսակ մթութեան մէջ,
աննկատելի։ Այդ օրից սկսած նոյնքան աննկատելի էին անց-
նում և օրերն ու շաբաթները։ Կարծես օրերը կիսով չափ կաղ-
ճացել էին։ Մեր տանը՝ ընտանիքով, իսկ խանութում յաճախորդ-
ներով շրջապատուած, այնուամենայնիւ միշտ ինքս ինձ միայ-
նակ էի զգում. ամեն ինչ տժգոյն, ամեն բան դատարկ ու ան-
խորհուրդ էին երևում։ Չը կար մի բան, որ զբաւէր ինձ, որ
զբաղեցնէր։ Ես այնպէս էի կարծում, թէ մէջս յայտնուած այդ
յեղաշրջումը միայն ես եմ զգում և ինձնից բացի ոչ ոք չի
տեսնում։ Բայց դուրս եկաւ, որ սխալւում եմ, որ կան աչքեր,
որոնք վաղուց արդէն թափանցել են իմ ներսը, իմ հոգեկան այդ
անբնական դրութեան մէջ։

— Ի՞նչ է պատահել քեզ, խո հիւանդ չե՞ս,—մի օր հարց-
րեց մայրս։

— Ո՛չ.., միտք էլ չունիմ հիւանդ լինելու, պատասխանեցի։
Մայրս շհաւատաց. ես տեսայ որ իւր սուր նայուածքով
ուզում է մինչև սրտիս խորքը թափանցել՝ ճշմարիտ պատասխան
գտնելու մտքով։

— Ոչինչ չեմ հասկանում, ասաց նա ուսերը վեր քաշե-
լով,—ուրեմն մի ուրիշ դաղտնիք կայ, որ թաղցնում ես մեզնից։

— Ոչ մի դաղտնիք չկայ և զարմացնում է ինձ այն, թէ
ոնտեղից ես անում այդ ենթադրութիւնները։

— Ո՞րտեղից... կանգնիր հայելու առջև և նայիր ինքդ
քեզ ու տես՝ ինչի նման ես... միշտ սեղմուած յօնքերով ու
շրթունքներով, միշտ լուռ ու մտախոհ... Որքան կուզես խաբիր,
այնուամենայնիւ դէմքդ ու վարմունքդ մատնում են քեզ...

Չնայելով, որ ես երկար-բարակ սկսեցի համոզել մօրս,
թէ ոչինչ չկայ, թէ դա անհիմն կասկածէ և այլն, այնուամե-
նայնիւ զգում էի, որ մայրս չի սխալւում, որ ինչ-որ փոփո-
խութիւն է տեղի ունեցել իմ մէջ, որ ինչ-որ մի անծանօթ դա-
տարկութիւն է յայտնուել սրտիս մէջ, որ այդ դատարկ սիրտը
ձգտում է ուր-որ, ինչ-որ մի բանի պահանջ է զգում, քաղց է
զգում։

Բայց ինչ...

Ես պատրաստ էի մօրս խոստովանելու, որպէս արել էի
մինչև այդ օրը, պատրաստ էի պատմելու նրան ամեն բան, թէ
և լինէր ծանր դաղտնիք։ Սակայն ինչ ասէի, ինչպէս պատաս-
խանէի նրա վերջին հարցին, մի հարց, որ ինձ համար դեռ նոր,
անծանօթ էր, որ դեռ ինքս էլ որոշ ոչինչ չգիտէի, ես ինձ չէի
կարող բացատրել։

Շատ ծիծաղելի, միևնոյն ժամանակ չափազանց անհեթեթ
բան կը լինէր ասել մօրս թէ՝—Եփիմէի դէմքը գիշեր ու ցերեկ
աչքիս առջևն է, երևակայութիւնս միշտ նրա շուրջն է թափա-
ռում, միտքս նրանով է զբաղուած և նրա ձեռքը, որ առաջին
ծանօթութեան դիշերը բռնեցի, միշտ ձեռքիս մէջ եմ զգում և թէ
ինձ ցնցում, տակնուվրայ է անում այն էլեքտրականութիւնը...

Անուշտ ընդմիջելով շատախօսութիւնս մայրս պիտի հարց-
նէր, թէ ով է այդ աղջիկը, այդ Եփիմէն, այդ ինչ էլեքտրա-
կանութիւն է, ինչ խենթ ու խելառ բան...։—Ա՛յ, այն Եփիմէն,
որի հետ ծանօթացայ մի օր հարսանիքում...

Մայրս լսելով վերջին բառը, հարցական կերպով մի բոպէ

պիտի նայէր վրաս, որպէս սովոր էր նայել և ապա կուշտ ու կուռ ծիծաղելով պիտի ասէր.

— «Ո՛ւրդի, դու դեռ երեխայ ես, դեռ բերանիցդ կաթի հոտ է գալիս։

Այո՛, եթէ Եփիմէի մասին խօսք բանայի, տեղի պիտի ունենար այս բոլորը, որ շատ ծիծաղելի էի գտնում աւելի այն պատճառով, որ գոնէ ես մասամբ համոզուած չէի, թէ այս բոլորը առաջ է եկել Եփիմէի հետ հանդիպումից. թէ նա է մտել սիրտս, խանգարել հոգեկան խաղաղութիւնս, վրդովել հանգիստս...

Այս այսպէս լինելուց յետոյ, մի բան ինձ շատ լաւ յայտնի էր, թէև մի անմեղ բան համարելով, ուշադրութիւն էլ չէի դարձնում։ Օրինակ, ես միշտ առիթ էի որոնում Եփիմէին հանդիպելու, նրան նայելու։ Գիտէի նոյնպէս, որ նրա մասին ինչ-որ ոտանաւորներ էի թխում, երբ ինքս ինձ զգում էի եօթներորդ երկնքում, Պառնասի գագաթին և թէ նրան հանդիպած ժամանակ կրծքիս մէջ զգում էի կծկում, շանթ, արտվում և ապա գլխի թեթև պտոյտ, որպիսի բաներ զգացել էի ծանօթանալուս առաջին րոպէներում։ Բայց դեռ չէր պատահել, որ ինքս ինձ հարց տուած լինէի, թէ ինչից են առաջ գալիս այս ամենը, որովհետև՝ ինչպէս վերն ասացի, սրանք ինձ երևում էին շատ բնական բաներ, սրանց մասին միտք յոգնեցնել անգամ չարժէր։

Հա՛, մոռացայ ասել, որ մի շատ տարօրինակ ցանկութիւն էլ էր յայտնուել իմ մէջ.—այդ Եփիմէի հետ մի քանի խօսք փոխանակելու անմեղ փափաքն էր։ Ամեն առաւօտ դեռ տանից դուրս չելած, հաստատ կերպով վճռում էի, որ հանդիպած ժամանակ, որև է պատրուակով խօսեմ հետը։ Իհարկէ նախ գտնում էի այդ պատրուակը, ապա գիտցածս բոլոր բառերը խախտում, ընտրում էի, հիւսում էի նրանցից փրաղներ, մտքիս մէջ կրկնութիւններ էի անում, սերտում էի մեծ ուշադրութեամբ։ Եւ այդ բոլորն անում էի այն նպատակով, որ եթէ վիճակուի ինձ-Եփիմէի հետ խօսել մի երկու բառ կամ առ առաւելն մի երկու խօսք, որպէս զի այդ բառերը կամ խօսքերը լինեն շատ զեղեցիկ, շատ քաղցր ու բուռն զգացմունքով լի. որոնք իրենց կարճութեամբ ու համառոտութեամբ հանդերձ կարողանային արտայայտել սրտիս բոլոր զգացմունքներն իրենց խորութեամբ ու լայնութեամբ։

Բայց՝ երբ տեսնում էի նրան դեռ հեռուից, ինձ տիրապետում էր սովորական ալեկոծութիւնը և դէպի Եփիմէն փոխած ամեն մի քայլիս հետ, մէկը միւսի ետևից ցնդում էին այնքան խնամքով ընտրած ու սերտած բառերը։ Ու զգում էի, որ անկարող եմ խօսել, որ՝ կարծես՝ խօսելու ընդունակութիւնից զուրկ եմ։

Ինչո՞ւ եմ այդպէս լինում—ահա՛, այս հարցի մասին ես յաճախ ժամերով մտածել եմ, բայց բուն պատճառը գտնել չեմ կարողացել։

Մի առաւօտ փողոց գնալիս ինձ ընկերացաւ Աւալեանը։ Ճիշտն ասած, այդ ընկերութիւնը ամենևին ցանկալի չէր ինձ։ Ես ամենևին չէի ուզում, որ որևէ մէկը գիտնայ. թէ ես Եփիմէի հետ ծանօթ եմ։ Այդ ծանօթութեան մէջ ոչ մի յանցանք չէի գտնում, բայց և այնպէս, ինձ համար անհասկանալի պատճառով, ուզում էի, որ ծածուկ մնար։ Ու վճռեցի, որ եթէ հանդիպէ Եփիմէն, անցնեմ, չտեսած ձևանալով։ Բայց կհաւատա՞ք, եթէ ասեմ, որ այդ չնչին վճիռս կատարելու չափ քաջութիւն չունեցայ։

Գուցէ դուք ծիծաղում էք վրաս և ինձ անուանում էք՝ ո՞վ գիտէ ի՞նչ ու ինչպէս. սակայն թողէք վերջացնեմ, ապա ի՞նչ անուն կուզէք տուէք։

Ահա՛ նա գալիս է ընկերուհու հետ զրոյց անելով, ժպտում է իրը թէ ընկերուհուն, բայց աչքի տակով նայում է ինձ։ Ես էլ գնում եմ. վճիռս կատարելու համար, մի հարց եմ մէջտեղ բերել ու Աւալեանի հետ տաք-տաք վեճում եմ։ Որքան մօտենում ենք, այնքան ես արագ եմ խօսում, բայց նոյնքան խօսքերս անկապ են դառնում։ Ու՝ հակառակ իմ կամքի, հակառակ զործադրած բոլոր ճիգերիս, անգիտակցաբար աչքերս դառնում են նրա

կողմը և ներսից մի բան ասում է «գլուխ իջնցուր»։ Եւ գլուխ աչքով բարևում եմ։

— Օհ՛ օ, ինչ սիրուն պատառ է, որտեղից ծանոթացար այս «բանկի բիլէտ»-ի հետ, հարցրեց նա չարաճճի տոնով և մի քանի անգամ յետ նայեց դէպի Եփիմէն։

— Մի հարսանիքում եմ ծանոթացել, պատասխանեցի ինքս ինձ դէմ դժգոհ եղանակով։

— Բաղդաւոր մարդ ես... սրա հետ ծանոթանալու համար ինչ ասես չէի տալ... բայց գիտես, սրան շուտ կտանեն, մեր քաղաքի նշանաւոր երիտասարդներից շատերը աչք ունեն վրան։

Այս խօսքերը լսելիս սրտիս վրայ մի սուր հարուած զգացի. այնուամենայնիւ. չմատնուելու մտքով նկատեցի.

— Է՛հ, ինձ ինչ որ կտանեն,.. աղջիկ չէ, երբևիցէ մէկին պիտի գնայ։

Այդ այդպէս է, բայց եկ անկեղծ խօսենք, ես ուրիշ բան եմ լսել։

—Ի՞նչ...

— Ասում են, որ դու նոյնպէս մտադիր ես ուզելու...

— Ե՞ս...

— Այո՛... այդ ես վաղուց էի լսել և այս օր դիպուածով ստուգեցի... շնորհաւորում եմ։

— Թող կատակներդ՝ ի սէր Աստուծոյ։

— Կատա՞կ... ասածս կատակ չէ, թէև ուզում ես թագցնել։

— Ես ոչինչ չեմ թագցնում և հաւատացնում եմ, որ իմ գլխով մի այդպիսի միտք երբէք չի անցել։

Վերջին խօսքը որ ասացի, անկեղծ խօսքս էր. սէր, ամուսնութիւն—սրանք ինձ անծանոթ բաներ էին. այս մասին ես երբէք չէի մտածել։ Եւ ինչպէս կարող էի մտածել, ինչ պատճառով։ Այն ուժը, որ ձգում էր ինձ դէպի Եփիմէն, այն անծանոթ զգացումը, որ ցնցում էր սիրտս ու հոգիս մինթէ սիրոյ հետեանք էր կամ սէր։

Թէկուզ շատ կապը կտրածների, ժամանակից առաջ կեանքի բոլոր չարն ու բարին ճաշակածների, հազար ու մի թոկից վախած ու բովից թռածների ծիծաղն էլ շարժելու լինեմ, այնուամենայնիւ այս էլ պիտի խոստովանեմ, որ մինչև այդ օրը մի այդպիսի սիրոյ մասին հատատ գաղափար չունէի։ Ա՛խ նեղողութիւն, միտքս սխալ գուրս եկաւ։ Ուզում էի ասել, որ գիտէի սիրոյ մեծութիւն ու բարձրութիւնը, գիտէի նրա սրբութիւնն ու վսեմութիւնը, թերևս աւելի լաւ և խորին կերպով, քան վերը յիշածս կապը կտրածները, որոնք ծիծաղում են խօսքերիս վրայ։ Գիտէի՝ թէ ինչպէս պէտք սիրել ազգ ու հայրենիքը, ծնող ու ազգականներին, ընկեր ու ծանօթներին... Չէ՞ որ ես արդէն սրանց սիրում էի։ Սիրում էի նոյնպէս մեր ձիւնի նման սպիտակ, բայց չար կատուին, որի մասին մայրս ասում էր, որ կանանց սեռից է... սիրում էի մեր խելօք ու հաւատարիմ շանը, որը մի օր սխալմամբ ոտքս խածած լինելու համար, մի քանի շաբաթ վշտից հիւանդ մնաց. սիրում էի նաև այն բոլոր ծառերը, որ իմ ձեռքովս էի տնկել... Այս բոլորից յետոյ գիտէի նոյնպէս, որ կայ նաև ամուսնական սէր, որ աղջիկներին էլ պէտք է սիրել... բայց թէ ինչպէս պէտք էր սիրել սրանց կամ միթէ իմ մէջ գոյութիւն ունեցող այն անծանոթ զգացումը, որի անունը դեռ ինձ անյայտ էր, սէ՞ր էր—այդ ես չգիտէի, թէև աշխարհը ծիծաղի վրաս։

Գ.

Մօրս և Աւալեանի տրած միանման նկատողութիւնները բերին ինձ այն համոզման, որ կեանքիս արտաքին երևոյթների մէջ կային այնպիսի նշաններ, այնպիսի փոփոխութիւններ, որոնք թէև ինձ զգալի չէին, բայց ուրիշների աչքին էին զարկում։ Ինձ ասում էին, թէ գունատուել, նիհարել եմ, թէ դարձել եմ մտամոլոր, թէ կարծես մի բան եմ կորցրել ու շարունակ որոնում եմ, թէ... և այլ հազար ու մի նկատողութիւններ։ Սրանցից և ոչ մէկն էլ չէի զգում, չէի նկա-

տում։ Բայց ինձնից ծածուկ չէր, որ մի տեսակ ծանրութիւն, լրջութիւն էր եկել վրաս, չէի սիրում շատ խնդալ, անշահ զրոյցները ինձ ձանձրացնում էին, խոյս էի տալիս հանդիպումներից և սիրում էի ինքս իմ մէջ կղզիանալ։ Դիտէի նոյնպէս, որ սրա պատճառը Եփիմէի սիրուն պատկերն էր իւր կախարդական ժպիտով և աղտա կերպով իրար չհասնող շրթունքով, որոնց մէջտեղից՝ շարուած մարգարիտների նման, երևում էին նրա ակռաները։ Եւ ամենևին փորձ չէի անում այդ քաղցրիկ պատկերը ինձնից վանելու, ընդհակառակը ուզում էի, որ նա գիշեր ու ցերեկ առաջս կանգնած լինի, ու միշտ զրաղեցնի սիրտս, միտքս ու հոգիս։

Բայց պէտք է ասեմ, որ այդ ինձ դրաւող չքնաղ պատկերն ամենևին չէր խանդարում։ Լինում էին բոլշևիկներ և այն՝ շատ յաճախ, որ նրանով զրաղուած, շուրջս այլևս ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէի լսում, բայց ձեռքերս գործում էին աւելի արագ և աւելի զգեցիկ և ինձ թւում էր թէ ուղեղիս վրայից բարձրացել է իրերը ծածկող սև քողը և գործում է աւելի աղտա ու համարձակ կերպով։

Այդ ժամանակ թէև ես դեռ աշակերտ էի, բայց արդէն թափանցել էի արհեստի գաղտնիքի մէջ և կատարելապէս տիրապետում էի նրան։ Իհարկէ ես չէի մոռացել մօրս քաջալերականոխսքերը, բայց այժմ ես այդ խոսքերն ուրիշ տեսակ էի հասկանում. նրանք արդէն տեղի էին տուել ինչ-որ մի բոլորովին տարբեր զաղափարի։ Օրինակ. ես սկսել էի հաւատալ ինչ-որ մի վերին, իմ մտքին անըմբռնելի ուժի, որ թէև է տալիս մարդուն, որ աշխատասիրի գլխի վերև կանգնած, օգնում, դիւրացնում է նրա ամենադժուարին գործերը, խորտակում է արգելքներն ու խոչնդոտները և դուրս է բերում փայլուն յաղթանակով։

Թէ ի՞նչ անուն պէտք էր տալ այդ մեծ, այդ աստուածային ուժին—ես չգիտէի, և միտք էլ չէի յոգնեցնում իմանալու. բաւական էր, որ նրա ներկայութիւնն զգում էի ինձ մօտ և նրան հաւատում էի խորին և անթերի հաւատքով։

Ճիշտ տեղն է և աւելորդ չեմ համարում առաջ բերել մի փաստ ապացուցանելու յիշածս անծանօթ ուժի մեծութիւնը, մանաւանդ որ նա շատ ու քիչ կապ ունի Եփիմէի հետ,

Մայիսի վերջերքումն էր։ X-եան օրիորդաց դպրոցի տեսուչը ընտանեկան ճաշ ունէր, ուր հրաւիրուած էի և ես։ Ի միջի այլոց խօսակցութեան նիւթը դարձաւ իդեական սեռի նպատակայարմար կրթութեան խնդրին, այսինքն որ դպրոցը շրաւականանար հասարակութեան կրթուած պաճուճապատանքներ միայն տալով, այլ տար լաւ մայրեր, խելացի, տնտես ու խնայող կիներ... Որքան յիշում եմ, խօսք եղաւ նաև մի դասարան ևս աւելացնելու մասին, որ տեսչի ամենամեծ փափակներից մէկն էր։

Հայր տեսուչը, որ բաւական լաւ տրամադրութեան տակ էր (ասենք վատ տրամադրութեան տակ նրան երբէք չէի տեսել), ընդհանուր խօսակցութիւնն ընդմիջելով, դարձաւ ինձ։

— Իսկ դուք այս տարի մի տարբեր բան պիտի նուիրէք դպրոցիս։

— Ի՞նչ բան, հայր, հարցրի։

— Ձեր ձեռքով փորագրած մի կնիք։

— Ամենայն ուրախութեամբ...

— Պայմանով, որ կնիքի մէջտեղում փորագրուած լինի X... կուսի պատկերը։

— Խոստանում եմ, եթէ X... կուսի պատկերը կարողանաք ձեռք բերել ինձ համար։

— Այդ հեշտ է, դպրոցս նրա մեծագիր պատկերն ունի և վաղն և եթ կուղարկեմ ձեզ։

Միւս օրը տեսչի ծառան ինձ մօտ բերեց խոստացած պատկերը, իսկ ես անմիջապէս սկսեցի հարկաւոր նիւթերը պատրաստել։

Սովորական կնիքներ ես շատ էի փորագրել և դրա մէջ

բաւական լաւ անուն էի վաստակել, միայն ինձ երբէք չէր պատահել մարդկային պատկեր, կերպարանք փորագրել։ Եւ չէր պատահել նրա համար, որ այդ արհեստը մեղանում, որպէս մի նահապետական յետնկած քաղաքում, ամենեին գոյութիւն չունէր և չկար մէկը, որ նրա փորագրութեան ձևի մասին շատ ու քիչ հասկացողութիւն ունենար։

Ես նոյնպէս չգիտէի, ես էլ հասկացողութիւն չունէի, թէև առանց դժուարութիւնը նախատեսելու յանձն առայ։

Ցիշեալ պատկերը, որ կէս քառակուսի մետրից աւելի մեծութիւն ունէր, մէկ և կէս քառակուսի հարիւրամիտր փոքրութեամբ մետաղի վրայ մեծ խնամքով ու ճշտութեամբ ընդօրինակելուց յետոյ, ձեռքս առայ գործիքները։ Բայց հաղիւ թէ սկսել էի, երբ դժուարութիւնը՝ իւր ամբողջ մեծութեամբ, որպէս մի ծաղրող, հեգնող ուրուական, կանգնեց առջևս։ Ես ոգում էի փորագրել աչք, ականջ, քիթ...—նրանք, հակառակ բոլոր ջանքերիս ոչ աչքի, ոչ քթի և ոչ ականջի էին նմանում։

Այդ ժամանակ միայն զգացի, որ ուժերիցս շատ վեր գործի եմ ձեռնարկել։ Բոպէական յուսահատութիւնը պաշարեց ինձ, ճակատս ողողուեց այրող քրտինքով և գործիքները սողալով ցած ընկան ձեռքիցս։ Արհեստակիցներիցս մի քանիսը և այն՝ անուն ունեցող ու փորձուած ծերունիները, որոնք հենց սկզբից իրենց զարմանքն էին յայտնել մի այդքան յանդուգն գործի ձեռնարկելուս մասին,—առաջին անյաջողութիւնս տեսնելով, սկսեցին զանազան ծաղրական կծու խօսքեր ուղղել հասցէիս։

Եթէ այդ կնիքը մի հասարակ յաճախորդի լինէր, ուրախութեամբ կվերադարձնէի տիրոջը, զրպանիցս խոշոր տուգանք ևս տալով։ Բայց դժբաղդաբար նա հասարակ յաճախորդի չէր, նա X-եան օրիորդաց դպրոցինն էր, այն դպրոցինը, ուր սովորում էր Եփիմէն։ Իմ սոյն անյաջողութեամբ ես նոյն իսկ տեսչից չէի ամաչում, ոչ էլ ամաչում էի ինձ ծաղրող վարպետներից—այլ ամաչում էի միմիայն Եփիմէից։ Ի՞նչ կասէր նա, երբ լսէր՝ թէ խոստացած կնիքը չեմ կարողացել փորագրել, ինչպէս

պիտի ցած ընկնէի նրա աչքում գրաւածս դիրքից, պիտի հաւասարուէի հողի հետ կամ ինչպէս նա այնուհետև այլևս արժան չպէտք է համարել երեսիս անգամ նայելու...

Ահա այս միտքն էր որ աւելի էր տանջում ինձ։

Բայց յոյսս բոլորովին չէի կորցրել. դեռ յամառութեամբ մտածում էի, թէ ինչ էլ որ լինի, գործը գլուխ պիտի հանեմ, միմիայն նրա—Եփիմէի առաջ պարզ երես դուրս գալու համար։

— Սպասեցէք, դեռ սա մի հասարակ փորձ է... անպատճառ պիտի փորագրեմ, հաստատուն շեշտով ասացի ծաղրող վարպետներին։

— «Թթու թան չի, ամեն մարդի բան չի», ասաց ինքը իւր վրայ մեծ համարում ունեցող վարպետներից մէկը։

— Մարդս ոտքը վերմակի չափ պիտի մեկնի, նկատեց երկրորդը, որ մի առանձին պարծանքով պնդում էր թէ նարէկը տասնու մէկ անգամ կարդացել է, տասներկուերրորդն էլ նոր է սկսել։

— Ուժից վեր ծանր բեռ վերցնողը, նոյն բեռան տակ կըմնայ, աւելացրեց երրորդը, որի մականունը Խիկար իմաստուն էր։

— Գորան էլ փորձեց եղանը հաւասարուել, բայց տեղնուտեղը պայթեց. վրաբերեց չորրորդը, որ պարծենում էր թէ Սաղմոսի անայբ, եօթը տունը ինքը անգիր գիտէ և ճիշտ որ գիտէր։

— Այդ բոլորը լաւ, հաղիւ խօսք առնելով, ասացի ես.— բայց իմացէք, որ այս պատկերը մարդու ձեռքով է շինուած և մենք՝ ես, դուք, միւսները պատճառ չունենք կարծելու, թէ մենք չենք կարող շինել...

— Այո, մարդու ձեռքով, բայց մեծ-գլուխ մարդու և ոչ քո նման մարդու և ոչ դպրոցի աշակերտի, հեգնութեամբ պատասխանեց առաջին վարպետը։

— Լաւ ուրեմն, մի քիչ սպասեցէք, շատ չէ՝ մինչև վաղը և ես ձեզ կապացուցանեմ, որ սխալուած էք և դրա համար էլ ուղտի պոչի նման ոչ երկարում, ոչ կարճանում էք։

Իմ այս խոսքի վրայ վարպետները մի լաւ ծիծաղեցին և էլի մի քանի սրախօսութիւններ անելուց յետոյ հեռացան։

Բայց իմ վերջին խօսքը լոկ խօսք չէր, ես այն ասացի խորին հաւատքով, աւելի մեծ հաւատքով, քան մանանեխի հատիկը, որի չափ հաւատք ունեցողը, ըստ Փրկչի, կարող է լեռները տեղից շարժել։

Այդ օրը ես ոչինչ չարի, բաւականացայ միայն միջոցների մասին մտածելով, իսկ գիշերը մի տեսակ վերաւոյց վիճակի մէջ էի։ Անկողնում պարկած, աչքերս խուփ՝ մարմինս հանգչում էր խաղաղ քնով, բայց ուղեղս, միտքս արթուն էր։ Նա գործում էր, անբնական եռանդով ու ուժով, գործում էր տենդային արագութեամբ, մէկը միւսի ետեւից փորձեր էր կատարում, մինչև որ հասաւ իւր նպատակին։ Երազում կնիքը շինել էի և որքան լաւ, որքան գեղեցիկ։ Ուրախութիւնից զարթնեցի և տեսայ, որ՝ իրաւ՝ այն ձեը որով շինել էի երազի մէջ, մի շատ գործնական ձև էր։ Էլ քունս չտարաւ. աքաղաղները իրար ետեւից երգում էին իրենց ծուղրուղուն, քիչ յետոյ լսեցի հեռուից անցնող կարաւանի զանգակների ու բոժոժների անդադարնակ աղմուկը, որ խանգարում էր գիշերային լռութիւնը։ Ապա արևելեան երկինքը կամաց կամաց կաթնագունեց. խաւարը սկսեց ասդիճանաբար խոյս տալ և ասդղերի լոյսը պակասել։ Աշնանայոյս էր։ Բնութիւնը զարթնած սպասում էր վաղորդեան արևի առաջին ճառագայթի կենսատու համբոյրին։ Հազարաւոր թռչնիկների զոհարանական մեղեդիի հետ երկրի վրայ սփռուեց և՛ արևի ոսկեգոյն լոյսը։ Վերջապէս ծագեց արևը, որին այնքան անհամբեր սպասում էի և ծագեց ինձ համար միայն։ Էլ չգիտեմ, թէ ինչպէս վեր ելայ, լուացուեցի ու հագուելով, վազուի արհեստանոց, միայն գիտեմ, որ մի երկու ժամ չանցած՝ արդէն պատրաստ էր։

Վարպետները, որ եկել էին իրենց սրախօսութիւնները կրկնելու, չէին հաւատում իրենց աչքերին։ Նրանք նայում էին ինձ, նայում միմեանց և ուսները վեր քաշում։

Այժմ համոզուեցիք, որ մարդու ձեռքով շինած գործից չպէտք է վախենալ՝ ասացի ես։

Նրանք խօսքիս չպատասխանեցին, այլ գլխիկոր հեռացան, կարծես դրանով մի մեծ դժբաղդութիւն էր պատահել իրենց։

Բայց կնիքի պատմութիւնը սրանով չվերջացաւ։

Դպրոցի վկայականների բաշխման հանդէսին,-որին ներկայ էին բացի աշակերտուհուների ծնողներից ու հոգաբարձութիւնից նաև քաղաքի ինտելիգէնտ դասից պատուաւոր հիւրեր,— տեսուչը իւր գործունէութեան համառոտ հաշիւը ներկայացրեց, կցելով նրան մի շարք նուիրատուների անունները։

Ապա յարեց.

— Այս բոլորից յետոյ, դպրոցս ստացել է և այս թանկագին նուէրը...

Ես շատ վիրաւորուեցի, երբ «թանկագին» բառից յետոյ, սեղանի վրայ դրեց յիշեալ կնիքը։ Ինձ այնպէս թւաց թէ թանկագին բառը նա ծաղրի համար արտասանեց։

Բայց՝ չնայելով ղէպի ձեռագործս ունեցած թերահաւատութեան, այնուամենայնիւ մի վայրկեանում ձեռքէ ձեռք անցաւ և մեծ հիացում առաջ բերեց։ Ու սկսուեց կարծիքների փոխանակութիւն. մէկը ասում էր թէ՝ Թիֆլիսից կրնի ստացուած, միւսը՝ թէ Մոսկուայից, երրորդը պնդում էր, որ Հայր տեսուչը անպատճառ բերել տուած կրնի արտասահմանից և այլ հազար ու մի ենթադրութիւններ, որոնք ինձ խիստ տարօրինակ էին թւում։

— Եւ ոչ մէկիդ մտքով չանցաւ, պարոններ, թէ կարող է այստեղի գործ լինել.— ինքնագոհ ժպիտով նկատեց տեսուչը։

— Այստեղի՞ գործ... կատակ էք անում,—համարեա միանգամից ասացին ամենքը։

— Այո, այստեղի և եթէ հաճելի է ձեզ, կը ներկայացնեմ սրա փորագրողին և նուիրողին։

Ես իսկոյն կփախչէի այնտեղից, եթէ հնար լինէր։

— Ո՞վ է, Հայր, խնդրենք, հետաքրքրուեցան նրանք, լսելով նաև ամբողջ հանդիսականների հետաքրքրութիւնը։

Տեսուչը մի քանի քայլ անելով, բունեց ձեռքիցս և հանդիսաւոր ձայնով ասաց։

— Ահա, փորագրողը, պարոններ, որին ձեզ ներկայացնելն ինձ պատիւ եմ համարում։

Հանդիսականների մէջ մի տեսակ խուլ իրարանցում ընկաւ, ամենքն էլ ուզում էին տեսնել ինձ և լաւ տեսնել, չնայելով նրանցից մեծ մասն ինձ ճանաչում էր։

Աւելորդ եմ համարում կանգ առնել այն ջերմ զգացումների վրայ, որ արտայայտուեցին հանդիսականները ձեռքս սեղմելով, երբ չգիտեմ սաստիկ ուրախութիւնից, թէ ամօթից, փոքրիկ աղջկայ նման մինչև ականջներս կարմրել էի։ Բայց լաւ յիշում եմ, որ երբ շռայլ գովասանքների ու քաջալերութիւնների տարափից գլուխս ազատած՝ վերադառնում էի տեղս, աչքս ընկաւ Եփիմէին։ Նրա անասելի բաւականութեամբ փայլող դէմքը կարծես պատկերացումն էր իմ ներքին բաւականութեան և արտայայտում էր նրա անսահման ուրախութիւնը։

Ընկերուհիների մէջտեղ կանգնած էր նա այնքան վեհ, այնքան հպարտ դիրքով, կարծես ինքը օրուայ հանդիսի թագուհին լինէր։

Եւ քաղցը, շատ քաղցը ժպիտը չրթունքին, նոյնքան քաղցը ու անոյշ նայուածքով նայում էր ինձ ու կարծես ասում էր... ես էլ ուրախ եմ ու գոհ, ես էլ շնորհաւորում եմ այսօրուայ յաղթանակդ...

— Սիրում է ինձ արդեօք...

Առաջին անգամն էր, որ այս հարցը տալիս էի ինձ։

Դ.

Թատրոնի մասին խօսքս ընդհատեցի վերը։ Այդ իհարկէ առանց պատճառի չէր։

X-եան օրիորդաց դպրոցի դահլիճը, որ ըստ հարկին բեմի էր վերածւում,—շատ փոքր էր։ Բացի այդ պակասում էին նաև յարմար դեկորացիաներ և այլ անհրաժեշտ պիտոյքներ, որոնք հարկաւոր էին շատ ու քիչ կանոնաւոր ներկայացումներ տալու համար։ Եւ որովհետև ժողովուրդն էլ սկսել էր համակրանքով վերաբերուել դէպի թատրոնը, այլևս նրան «հայերէն օյին բաղութիւն» անունը չէր տալիս, այստեղից ինքնըստինքեան պահանջ էր առաջ գալիս բեմը ընդարձակելու և դեկորացիաներ, զգեստներ և այլ կարասիք ունենալու։

Օգոստոս ամսի սկզբներում այս բոլոր պատրաստ լինելով, սիրողների մի նոր խումբ կազմակերպուեց, գլխաւորապէս ինտելիգէնտ և բեմական արուեստին ծանօթ երիտասարդներից։ Իհարկէ որպէս նախկին, նոյնպէս և այս խումբը յօգուտ դպրոցի և ի սէր հասարակական կրթութեան ներկայացումներ տալով, ոչ միայն որև է անձնական շահ չունէր, այլ և շատ դէպքում նիւթական զոհաբերութիւններ էլ էր անում, չհաշուելով ժամանակի կորուստը։

Այս խումբը նոյնպէս հրաւիրեց ինձ ներկայացումներին մասնակցելու. և որովհետև արդէն բաւական ծանօթ էի բեմի հետ և սիրում էի, ուստի խմբի առաջարկը ընդունեցի մեծ հաճութեամբ։

Բայց նորակազմ խումբը հենց իւր առաջին քայլում խոշոր արգելքի հանդիպեց։ Այն դերասանուհիները, որոնք առաջ այնքան սիրով մասնակցել էին ներկայացումներին, առաջին պատրաստական ժողովի օրը՝ կարծես խօսք մէկ արած, կարճ նամակներով հրաժարւում էին մասնակցել։ Իհարկէ այս հրաժարականներն առանց պատճառի չէին, թէև ինքնըստինքեան շատ յիմար պատճառ էր։ Սիրողների առաջին խմբի այն անդամները, որոնք վերջին խմբի կողմից հրաւիրուած չէին, իրենց վիրաւորուած զգալով, հենց այդ ձևով ուզեցել էին վրէժ լուծել։ Թէև յարգելի դերասանուհիները շատ լաւ էլ զգում էին, որ իրենք անդիտակցաբար խաղալիք են դարձել մի քանիսի

ձեռքում, սակայն եղածն արդէն եղած էր և մինչև վերջն էլ իրենց հրաժարականների վրայ պնդեցին։

Դրութիւնը շատ լուրջ ու կրիտիկական էր։ Մեր քաղաքում աւելի դիւրին էր հոյակապ թատրոն կառուցանելը, քան դերասանուհի գտնելը։ Մի ժողովուրդ, որ երկար դարեր դրացիութիւն է ունեցել մահմեդականների հետ և երկար դարեր էլ նրանց գերեվարութեան տակ է գտնուել, իւրացնելով նրանց հարեմական կեանքի սովորութիւնները—այդ ժողովրդի մէջ դերասանուհի գտնելը դժուարագոյնից դժուարագոյնն էր։ Եթէ մի կողմից հասարակութիւնը ծափահարում էր դերասանուհուն, երբ նա բեմի վրայ էր, բեմից ցած կեանքի մէջ նոյն հասարակութիւնը ամօթ էր համարում միևնոյն դերասանուհուն հանդիպել։ Սա արդէն գաղտնիք չէր սիրողների խմբին։ Բացի այդ եթէ գտնուէին իսկ մի երկուսը, որ համաձայնէին բեմ ելնել, դրանով դժուարութիւնը չէր հարթւում, որովհետև նրանք պէտք է, որ ձիրք էլ ունենային։ Այս բանի մէջ խումբը չափազանց խստապահանջ էր և նա աւելի լաւ էր համարում զգրոցը զրկել այդ կողմնակի օգուտից, քան պատահած անշնորհին բեմ դուրս բերելով, թատրոնը իւր բարձրութիւնից վայր գցել։

Այս դժուարին խնդիրը լուծելու համար խումբը տեսուչ հօր աջակցութիւնը խնդրեց։ Եւ չզղջաց։ Սա մի վերին աստիճանի եռանդոտ մարդ էր։ Քահանայ լինելով հանդերձ, ունէր զարմանալի ընտրողութիւն։ Նրա համար չկար ոչ արգելք, ոչ խոչնդոտ։ Անկարելին նրա բառարանում չկար, չկար և յուսահատութիւն բառը։ Թերևս դրա համար էլ անկարելին նրա համար միշտ կարելի էր դառնում։

Սա իհարկէ մենակ իմ կարծիքը չէ, այլ ամբողջ քաղաքի հասարակութեան։ Տեսուչը մի քիչ տատանուեց, բայց՝ վերջապէս՝ զիջաւ աջակցել։ Ու բանակցութեան մէջ մտաւ դպրոցի առաջադէմ աշակերտուհիների ծնողների հետ, հերքեց նրանց

ընդդիմախօսութիւնները, կշտամբեց, նախատեց և էլ չգիտես ինչ արեց, միայն յաջողեց կոտրել նրանց յամառութիւնը...

Եւ առաջադէմ ու հասակաւոր օրիորդներից աւելի քան ութ հոգի մեր տրամադրութեան տակ դրուեցան։

Տեսչի ուրախութեանը չափ չկար, նախ այն պատճառով, որ դպրոցը չպիտի զրկուէր իւր օգուտից և երկրորդ՝ որ յաջողել էր հարեմական յակումների արմատը դուրս հանել ծնողների գլխից։ Խումբն էլ ուրախ էր, որ հակառակորդների վրայ յաղթանակ տանելով, թարմ ոյժերով առաջ պիտի տանէր թատրոնի գործը։

Իսկ ե՞ս... Ես նոյնպէս ուրախ էի և իմ ուրախութիւնը չափ, սահման չունէր։ Ես ուղղակի թռն էի առել և թռում էր ինձ թէ այդ օրից սկսած հրաշքներ պիտի գործեմ բեմի վրայ։

Եւ գիտէք ինչու... Որովհետև Եփիմէն մեր խմբի մէջ էր։

Մենք սկսեցինք ներկայացումները մեծ յաջողութեամբ։ Հասարակութիւնն էլ կարծես ուզում էր յետ չմնալ, դահլիճը միշտ լիքն էր լինում ընտիր բազմութեամբ և դեռ շատերն էլ, անկարող լինելով տոմսակ ձեռք բերել, դժգոհութեամբ հեռանում էին։

Թատրոնը, ինչպէս մի անգամ էլ ասել եմ, խլում էր ինձանից շատ թանկագին ժամեր, խլում էր քունս, հանգստութիւնս, այնուամենայնիւ ես՝ գոհ էի։ Ոչ մի զրկանք, ոչ մի ծանր յոգնութիւն և զոհաբերութիւն չէր կարող գերակշռել այն քաղցր վարկեանների մեծ բաւականութեան, որ վայելում էի ես Եփիմէի ներկայութեամբ։ Զարունակ միմիանց հանդիպելով, միասին բեմ ելնելով այնքան սովորել էինք միմիանց, այնքան դրանք անհրաժեշտ պահանջ էին դարձել մեզ համար, որ ուրիշ կերպ ապրել կարող չէինք։ Մի կամ երկու օր եթէ չէի տեսնում նրան, դժուում էի, անհանգստութիւնը տանջում էր ինձ։ Այլևս ինձ համար գաղտնիք չէր, որ սիրում էի նրան, սիրում էի շատ սուրբ ու անկեղծ և միևնոյն ժամանակ շատ բուռն սիրով։

— Արդեօք նա էլ սիրո՞ւմ է ինձ...

Այս հարցն այժմ շատ յաճախ էի կրկնում. դրանից կախուած էր իմ ամբողջ երջանկութիւնը, կեանքը։ Ես ուզում էի, որ այդ սէրը փոխադարձ լինէր, որ մէկը լցնէր միւսին։ Բայց ինչպէս իմանայի։ Ես դեռ շատ անփորձ էի, փոքրիկ դէպքերից ու երևոյթներից խոշոր եզրակացութիւններ անելու անկարող, այնինչ Եփիմէն էլ մինչև այդ օրը դեռ մի այնպիսի առիթ չէր տուել։

Սակայն մի օր Եփիմէն մի միամիտ և ըստերևոյթին շատ անմեղ վարմունքով մատնեց իրեն։

Չգիտեմ երրորդ, թէ չորրորդ ներկայացման համար ընտրեցին Պետրոս Դուրեանի «Սև հողեր» ողբերգութիւնը։ Ռուսերգական պատերազմը դեռ նոր էր վերջացել, իսկ Բայազէտում կոտորուած անմեղ հայերի արիւնն ու հառաչանքը դեռ չէին ցնդել Մասիսի մթնոլորտից։ Սրանք յիշեցնում էին Լէնկ-Թէմուրի վայրենի արշաւանքը Հայաստանի վրայ և Սեբաստիայի կոտորածը։ Մարդուս միտքը թափառում էր դարերի անսահման տարածութեան մէջ, իսկ սիրտը յուզում էր, հոգին՝ խռովում։ Խումբը բարեհաճեց Վաղինակի դերն ինձ յանձնել, իսկ Նաղենիկինը՝ Եփիմէին։ Ի՞նչ գեղեցիկ ու խորհրդաւոր զուգադիպութիւն։ Արդեօք խումբը դիտմամբ էր այդպէս արել—ես չգիտէի։

Ուրեմն մենք պէտք ներկայացնէինք երկու դժբաղդ, հայրենասէր ամուսինների դերը։ Ես յափշտակուած էի Դուրեանի հանճարով, սիրում էի Վաղինակին, այն դժբաղդ զօրապետին, որ իւր սիրելի հայրենիքին զոհել էր աչքերը, կնոջ և զաւակի երեսը յաւիտեանս չտեսնելու դատապարտուելով։

Այդ օրերում հանգամանքներն այնպէս դասաւորուեցին, որ՝ հոկառակ իմ կամքի, անկարող եղայ կրկնութիւններին կանոնաւորապէս մասնակցելու։ Ներկայացումը նշանակուած լինելով առաջիկայ կիրակի երեկոյեան ժամը ինին, նոյն օրը առաւօտեան պէտք է տեղի ունենար ընդհանուր փորձ։ Սակայն ներկայացմանը մի քանի օր մնացած, անսպասելի կերպով հրաւէր ստացայ Գէորգ Դ. Կաթողիկոսից և հրաւէրը այնքան շտապողական ու կարևոր էր, որ կարելի չէր յետաձգել։ Գնացի Վաղարշապատ, խոստանալով նշանակուած օրը անպատճառ վերադառնալ։ Այդ ժամանակ խուլ անկիւններից քարեր էին գլորւում Կաթողիկոսի հասցէին, բայց Կաթողիկոսութիւնը ինձ համար այնքան սուրբ և վեհ նշանակութիւն ունէր, որ ուրախութեամբ կը կատարէի նրա հրամանը նոյն իսկ այն դէպքում, եթէ բամբասանքները ճիշտ ևս լինէին։

Նշանակուած օրը, կիրակի, ինչպէս խոստացել էի, վաղարշապատից վերադառնալով, շտապեցի թատրոն։ Վեհափառ Կաթողիկոսի հետ հաշիւներիս շահաւոր կարգադրութիւնը մի կողմից, բոլոր տոմսակների վաճառուած լինելը միւս կողմից, ինձ լաւ տրամադրութեան էին բերել։ Ասենք վաղուց էր, որ տրամադրութիւնս ոչինչով չէր խանգարւում և դրա գաղտնիքը ես որոնում էի Եփիմէի մէջ։ Այսպէս ուրախ ու զուարթ շտապեցի դէպի դահլիճը։ Բայց հազիւ թէ մտացել էի, երբ նրա դռները բացուեցին և շեմքի վրայ երևաց Եփիմէն անսովոր ժպիտով, ուր փայլում էր խորին կարօտը։

— Եկաք.—զանգակի նման հնչիւն և ուրախութիւնից թրթռացող ձայնով հարցրեց.—իհարկէ, կրկնութիւններին չէք գալ, ձեր գործերը կտեսնէք, Կաթողիկոսին հիւր կգնաք, կզուարճանաք, ապա կըգաք թատրոն ճիշտ ներկայացման ըսպէին, ձրի ծափահարութիւններ վոստակելու...

Ու մեկնեց ինձ իւր ձեռքը։

Ես սեղմեցի նրա ձեռքը մի առանձին խանդով և որպէս պատասխան իւր այնքան նկատողութիւնների, ասացի։

— Եթէ յաջողի ինձ ծափահարութիւն ստանալ, իմացէք, որ այդ բանում ձեզ եմ պարտական, օրիորդ։

— Մթթէ... բայց թողնենք այդ՝ ձեր դերը սովորել էք, հարցրեց Եփիմէն լրջութեամբ։

— Ցուսամ թէ յուշարարի պէտք չպիտի ունենամ։

— Այդ լաւ է, ճիշտն ասած, չէի սպասում, այդ պատճառով էլ ես ձեր դերն էլ գոց եմ արել, որպէս զի...

— Որպէս զի եթէ կանգ առնելու լինեմ, վրայ գցէք ու

ինձ ամօթով չթողնէք... Հասկանում եմ, յարգելի օրիորդ և շնորհակալ եմ ձեր մանաւոր հոգացողութեան համար։

Ու երկու ձեռքով բռնեցի նրա ձեռքը, այն ձեռքը, որ միշտ էլէկտրականացնում էր ինձ, որտեղից անցնում էր երակներիս մէջ այն քաղցր, այն հեշտալի սարսուռը, որ այնպէս յափշտակում, հմայում էր ինձ։

Ներկայացմանը վերաբերող մի քանի կարևոր խնդիրների մասին ևս խօսելուց յետոյ, ներողութիւն խնդրեցի և մտայ հանդերձատունը։ Այստեղ Յովհաննէսը մենակ սպասում էր ինձ։ Դա հասակակից ընկերներիցս մէկն էր և միակ անձը որից ոչ մի բան չէի թագցնում, որպէս և ինքն ինձնից։

Նա շտապով ձեռքս բռնեց և առանց բաց թողնելու ու սովորական յառաջաբանի ասաց։

— Մի բան պէտք է հարցնեմ։

— Երկուսը հարցրու, արամադրութիւնս այնքան լաւ է, որ անտրտունջ կպատասխանեմ։

— Ես էլ հենց այդ լաւ արամադրութիւնիցդ ուզում եմ օգտուել, այլապէս գուցէ սպասէի։

— Շատ լաւ ժամանակ ես ընտրել, Իվան, հարցրու։

— Գիտեմ, որ Եփիմէն սիրում է քեզ։

Այդ հարցին ամենևին չէի սպասում. ես շփոթուեցի և զգացի, որ կարմրում եմ։ Ինձ պատմում էին սրտիս գաղտնիքը, մէկը այն նուիրական գաղտնիքներից, որի մասին դեռ ոչ ոքի չէի պատմել։ Մի րոպէ ես շուարած մտածում էի թէ՝ Իվանը իրաւունք ունէր հարցնելու կամ այն մասին թէ՝ նա լաւ էր վարւում թէ վատ, հաճելի՞ էր ինձ այդ մասին լսել որիշից, թէ՞ ոչ։ Մէկ թւում էր ինձ թէ նա երեսովս է խփում մի ծանր յանցանք, մէկ էլ թւում էր թէ՝ ինչ-որ հաճելի ու դիւթական բան է ասում. Վերջապէս ինքս ինձ տիրապետելով ասացի։

— Ես այդ չգիտեմ, Յովհաննէս։

Նա սեղմեց յօնքերը, ակնակապիճները հուպ տուեց մի բարակ գիծ միայն բաց թողնելով, կարծես տեսողութիւնը լարելու

և կենդրոնացնելու մտքով և այդպէս նայեց երեսիս մի քանի րոպէ։ Ապա հարցրեց.

— Դու չե՞ս թագցնում։

— Ոչ՛...

Նա վերստացաւ իւր նախկին կերպարանքը, ուսերը թեթև կերպով վեր քաշեց ու ինքն իրեն ասաց.

— Ոչինչ չեմ հասկանում։

Յետոյ դարձաւ ինձ։

— Գիտե՞ս, լուռ սիրահարութեան այդ կրիտիկական և միևնոյն ժամանակ խորհրդաւոր շրջանը ես անցրել եմ։ Եթէ գօղոնը գրպանում ունեցող մէկին յանկարծ հարցնես «դու գողացել ես» այնքան խնամքով չի թագցնի իւր գողութիւնը, որքան եթէ մեկին ասես «Դու սիրում ես» կամ «Քեզ սիրում են»։ Այս փորձի վրայ հիմնելով, ես կասկածում եմ, թէ անկեղծ ես խօսում հետս։

— Եւ սխալւում ես, Իվան, հաւատա, սխալւում ես։

— Ուրեմն դու ոչինչ չե՞ս տեսնում, ոչինչ չե՞ս հասկանում, երեխա՛յ ես։

— Ի՞նչպէս...

— Ուրեմն չնկատեցիր թէ ինչպէս ձայնդ լսելուն պէս դէմքերը բաց արեց առջևդ, ինչպէս դիմաւորեց, յուզումից ինչպէս դողում էր նրա ձայնը...

Յովհաննէսը իսկապէս սխալւում էր, ընդհակառակը ես էլ նկատել էի այդ բոլորը, ես էլ տեսնում էի, որ ձեռքս սովորականից ամուր էր սեղմում, որ ձայնի մէջ հնչում էր քաղցր կարօտի նման մի բան... Սակայն ես չէի համարձակւում եզրակացնելու, թէ դրանք հետևանք են նոյնպիսի բուռն սիրոյ, որքան սիրում էի ես նրան։

Ու առանց տատանուելու նկատեցի։

— Դատարկ ենթադրութիւններ են արածդ, Իվան։

Նա հեգնական կերպով ժպտաց ու ասաց։

— Անհոգ կաց. ես դատարկ ենթադրութիւն անողներից

չեմ. վաղուց լրտեսում եմ նրան. օրինակ քո բացակայութեան ժամանակ նա դժուածի պէս էր և միշտ կրկնում էր «Ախար չեկաւ» կամ հարցնում էր «Իսկ եթէ չգայ, ուշանայ որ և է պատճառով»... Ես շատ լաւ տեսնում էի, որ այդ բոպէին այնքան չի հետաքրքրում նրան թատրոնը, որքան քո անձնաւորութիւնը: Գիտես այդ հասակի աղջիկների սէրը խենթութիւնից ոչինչով տարբեր չէ: Շատ զօրաւոր փաստեր ունէի՝ որ նա խենթի նման սիրում է քեզ, իսկ այսօր այլևս տարակոյս չմնաց:

Ես լուռ էի, լսում էի նրան և այնքան հաճելի էին ինձ նրա խօսքերը, որ ուզում էի, որ միշտ խօսի:

Յովհաննէսը բոպէական լռութիւնից յետոյ, աւելի մեղմ ձայնով աւելացրեց:

— Սա միայն իմ կարծիք չի, այլ ամբողջ խմբի:

— Ամբողջ խմբի... ասել է թէ ես այլևս այստեղ ոտք չդնեմ:

— Հա՜, գիտեմ ինչ ես ուզում ասել. բայց անհոգ կաց, խումբը ոչ միայն շատ բանական է համարում, այլև ուրախ է: Բացի այդ, ի՞նչ յանցանք կայ այդ բանի մէջ, ի՞նչ կապ կայ ձեր սիրոյ և թատրոնի մէջ:

— Այն, որ օրիորդների ծնողները դժուարութեամբ թոյլ կտան աղջիկներին մասնակցելու և մի գիտէ ինչ բամբասանքների նիւթ դարձնեն:

— Թողնենք այդ, այժմ ինձ ասա, դու էլ սիրո՞ւմ ես Եփիմէին:

— Ահա, այդ հարցին կարող եմ դրական պատասխան տալ, այո՛, ես սիրում եմ և վաղուց է, որ սիրում եմ, միայն մինչև այս վարկեանս էլ չգիտեմ, թէ նա էլ սիրում է ինձ: Թովմաս առաքեալի ընաւորութիւնն ունեմ. իրաւ լսում եմ քեզ, հաւատում եմ, որ ինձ չես խաբի, բայց կուզէի ինքս ստուգել, կուզէի մատս վէրքի վրայ դնել...

— Կուզէիր, որ Եփիմէն ինքը քեզ ասեր «Սիրում եմ քեզ» աւելացրեց Յովհաննէսը ժպտելով:

— Այո՛, բայց այս էլ պէտք է խոստովանեմ, որ եթէ այդ երեք բառը լսեմ նրա շրթունքից, չգիտեմ, թէ ինչ կարող է պատահել ինձ հետ:

— Կարող է պատահել, որ խենթանաս:

— Այո՛...

Յովհաննէսը մի պինդ ծիծաղեց, այնպէս որ մեր խմբից մի քանիսը, որ դուրսը կանգնած զրոյց էին անում, ներս մտան:

Կարճ հարց ու բարևեց յետոյ, մի պատրուակով հեռացայ նրանցից: Արդ բոպէին ես ուզում էի միայնութիւն, առանձնութիւն: Այն բանը, որ սիրոյս գաղտնիքը յայտնել էի մէկին, որ նա այլևս բացառապէս իմ գաղտնիքը չէր—տարօրինակ ներգործութիւն էր արել վրաս: Ինձ այնպէս էր թւում, թէ մի ծանր բեռնից թեթևացել եմ, թէ այդ բոպէից սիրոյս հարցը լուծուած, վերջացած է: Սրա վրայ աւելացրէք և այն, որ առաջին անգամը լինելով, մի օտար մարդ, Յովհաննէսը վկայում ու հաստատում էր, թէ Եփիմէն էլ սիրում է ինձ: Բայց իսկապէս սիրո՞ւմ է: Ես դեռ կասկածում էի և պիտի միշտ կասկածէի, եթէ հենց նոյն գիշերը մի աւելի զօրաւոր ապացոյց չտար օրիորդը:

Ներկայացումը վերջացաւ կէս գիշերից անց: Վերջին վարագոյրը դեռ գետին չէր հասել, երբ հանդիսականները շտապեցին դուրս խուժել: Մի բոպէից յետոյ դահլիճն արդէն դատարկ էր: Սիրողներից շատերը նոյնպէս դուրս էին եկել: Վերջին տեսարանում դեր ունենալով, ես մի քիչ ուշ ելայ և տեսայ, որ Եփիմէն պատշգամբում կանգնած է, որին շրջապատել էին սիրողներից մի քանիսը: Յովհաննէսը չկար, բայց նրա խօսքը յիշելով, թէ խումբը իմ և Եփիմէի մասին խօսում է, կրկին յետ դարձայ և կանգնեցի լուսամուտի առաջև: Սենեակը մութն էր, ինձ ոչոք չէր տեսնում, բայց ես տեսնում էի նրանց: Եփիմէն շուարած նայում էր շուրջը: Գիշերուայ այդ ուշ պահուն չկար աղգականներից մէկը, որ տուն առաջնորդէր նրան, որպէս անում էին միշտ: Բայց աղգականների տեղ լոյս էին ընկել շատ

անկոչ կաւալերներ, որոնց մէջ աչքի էր ընկնում տեսչի երկրորդ որդին։ Այդ ամենը ես տեսնում էի, բայց անհամբեր սպասում էի թէ ինչով կվերջանայ այդ ինձ համար անախորժ դէպքը։ Եփիմէին շրջապատող կաւալերներին ես նմանեցնում էի որսին շրջապատող քաղցած գայլերի, որոնք մէկը միւսից վախենալով, չեն մօտենում և այսպիսով որսը ազատ մնում վտանգից։ Իմ արածը մի անբնական համեմատութիւն չէր։ Դեանքի մէջ շատ դիպուածներում դուք կարող էք հանդիպել երկոտանի գայլերի, որոնք մարդկութեան աւելի վնասակար են և աւելի մեծ չարիքներ են հասցնում, քան իսկական գայլերը, գազանները։ Սակայն մարդիկ հազար ու մի զէնքերով ու միջոցներով զինուած կոտորում, ոչնչացնում են վայրի գազաններին ճիշտ այն ժամանակ, երբ ընտանի գազանները, ազատ համարձակ, գործում են աւելի մեծ, աւելի քսամնելի չարիքներ։

Օրիորդի դրութիւնը իսկապէս կրիտիքական էր. նա գնում էր դուրս, նայում էր մութ փողոցի հեռաւոր անկիւնները և կրկին դառնում էր պատշգամբը ու անհամբեր սպասում։ Երբեմն էլ անկոչ կաւալերների առաջարկութիւններին պատասխանելով, ասում էր։

— Շնորհակալ եմ, պարոններ. նեղութիւն մի՛ կրէք, հիմայ՝ ուր որ է, կըգայ։

Ես թողեցի լուսամուտը և դուրս ելայ նրան այդ կրիտիքական դրութիւնից ազատելու հաստատ որոշմամբ. Ես հաստատ գիտէի, որ նրանք, այդ անկոչ կաւալերները իսկոյն կհեռանային, եթէ ես աչքի երևայի։ Սակայն իսկոյն որոշումս փոխեցի։ Մրքովս անցաւ, թէ մի գուցէ Եփիմէն ինձ էլ մերժի ու կարմրացնի նրանց առաջ։

Ու դրան առաջն մնացի կանգնած։

Այդ ժամանակ նա ոտքիս ձայնն առնելով, յետ դարձաւ և տեսնելով ինձ, ճեղքեց կաւալերների շղթան ու մօտեցաւ։

— Տեսա՞ք ինչ արեց մօրեղբայրս, ասաց նա վրդովուած ձայնով.—ինձ այստեղ մենակ թողեց ու գնաց չգիտեմ թէ ուր։

— Վաղուց է գնացել։

— Վերջին արարուածից քիչ առաջ... խոստացաւ իսկոյն վերադառնալ, բայց չկայ... չգիտեմ ի՞նչ անեմ...

— Լաւ չի արել... եթէ կուզէք... բայց ներեցէք, օրիորդ, վախենում եմ ծառայութիւնս առաջարկել ձեզ, որովհետև շատերն առաջարկեցին և դուք մերժեցիք. ուրեմն ի՞նչ էք մտածում անել։

— Բնականաբար այստեղ մնալու միտք չունիմ... պէտքէ տուն գնալ։

— Եթէ թոյլ կտաք ես կընկերանամ ձեզ մինչև ձեր տունը... իմ ճանապարհն էլ, ինչպէս գիտէք այն կողմն է, ասացի անվճռական կերպով։

— Օ՜հ, շատ շնորհակալ կլինեմ... ազատեցէք ինձ այս անախորժ դրութիւնից։

«Շատ շնորհակալ» բառը լսելիս յանկարծական ջերմութիւն եկաւ վրաս, ինձ այնպէս թւաց, թէ այդ բառերից անմիջապէս յետոյ պիտի աւելացնի «նեղութիւն մի կրէք» խօսքը։ Բայց որքա՞ն ուրախացայ, երբ այդպէս չպատահեց։ Պատրաստ էի համբուրել նրա ձեռքը ի նշան իմ անսահման շնորհակալութեան, եթէ այդ հնարաւոր լինէր կամ այդ քայլն անելու չափ համարձակութիւն ունենայի։

Անկոչ կաւալերներին թողնելով իրար երեսի նայելով, մենք ցած իջանք և կառք նստելով, ճանապարհուեցինք դէպի տուն։

Ե,

Գիշեր էր։

Այդպիսի մի գեղեցիկ գիշեր, այդքան աքանչելի ու կախարդական գիշեր շատ քիչ է պատահում աշնանային այդ ամիսներում։ Երկինքը պարզ էր ու վճիտ, որպէս թափանցիկ հայելի, ուր չէր երևում ոչ մի ամպի փետուր։ Բիւրաւոր աստղերը՝ յստակ

ու ճաճանչաւոր ադամանդների նման սփռուած կապուտակ կամարի վրայ, փայլում, պէծպծին էին տալիս, իսկ բոլորադէմ լուսինը, որպէս մի կախարդական լապտեր, որպէս երկնային դիցուհի, լողում էր անհամար աստղերի միջով իւր ամբողջ փառահեղութեամբ։ Քաքաքը կախարդական տեսք էր ստացել, եկեղեցիների գմբէթները, իրենց ոսկեզօծ խաչերով, մզկիթների մինարէթները. շինութեանց տանիքներն ու ծխնելոյզները և ծառերի երկնահաս սաղարթները՝ լուսնի կաթնագոյն լուսով լուսաւորուած, նմանում էին էլէքտրական հսկայ աշտանակների, որոնցով ցերեկի նման լուսաւորուած էր ամբողջ քաղաքը։

Բայց քաղաքը խոր քնի մէջ էր։ Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսւում։ Ամեն ինչ անշարժ էր ու լուռ։ Իսկ այդ անշարժութիւնը, այդ լռութիւնը այնքան խորհրդաւոր էր, որ թւում էր ինձ, թէ գտնւում եմ մի բոլորովին անծանօթ աշխարհում, թէ դա տիեզերքի ստեղծագործութեան առաջին օրն է, երբ կեանքն աղմկող մարդը դեռ չի ստեղծուած։ Եւ տիրում էր ինձ մի տեսակ սրբազան երկիւղ։ Ահագին շինութիւնները՝ որոնց միջով խուլ դղրդիւնով թաւալում էր կառքը, վիթխարի շիրիմների էին նմանում, որոնց տակ ժամանակաւոր մահով հանգչում էին բնակիչները։ Ոչ մի լուսամուտից լոյս չէր երևում, իսկ փողոցային լապտերները վառւում էին հոգևարքի պլպլոցով։ Ճների ընդհատուող հաջոցն էր միայն, որ երբեմն լսւում էր քաղաքի այս կամ այն հեռաւոր անկիւնից, որոնցով մերթ ընդ մերթ վրդովւում էր այդ գերեզմանական հանդիսաւոր ու խորհրդաւոր լռութիւնը։

Չգիտեմ, ինչ էր մտածում այդ բոպէին կառքի մէջ, կողքիս նստած աղջիկը՝ Եփիմէն, ինչ էր անցնում դառնում նրա սրտի մէջ, իսկ ինչ վերաբերում է ինձ, ես գտնւում էի մի անբնական վիճակի մէջ։ Աշխարհային ոչ մի վայելք, երկրային ոչ մի երջանկութիւն կարող չէին հաւասարել այն վայելքին, այն երջանկութեանը, որ զգում էի այդ գիշերային լուռ ու մենաւոր բոպէին։ Նա կողքիս էր, որին այնքան սիրում էի և որն այդ օրն ապացուցեց, որ սէրս անյոյս չէ, որ նա փոխադարձ է։ Ի՞նչ

կայ աւելի հաճոյական և հպարտացուցիչ քան այն, որ համոզուած ես թէ քեզ սիրում է նա, որին դու սիրում ես։ Եւ այդ երանական քաղցր յափշտակութիւնը այնպէս էր գրաւել ինձ, որ ես վախենում էի նոյն իսկ նրա հետ խօսել, որ չլինի թէ յուսախափութեան մէջ սթափուեմ։

Եփիմէն էլ լուռ էր, գլուխը քարշ, աչքերը շրջազգեստի տակից դուրս նայող փոքրիկ ոտքերի ծայրերին յառած, մտածում էր չը գիտես ինչ ինչ բաների մասին և պատասխանում էր կարճ և միավանկ բառերով։

Թատրոնից մինչև տուն մօտ տասն բոպէ տևեց։ Կառքից իջնելով մտանք բակը, այդ ժամանակ միայն իմացայ, որ տանը նոյնպէս ոչոք չկայ։ Եփիմէն ասաց, որ իրենց ամբողջ ընտանիքը, այգեկութի պատճառով արդէն գտնւում է այգիում, թէ ինքը մօր եղբօր հետ մնացել է քաղաքում դպրոցի և թատրոնի պատճառով։

Իսկ մօր եղբայրը չկար, նա տուն էլ չէր վերադարձել, թէև օրիորդը յոյս ունէր նրան տանը գտնել։

— Ուրեմն ինչ պէտք անէք, օրիորդ, երկար լռութիւնը ընդհատելով հարցրի ես։

— Չը գիտեմ... այս ահագին տան մէջ մենակ մնալ և այն գիշերով չեմ կարող, պատասխանեց շուարած։

— Գնանք մեզ մօտ, ես կպատմեմ մօրս, նա քեզ սիրով կընդունի ասացի ես կատակով։

Նա նայեց ինձ, ժպտաց, բայց տեսայ, որ այդ ժպիտը բռնաղբօսիկ էր։

Ապա ասաց։

— Ես երբէք մենակ չեմ մնացել, սովոր չեմ և չեմ էլ կարող մնալ։

— Այդ ես գիտեմ, օրիորդ և չկարծէք թէ ձեզ մենակ կթողնեմ... բայց գիտէք ինչ անհամ դրութիւն է, որքան անպատշաճ է ինձ այստեղ մնալ։

Օրիորդը չխօսեց, այլ դուռը բանալով վառեց լամպան։

Լամպայի լոյսի տակ ես նկատեցի, որ նա բաւական յուզուած էր, շրթունքը բարկութիւնից ցնցւում էին և քիչ էր մնում, որ լար։ Եփիմէն չափահաս աղջիկ լինելով և լաւ գիտնալով քաղաքացոց բամբասանքը բնաւորութիւնը, հասկանում էր, որ՝ իրաւ՝ մի երիտասարդ տղայի, երիտասարդ աղջկայ հետ գիշերելը միայնակ, միծածկի տակ, առանց օտար կոնտրոլի—որքան անպատշաճ էր և մի շատ իրաւացի նիւթ բամբասանքի։

Ես այդ բոլորը շատ լաւ հասկանում էի, ուստի նրա տրամադրութիւնը փոխելու մտքով նկատեցի։

— Այո, շատ անպատշաճ է... բայց մխիթարականը այն է, որ գիշեր լինելով, մեզ ոչոք չհանդիպեց և ոչ ոք կարող չէ իմանալ իմ այստեղ լինելս։

— Հապա խմբի մի քանի անդամները, որոնք տեսան։

— Այդ ոչինչ. նրանք գիտեն, որ ձեզ տուն բերի, սակայն ինչ գիտեն թէ ինձ վիճակուեց այստեղ մնալ։

Օրիորդի տխրութիւնը մասամբ փարատուեց. ես տեսայ, որ իմ խօսքերը աննպատակ չանցան։ Նա մանելով միւս սենեակը, հանեց վերարկուն, գլխարկը և վերադառնալով ասաց։

— Այդ ամենը լաւ, բայց որ դուք անհանգիստ պիտի լինէք, իսկ վաղն էլ գործի օր է...

— Ա՛խ, այդ մասին մտածել անդամ չարժէ... ես պատրաստ եմ շատ աւելի թանկագին բաներ զոհելու, որպէս զի կարողանամ արտայայտել դէպի ձեզ ունեցածս ջերմ... յարգանքը։

Քիչ մնաց, որ «սէրս» պիտի ասէի։ Թէև խոկոյն ուղղեցի խօսքս, սակայն Եփիմէն կարծես զուշակել էր, որովհետ՝ սաստիկ շառագունեց։

— Շատ շնորհակալ եմ... ապացոյցներ պէտք չէն, ես գիտեմ և ձեր անկեղծութեան վրայ վստահ։

Ու ձեռքը մեկնեց ինձ։

Մի րոպէ, այդ գիշերային հանդիսաւոր պահուն, հեռու գիտող աչքերից, տան չորս պատերի մէջ մէն մենակ-այո՛ մի րոպէ անցաւ մաքովս շրթունքիս սեղմել այդ քնքոյշ ձեռքը և

կնքել այնտեղ անջնջելի սիրոյ ջերմ համբոյրը և՝ ծունգ չոգելով՝ որպէս խոստովանահօր առաջ բանալ սիրտս, արձակել լեզուիս կապանքը և ասել, թէ սիրում եմ, պաշտում եմ... բայց ներքին ձայնը գոչեց.

«Մի՛... չհամարձակուես. դա լրբութիւն է, դաւաճանութիւն է...

Այդ ձայնը, այդ ներքին ձայնը, ա՜խ, որքան խանգարում է նա ինձ, որքան տանջում է։ Բայց չեմ կարողանում չլսել նրան, որպէս լսեցի և այս անգամ։

Խեղդելով իմ մէջ նրա ձեռքը համբուրելու բուռն ցանկութիւնը, որը սկսել էր յուզել ինձ, բարձրացրի գլուխս և նայեցի նրան։

Տխրութիւնը փարատուել էր նրա դէմքից ու ժպտում էր։ Նա արդէն հաշտուել էր հանգամանքների հետ, դուրս էր վանել սրտից ու գլխից թիւր կասկածներն ու երկիւղը, կարծես ասում էր „է՛հ ինչ ուզում է թող լինի...

— Ուրեմն վիճակուած է մեզ գիշերը միասին անցնելու, ասաց նա ձեռքս թողնելով.—ոչ ես սարքեցի այս բանը, ոչ էլ դուք. սա հանգամանքների քմահաճ բերմունքն է, որից ես գոնէ խոյս տալ չեմ կարող։

Եւ կանխելով ինձ, հարցրեց։

— Ժամը քանիսն է։

— Ճիշտ երեքը, պատասխանեցի ժամացոյցին նայելով։

—Հպիտի՞ ընէք։

— Ո՛չ... ես ձեր վրայ կը հսկեմ։

— Շնորհակալ եմ, սակայն քնելու միտք չունեմ։

— Այդ աւելի լաւ, օրիորդ, կը նստենք և քաղցը զրոյցներով ու պատմութիւններով կը լուսացնենք...

— Եւ որպէս զի ժամանակը թեթև անցնի, սամովարը կը դնեմ և պարտեզի միջով անցնող առուակի ափին թէյ կը խմենք։

— Արէք ինչպէս կամիք, այս գիշեր ձեր հիւրն եմ և ձեր տրամադրութեան տակ։

— Թանկագին հիւրը... ասաց նա ու գնաց սամովարը գցելու։

Պարտէզը, ուր քիչ յետոյ ինքնք մենք, շրջապատուած էր երկու մարդու հասակի բարձրութեամբ ամուր պարիսպներով, որպէս սովորութիւն էր այդ քաղաքում։ Մէկը միւսից մի քանի քայլ հեռու տնկած պտղատու ծառերը նախ՝ բարձրանալով վեր, ապա՝ իրենց վերին ճիւղերը տարածելով չորս կողմը, հիւսել էին միմիանց հետ և կազմել մի բնական ամպհովանի։ Լուսնի թեք ճառագայթները տերևախիտ ճիւղերի միջից թափանցելով ներս, մի տեսակ թրթռուն ու կախարդական լոյս էին սփռում այնտեղ։ Սամովարը մի քիչ թշթշալուց յետոյ, սկսեց նուագել մուզիկայական քմահաճ եղանակներ և ապա բարձրացաւ խիտ գոլորշի, որ մերթ լուսնի լոյսով արծաթազօծուելով և մերթ ծառերի ստուերների տակ զորշ գոյն ստանալով, բաւական գեղեցիկ տեսարան էր ներկայացնում։ Մենք նստել էինք առուակի ափին, կանաչ խոտերի վրայ, ուր լուսինը ադամ կերպով լուսաւորում էր մեզ։ Ջուրը գալիս մեր առջևով սահում էր դեպի ցած, առաջացնելով մի քաղցր աղմուկ, որը սամովարի թշթշոցի հետ սիրուն ներդաշնակութիւն էր կազմում։ Մեզնից քիչ հեռու մի խումբ ճպուռներ մի առանձին եռանդով ճռճռացնում էին, իսկ աւելի հեռու կռաւում էին գորտերը, վրդովելով գիշերային հանդիսաւոր խաղաղութիւնը...

Զգում եմ, որ մտքերը լաւ չեմ բացատրում, որ պատկերները, տեսարաններն ու երևոյթները լաւ չեմ նկարագրում, որ պակասում է ինձ վիպասաններին ու բանաստեղծներին յատուկ նկարագրական կենդանի գոյները, չեշտեր ու թռիչք, որ պակասում է ինձ այն հզօր ու վառ երևակայութիւնը որի շնորհիւ առարկաները կեանք ու հոգի են առնում. վերջապէս գիտեմ, որ պակասում է ինձ շատ բան։ Բայց այդ ինձ համար միևնոյն է։ Ես ոչ բանաստեղծ եմ, ոչ վիպասան, իսկ գրածս՝ կեանքիս ամենա-

պարզ պատկերներից մէկն է։ Ես չեմ ուզում, որ այդ պատկերը աւելորդ գոյներով կերպարանափոխուի, այլ գրում եմ նոյնու թեամբ, իւր հարազատ գոյներով, առանց բանաստեղծական պաճուճանքի։

Վերջապէս ում հասկանալի չի լինի, եթէ ասեմ, թէ այդ գիշերը կախարդական գիշեր էր, այնքան կախարդական, որի տակ ամենապարզ առարկաներն իսկ դիւթական տեսք էին ստացել և հմայում էին ինձ։

Իսկ այս բոլորի թագուհին ինքը՝ Եփիմէն էր։

Նա տասնեւօթ տարեկան աղջիկ էր, չինարի պէս բարձր ու գեղեցիկ հասակով, որ ոտքից գլուխ կտրծես ձուլուած լինէր մարդկային իդէալական գեղեցկութեան ու նրբութեան կաղապարի մէջ։ Նրա բարակ ու շնորհալի իրանը սկսած մէջքից ասիճանաբար լայնանում ու ոլորկանում էր, վերջանալով ճոխ ուսերով և իւր բոլոր վեհահեղութեամբ բարձրացած հասուն կուրծքով, ուր նոյնքան շնորհալի պարանոցի վրայ բռնում էր իւր սեգ և յաղթական գլուխը, պսակուած մինչև ծնկները երկարող մոյգ շագանակագոյն մազերի հարուստ ալիքներով։ Ինձ այնպէս էր թւում, թէ բնութիւնը օժտելով նրան այդքան գեղեցկութեամբ ու ներդաշնակութեամբ, անհամեմատ շռայլութիւն էր գործ դրել։ Երկնքից դէպի ցած նայող լուսնի և ծառի ճիւղից քարշարած լաստերի հակադարձ ճառագայթներով լուսաւորուած նրա վրդովման հեռքը կրող դէմքի վրայ գրոշմուած էր նրա կուսական անմեղութիւնը. իսկ որ նրա միտքը դեռ պղտորուած չէր տգեղ մտածութիւններով, որ սիրտն ու հոգին դեռ ապականուած չէին կեանքի ապականութիւններով-այդ կարելի էր կարդալ նրա ալեղնաձև յօնքերի տակ պատսպարուած սիրուն աչքերի մէջ։

Ոչքան շատ էի նայում նրան, ոչքան ուշադիր և միւշտարի աչքով էի նայում, այնքան աւելի կախարդական էր երևում ինձ և այնքան աւելի մեծ ոյժերով էր տիրապետում սրտիս։ Եւ թւում էր, թէ տիրապետում է ինձ մի անորոշ զինովութիւն,

մի հեշտալի թմբութիւն, և թէ ուղեղս մի անբնական երկունքի մէջ է։

Եփիմէն ձայնը կարծես սամովարի մարող թշոցին յարմարեցնելով, երգում էր ինչ-որ նոր եղանակ և մաքրում էր թէյի բաժակները։ Ես լսում էի նրա անոյշ ձայնը, բայց ինձ այնպէս էր գալիս, թէ այդ ձայնը գալիս է հեռուից, շատ հեռուից։ Ու խորին հոգեմայլութեամբ նայում էի ծառերի խորքը, դէպի հեռուն, շատ հեռուն, որքան հեռու թռչում էր իմ միտքը և որքան հեռաւոր, բայց քաղցր երազների շուրջը թափառում էր նա։

— Դուք ինչ-որ մտածում էք, ասաց նա թէյի բաժակն առաջս դնելով։

Նրա արծաթահնչիւն ձայնը, որի մէջ մետալական մի առանձին անուշութիւն կար, յետ կոչեց ինձ յոյսերի ու երազների աշխարհից։

Ու պատասխանեցի.

Այո, մտածում եմ, թէ ինչո՞ւ այսքան գեղեցիկ ու կախարդիչ է երևում այս գիշերը.. գուցէ նրանից է, որ երբէք ինձ չի պատահել բաց և աստղազարդ երկնքի տակ գիշերը լուսացնել։

Նա բնազդաբար մէկ նայեց շուրջը, լուսնողող ծառերին, մէկ աստղալից երկնքին ու ասաց կարծես ինքն իրեն։

—Իրաւ շատ հրաշալի ու բանաստեղծական գիշեր է...

Ապա դարձաւ ինձ և լուրջ շեշտով հարցրեց։

— Դուք բանաստեղծութիւններ սիրո՞ւմ էք։

— Ես՞... ինչպէս ասեմ. հմմ սիրում եմ, հմմ չեմ սիրում. այդ՝ ինչ ինձ է վերաբերում, կախուած է ժամանակից և տրամադրութիւնից։

— Ինչպէս... ես չհասկացայ։

— Ահա այսպէս... այս րոպէիս ես ոչ մի տեսակ բանաստեղծութիւն չեմ կարող սիրել, թէ կուզ նա լինի աշխարհահռչակ մէկի գրչի արտադրութիւնը։ Դուք ինքներդ չասացիք, օրիորդ, թէ բանաստեղծական գիշեր է, այսինքն մի գիշեր, որով բանաստեղծները կարող են ներշնչուել, յափշտակուել ու երգել։

Ուրեմն մենք շրջապատուած ենք բնութեան հարազատ բանաստեղծութիւններով, մենք մեր աչքով տեսնում ենք մարմնացած բանաստեղծութիւն։ Ուրիշ խօսքով, բնութիւնը՝ լուռ ու անխօս, երգում է մեզ իւր ամենակատարեալ երգը, նոյնպէս լուռ ու անխօս առարկաների բերանով, սակայն որոնք աւելի պերճախօս են, աւելի խոր ու թովիչ, քան Լամարթինի քնարը։ Բնութեան բանաստեղծութիւնը, նրա երգն ուրիշ է. նա հարազատ է, կեանք ու հոգի ունի և իւր անբարբառ երգով կեանք է տալիս մեզ, ուղեղում է և մենք այդ նիւթական երգի քաղցր տպաւորութեան տակ, նրանով ներշնչուած, սկսում ենք երգել, թէև գիտենք, որ մեր գրիչն անզօր է չոր ու ցամաք բառերին կեանք ու հոգի տալու։ Ինչ է թղթի բանաստեղծութիւնը բնութեան բանաստեղծութեան հանդէպ, եթէ ոչ գեղեցիկ ու ոլորուն, բայց սառն ու անշունչ բառերի մի հիւսուածք, որ հեռու բնութեան գեղեցկութիւնից, Սահարայի անապատում՝ կիզիչ արևի տակ և այրուող աւազի վրայ նստած մարդու սիրտը հաղիւ թէ կարողանայ ջերմացնել...

—Օ՜... Դուք բոլորովին ոչնչացրիք բանաստեղծութիւնը՝ խօսքս ընդհատելով, նկատեց Եփիմէն.- ընդհակառակը ես սիրում եմ և գիտէք ինչպէս եմ ոգևորուում, երբ կարդում եմ «Մայր Արաքսին»։

— Դուք կարող էք սիրել և ոգևորուել, ինչպէս և ամեն մի ուրիշը, որ ապրում է իւր խելքով, իւր ճաշակով։ Իսկ ես կասեմ, որ եթէ պատահէր ձեզ շրջել Արաքսի ափերին և նայել նրա նախկին փառքն ու մեծութիւն կազմող աւերակների վրայ, դուք էլ կասէիք, որ «Մայր Արաքսի»-ն իսկականի ուրուականն էլ չէ։ Դուք գիտէք որտեղից է բղխում Արաքսը, որտեղից է անցնում։ Մայր հոգի գրկից բղխած նրա իւրաքանչիւր մի կաթիլը աւելի մեծ պատմութիւն է բովանդակում, քան ամենամեծ հատորները։ Նրա իւրաքանչիւր մի կաթիլի մէջ թաղնուած է ազգերի լացն ու ծիծաղը, ժպիտն ու արցունքը, քրքիջն ու հառաչանքը։ Եթէ Արաքսը խօսէր, նա չէր պատմի, ձեզ այն, ինչ որ պատմում է

«Մայր Արաքսին» այլ այն, ինչ որ ինքը՝ բնութիւնը միայն կարող է պատմել։

Այդ ժամանակ ծառերի կատարները քերող քամին փչեց աւելի ոյժգնութեամբ, դալար ճիւղերը ցնցուեցին և մի արդէն հասուն դեղձ պոկուելով, խիտ տերևները ճեղքեց և ցած ընկաւ մեզնից քիչ հեռու։

Ես վերառնելով անուշահոտ դեղձը, մօտեցայ Եփիմէին։

—Այժմ հարցնում եմ, ո՞ր բանաստեղծը կարող է հարազատ գոյներով նկարագրել այս խաղաղ դիշերը, որ ինձ ու ձեզ կախարդում է, այս մանիշակագոյն վճիտ երկինքը, աստղերն ու լուսինը, այս մեր գլխի վրայից հոսող մեղմ քամին, ծառերի ընդգրկումը, տերևների սոսափիւնը, որոնք կարծես դրոյց են անում, ճիւղերի արձակած ֆանտաստիկական ստուերները, որ կարծես պարում են, այս առուակի խոխոջը, այն միջատների ճռռոցիւնը, վերջապէս՝ այս անուշահոտ դեղձի որբանալը իւր հարազատ ճիւղից, որից առել էր իւր նիւթը, կեանքը և նրա անկումը կամ այն թէ ինչպիսի յուզիչ զգացումով մատուցանում եմ ձեզ այս հենց նոր որբացած պառուղը և ձեր հոգեկան ալեկոծութիւնը, որով պէտք է ընդունէք իմ ձեռքից... Ասացէք ո՞վ կարող է նկարագրել ու երգել։

Օրիորդը լուռ էր և մեծ ուշադրութեամբ լսում էր ինձ, առանց ընդհատելու, բայց նա նայում էր աւելի խորին հետաքրքրութեամբ, կարծես ուզում էր թափանցել սրախս խորքը, տեսնելու իմ հոգեկան դրութիւնը, ներքին յուզիչ զգացումները։

Ապա առաւ ձեռքիցս դեղձը, հոտ քաշեց և միջից երկու հաւասար բաժին անելով, մի բաժինը տուեց ինձ։

Որովհետև մեծ ախորժակ ունէի խոսելու, ուստի դեղձն առնելով նկատեցի։

— Սրանով ապացուցանում էք, օրիորդ, որ Եւայի սեռին էք պատկանում։

— Ինչպէս՞...

— Խոսքս եղեմական պտղի մասին է, որ Եւան կիսեց Ադամի հետ։

Նա լրջօրէն նայեց ինձ, ապա կարմրելով գլուխը քարշ արեց։ Ես նոյնպէս ամաչեցի, զգացի, որ խոսքս շատ անպատշաճ էր, թէև ասացի միամտաբար, առանց յետին մտքի։

Օրիորդը երկրորդ թէ երրորդ բաժակը լցնելով դրեց առջևս և կարծէք անախորժ լռութիւնը խզելով ասաց։

—Գիտէք այս դիշերուայ մեր ներկայացումը բաւական լաւ անցաւ։

— Այո, լսելով՝ հանդիսականները չափազանց գոհ մնացին։ Վերջին տեսարանը մանաւանդ և՛ յուզիչ էր և՛ խրատական։ Էնգթէմուրը այդ արիւնարբու գազանը, Սերաստիան արիւնով ողողելուց յետոյ, հարցնում է Նաղինիկին «Հայրդ կուզէ՞ս, թէ հայրենիքդ»... Հայրենիքի սիրով վառուած հայ կինը, հօրն ուրանալով, բռնակալից խնդրում է արիւնուայ հայրենիքը... Դուք, օրիորդ, այդ տեսարանում շատ լաւ էիք։ Ես տեսայ, թէ ինչպէս ամբողջ դահլիճը դղրդաց։ Ոգևորութիւնը շատ մեծ էր. գնդապետ Աղէքսանդր Մելիք Հայկազեանը հօ՞ ինքն իրենից ելաւ։

— Ամեն ինչ զոհել հայրենիքին, իրաւ որ ազանչելի մտք է, նկատեց Եփիմէն ոգևորուած. ապա վշտալի եղանակով աւելացրեց. բայց այժմ այդպիսի բաները թողթի վրայ միայն գոյութիւն ունեն, որոնք բոպէական ոգևորութիւնից բացի, ուրիշ ազդեցութիւն չեն գործում։

— Շատ ճիշտ էք ասում, օրիորդ, մարդկային կեանքն ապականուած է, մարդիկ նոյնպէս։ Վսեմ մտքերն ու գաղափարները, որոնք առաջ բնակւում էին մարդկանց սրտերում և ոգևորում էին նրանց, այժմ այնտեղից վտարուած են և կախուած լեզուների և գրչի ծայրից միայն։ Այժմ մարդիկ լեզուով ու գրչով ամեն ինչ են, իսկ գործով—ոչինչ, բոլորվին ոչինչ։

— Ոչնչից էլ ստոր, եթէ կարելի է այսպէս ասել... Հա, լաւ միտք եկաւ, ներկայացումը վերջանալուց յետոյ, երբ հան-

դերձարանից ելայ, մի ջենտլմէն երիտասարդ, ոսկի ակնոցներով մօտեցաւ ինձ և առանց այլևայլութեան ձեռքը մեկնելով ասաց։

«Ես ամբողջ Եւրոպան շրջած և տեսած եմ Սարա Բերնարին և ուրիշ շատ յայտնի դերասանուհիների։ Շեմ ասի՝ թէ դուք նրանցից մէկն էք, որովհետև ձեր ապրած մթնոլորտը բեմական հանճարներ արտադրել անկարող է, բայց համարձակ կասեմ, որ այդ հանճարի սերմից կայ ձեր մէջ։ Թողէք դպրոցը և ծառայէք բեմին...

Շնայելով Եփիմէյի մասին ես էլ նոյն կարծիքն ունէի, այնու ամենայնիւ նրա խօսքերն ինձ ծանր եկան։ Դերասան ու դերասանուհիների մասին ես լաւ կարծիք չունէի։ Իմ կարծիքով կեանքի մէջ, իրենց վարքով նրանք քանդում էին այն, ինչ որ չինում էին բեմի վրայ։ Ի հարկէ ուրիշ բան են սիրողները։

Իմ այս կարծիքի հետ համաձայն էր նաև Եփիմէն։ Մենք այս նիւթի մասին երկար, շատ երկար խօսեցինք։ Եւ այնքան անձնատուր էինք եղել քաղցր զրոյցներին, որ չէինք նկատել, թէ ինչպէս թռան ժամերը։ Արևելեան երկինքն սկսել էր արշալուսի հեռաւոր ճառագայթներով գորշանալ։ Մի քանի րոպէից յետոյ առաւօտեան աղջամուղջին, որին տեղացիք «Ադամայ մութ» են կոչում, տեղի տուեց մի տեսակ սառն և դժգոյն լոյսի։ Կեանքը հետզհետէ սկսեց զարթնել, աքաղաղները իրենց ծուղրուղուով ողջունեցին շրջակայքը, բնութեան անմեղ թռչնիկները դուրս թռչելով իրենց բոյներից, սկսեցին թռչկոտել ծառերի մէջ և երգել իրենց առաւօտեան քաղցր ու խորհրդաւոր մեղեդին։

Թէյը վերջացրած լինելով, վեր ելանք շաղաթաթախ ծառուղիներով շրջելու։ Ամեն տեղ աչքի էր զարկում բուսաբանական մեծ ճաշակ ու հմտութիւն։ Այս բոլորն առաջին անգամ տեսնելով, ընդհատեցի կարճ լռութիւնը։

—Ամեն բարիքներով լի մի սիրուն պարտէզ է... լսում էք որքան քաղցր են երգում թռչնիկները։

—Այսօր ամեն ինչ ձեզ քաղցր ու զեղեցիկ են երևում,

ասաց նա ժպտալով ճիշտ այնպէս, որպէս կանաչ տերևների միջից ժպտում էր նորաբաց լիլիաները։

—Այո, ամեն ինչ... ահա այս երբեմնագ ծաղիկները, այս կանաչ ու տերևախիտ ճիւղերի միջից դուրս նայող գոյնզգոյն պտուղները, այս զգուշութեամբ փչող զեփիւռը, որ կարծես ամեն մի ծառից, ծաղկից ու թփից անոյշ համբոյր է քաղում... միթէ սրանք իսկապէս գեղեցիկ չեն։

— Ամեն ինչ... ամեն ինչ, կրկնեց նա նոյն կախարդական ժպիտով։

— Իսկ դուք, օրիորդ, այս բոպէիս դուք ձեզ չէք տեսնում, բայց ես տեսնում եմ ու՝ ներեցէք ասել, որ դուք լրումն էք այս բոլոր սքանչելիքների. բնութեան զարդերի այս ծովի մէջ դուք մի հաւերժահարսն, մի թագուհի էք։

— Հաճոյախօսութիւններ էլ գիտէք... չէի սպասում։

Նա սխալւում էր, ասածս արհեստական հաճոյախօսութիւն չէր, այլ խորին համոզմունք։ Եւ այդ համոզմունքն այնքան անկեղծ ու ուժեղ էր, որ ձայնս սկսեց կամաց կամաց դողալ, սիրտս յուզուել և տեսայ, որ իմ մէջ մի անբնական փոթորիկ է կատարւում։

— Ես ասացի ճշմարտութիւնը, օրիորդ, և հաւատացէք, որ շեմ կեղծում։

Նա աղօթարանի նման յանկարծ շառագունուեց և թաքցրեց երեսն ինձանից։

— Միթէ անգիտակցաբար վշտացրի ձեզ։

— Ոհ, ոչ. բայց չեմ սիրում իմ մասին զովեստներ լսել։

— Լաւ. այս անգամ ներեցէք ինձ, այլևս չէք լսի, եթէ հաճելի չէ։

Նա նայեց երեսիս, ժպտաց ու թեքուեց դէպի ծաղկանոցը, ուր փթթել էին աշնանային ծաղիկները։

Արևը ծագելուն արդէն մօտ էր. արևելեան երկինքը կարմրել էր վաղորդեան արևի ոսկեգոյն ճառագայթներով։ Հաւերն ջիլել էին թառից, իսկ թռչնիկները ճիւղից ճիւղ թռչկոտելով

բարձրացրել էին մի շատ ախորժելի աղմուկ։ Բամբասանքների տեղիք չտալու համար, պէտք էր հեռանալ, քանի որ դրացիները չէին դարձնել և փողոցը չէր լցուել բազմութեամբ։ Մտայ սենեակը գլխարկս ու վերարկուս առնելու, երբ ետևիցս ներս մտաւ Եփիմէն։

— Այդ ինչ էք անում, հարցրեց նա։

— Մտածում եմ գնալ։

Նա ասաց. ես տեսայ, որ հեռանալս նրան ծանր է գալիս, թէև ինքն էլ գիտէր, որ արդէն ժամանակ էր բաժանուելու

— Դեռ շուտ չէ. քիչ էլ սպասեցէք, ասաց։

— Եթէ ինձ մնար, ես ուրախութեամբ կը մնայի. բայց անկարելի է, պէտք է զգոյշ լինել, պէտք է խոյս տալ անտեղի բամբասանքից։

— Ուրեմն գնա՞ւմ էք։

— Այո՛ բայց... ակամայ։

Նա գլուխը քաշ արած՝ մատներով բրբրում էր փոքրիկ փունջը, ուր կարծես մի բան էր կորցրել։ Յետոյ ակներև ախորութեամբ ասաց։

— Դուք նշանակութիւն տալիս էք բամբասանքին։

— Անշուշտ, մինչդեռ ապրում ենք բամբասանքով յագեցող հասարակութեան մէջ։ Մեր հասարակութիւնը համ տգէտ է. համ էլ ազատ ժամանակ ունի բամբասանքներին ականջ դնելու, հենց որոց վրայ էլ կազմում է իւր գաղափարը բամբասուողի մասին։ Այսպիսով է մեզանում կազմւում հասարակական կարծիքը։ Իսկ որ այդ կարծիքը ահագին նշանակութիւն ունի—ոչ ոք չի կարող ուրանալ։

— Ճիշտ էք ասում. ուրեմն գնացէք. բայց չը մոռանաք, որ այս գիշեր անքուն տանջեցի ձեզ։ Ինձ համար գոնէ շատ ուրախ անցաւ այնքան ուրախ, որ երբէք չպիտի մոռանամ։

— Ես նոյնպէս... մինչև գերեզման...

— Օ՛հ, գերեզմանի անունը մի տուր, դեռ ժամանակ է ապրելու, զուարճանալու։

Ապա մեկնեց ինձ ծաղկի փունջն ու աւելացրեց։

— Ընդունեցէք այս որպէս հաւատիք իմ անկեղծ զգացումներիս, որ տածում եմ դէպի ձեզ... սրանից բացի ուրիշ բան չունիմ ձեզ նուիրելու.

— Ունիք և այն ինձ համար աւելի թանկագին բան, քան այս ծաղիկները, որոնք վաղը պիտի թառամեն ու թափուեն, ասացի ես մտքումս։

— Զատ շնորհակալ եմ,—ասացի իրեն, փունջն ընդունելով. մնաք բարեաւ, օրիորդ։

Նա իմ մնաք բարեին գլխի լուռ խոնարհումով պատասխանելով, ձեռքը մեկնեց ինձ։ Ես տեսայ, որ յուզուած էր, աչքերն ուրիշ տեսակ էին փայլում, կուրծքն ուրիշ տեսակ բարախում։ Ես էլ յուզուած էի. այդ բաժանումն ինձ համար էլ շատ ծանր էր գալիս, այնու ամենայնիւ ջերմագին սեղմեցի նրա ձեռքը, թէև՝ հաւատացէք՝ որ այս անգամ էլ քաջութիւն չունեցայ այն սիրուն ձեռքը շրթունքիս սեղմելու։

Զ.

Այժմ կարող եմ բացարձակ կերպով խոստովանել, որ Եփիմէին հանդիպած օրից սկսած՝ ես ինձ բոլորովին ուրիշ մարդ էիզգում։ Այն անհերևոյթ վարագոյրը, որի ետև իրերն ինձ երևում էին ոչ իրենց հարազատ գոյնով ու գեղով,—այն վարագոյրն արդէն պատռուել էր։ Իմ հայեացքները, իմ մտածումներն ու ըմբռնումները կեանքի ամենամանր և հասարակ երևոյթներից սկսած մինչև ամենախոշորն ու բարդը.—այլևս նոյնը չէին. ինչ որ էին առաջ։ Այն ամենը ինչ որ առաջ ինձ համար անբացատրելի ու մութն էր, ինչ որ անըմբռնելի էր ու գաղանիք, կարծես մի գիւթական զաւազանի հարուածով լուծուել, պարզուել էին։ Կեանքը իւր բոլոր թագուն հրապոյրներով ու ծածկուած խորհուրդներով մերկացել էր աչքիս և այժմ ես կեանքի վրայ նայում էի որպէս մի շատ ծանօթ առարկայի վրայ։ Ես հասկացել

էի, թէ ինչ էր այն դատարկութիւնը, որ յայտնուել էր իմ մէջ, դէպի ուր և ում էր ձգտում սիրտս կամ ինչ անծանօթ քաղց էր, որին լցնելու, գոհացնելու այնքան մեծ պահանջ էի զգում ես, բայց չգիտէի թէ ինչով կամ ինչպէս։

Եւ որքան յաճախ էի հանդիպում նրան, որքան աւելի էի մօտենում, այնքան աւելի աչքերս բացւում էին, սիրտս փափկում էր, զգացումներս վսեմանում էին և աւելի համարձակ էի նայում կեանքի վրայ ու սիրում, սիրում էի ամենքին և ամեն բան անխտիր։

Դէպի Եփիմէն զգացածս բուռն սէրը ես միանգամ արդէն խօստովանել եմ։ Զգալ՝ որ սիրում ես, դա չի նշանակում նաև գիտնալ, թէ ինչու ես սիրում։ Ես նոյնպէս չգիտէի այդ բուռն սիրոյ բուն խորհուրդը, նպատակը։

Բայց այժմ ես գիտեմ, գիտեմ որ այդ սիրոյ խորհուրդը, նպատակը սիրելի առարկային ամբողջովին տիրապետելն է, նրանով շնչել ու ապրելն է, նրա հետ լալ ու խնդալն է, վերջապէս նրա հետ մի սիրտ, մի հոգի կազմելու և յաւիտենական անխզելի կապով կապուելու գաղափարն է։

Ամուսնանալ նրա հետ—այս էր բոլորը։

Եւ ես վճռեցի խնդրել նրա ձեռքը, ամուսնանալ, ուսման ընթացքն աւարտելուց յետոյ։

Վճիռս չափած, կշռած ու վերջնական էր։

Այնուամենայնիւ սոյն վճռի մասին մենք ոչինչ չէինք խօսել միմեանց հետ, մտքերի, կարծիքների փոխանակութիւն չէինք ունեցել։ Բայց և այնպէս մտքովս անգամ չէր անցնում, թէ կարող եմ մերժում ստանալ, թէ կարող եմ օրիորդի վերաբերմամբ սխալուած լինել։ Մի թէ միմեանց անկեղծ կերպով սիրող ու պաշտող հոգիները կարող են կասկածներ ունենալ կամ պէտք ունին բացատրութիւն տալու կամ ստանալու։ Մի թէ նրանց լուռ նայուածքները, նրանց կրծքի բաբախումները և այլ լուռ, խորհրդաւոր նշաններն աւելի պերճախօս չեն, քան լեզուն, աւելի ապահով գրաւականներ չեն, քան սովորական խօսքը ու երդումը։

Իմ այդ որոշման մասին ընկանաբար չէի խօսել և ոչ ոքի հետ, բայց բանից դուրս էր գալիս, որ ամենքն էլ մի այդպիսի բան արդէն գուշակում էին։ Մայրս, ազգական ու բարեկամներս ընկերներս ու ծանօթներս, վերջապէս մեր խումբը ուրիշ տեսակ էին նայում Եփիմէին, մանաւանդ իմ ներկայութեամբ։ Ախոյեաններս հրապարակից քաշուել էին, իսկ մեզ ճանաչող հասարակութիւնը, Յովհաննէսի ասելով, մեր մասին խօսում էր, որպէս ապագայ ամուսինների մասին, և այդ միութիւնը շատ տեղին ու օրինաւոր էր գտնում։

Ցամենայն դէպս մենք դեռ համարձակութիւն չէինք ունեցել միմեանց կրկնելու ես քեզ սիրում եմ սրբազան երեք բառը։

Բացի թատրոնական բեմից, ես ու Եփիմէն միմեանց հանդիպում էինք նաև զանազան ընկերութիւնների, հանդէսների և ընտանեկան կամ հասարակական երեկոյթների մէջ։ Ուր հրաւիրւում էի ես, հրաւիրւում էր և Եփիմէն կամ ուր հրաւիրւում էր նա, հրաւիրւում էի նաև ես։

Եփիմէն այլևս չէր քաշւում ինձնից. վաղուց էր, որ նա բարեկամական ազատութեամբ էր վերաբերւում դէպի ինձ, ի հարկէ չշեղուելով պատշաճի օրէնքից։ Ոչ մի բան, ոչ մի շրջան չէր արգելում մեզ ազատ խօսել միմեանց հետ, վիճել և կատակներ անել։

Այս բոլորը զարմանալի յեղաշրջում էին առաջ բերել իմ մէջ։ Ես դարձել էի չափազանց ուրախ, կատակաբան և շատախօս։ Այլևս խոյս չէի տալիս մարդկանցից, ընդհակառակը ես ինքս էի ուրիշ որոնում մտնել մարդկանց մէջ, շփուել ամենքի հետ անխտիր։

Մի օր մեր ընտանիքի շրջանում շատ զուարճախօսութիւն ու կատակներով ամենքին ծիծաղեցնելուց յետոյ, մայրս լուրջ կերպով հարցրեց։

— Հ՞ը, այդ ինչ է պատահել, բնաւորութիւնդ շապկի նման ես փոխում։

— Ի՞նչպէս, հետաքրքրուեցի ես նրա միտքը լաւ չհասկանալով։

— Այնպէս, որ այժմ կարծես բոլորովին ուրիշ մարդ լինես։ Առաջ անհոգ անտարբեր էիր, ոչնչով չէիր հետաքրքրւում, խօսքերդ սուղ էիր ծախում, իսկ ծիծաղ՝ նրան պէտք էր կարթով դուրս քաշել, ապա դարձար մտածկոտ, լռակեաց ու ծածկամիտ. ոչ միայն դու չէիր խօսում կամ ծիծաղում, այլ և քո միշտ սեղմուած յոնքերին, տխուր ու մռայլ դէմքին նայողը մոռանում էր իւր խօսքն ու ծիծաղը... Իսկ հիմայ դարձել ես շատախօս, կատակարան. միշտ ուրախ ես և ուրախացնում ես ամենքին։ Ի հարկէ այս ամենը առանց պատճառի չեն, դրանք կապ ունին մարդուս հոգեկան տրամադրութիւնների և այդ տրամադրութիւնների փոփոխութիւնների հետ։

— Ի հարկէ, առանց պատճառի յիմարները միայն կարող են խնդալ կամ արտասուել։

— Ուրեմն կայ պատճառ։

— Ի հարկէ...

— Չի՞ կարելի որ բացատրես ինձ, որպէս մայր ես իրաւունք ունիմ պահանջելու։

— Հրամայեցէք։ Դու գիտես, որ ես արդէն չափահաս եմ տարիքս արտօնում են ինձ ազատութեամբ վայելել իրաւունքներս։ Գիտես, որ գործերս գնում են ժամացոյցի ճշտութեամբ և արդէն նիւթական ու բարոյական այնքան պաշար ունիմ, որ կարող եմ առանց քաշուելու մուտք գործել հասարակութեան բոլոր խաւերի մէջ։ Սրանցից բացի, ոչ միտքս և ոչ ձեռքերս մինչև այսօր չեն գործել այնպիսի անվայել գործեր, որոնք արատ բերէին պապերիս, ծնողներիս և իմ անուանս... Եւ մի՞թէ սրանք ամենահզօր ու յարգելի պատճառներ չեն։

Մայրս ուշադրութեամբ ինձ լսելուց յետոյ մի քանի րոպէ լռեց. ապա ասաց.

— Հրգիտեմ, մարդիկ ինձ երանի են տալիս, բայց ինչու...

ինչ էլ որ է, աշխատիր, որ այդ երանիները տեսական լինին ինձ համար, և կարողանամ մարսել։

Նա վերջացնելով խօսքը հեռացաւ։

Տարիներ անցնելուց յետոյ միայն հասկացայ թէ այդ խուլ ակնարկներով ինչ էր ուզում ասել մայս։ Հէնց նոյն օրն էլ մասամբ ես հասկանում էի ու գուշակում, որ մայրս խօսում էր ինչ որ նախազգացումների ազդեցութեան տակ. այնուամենայնիւ յամառաբար պնդում էի ինքս ինձ թէ նա սխալւում է։ Գիտէի, որ նա շատ հեռուն էր մտածում և այդ հեռու ապագան շատ անորոշ ու պղտոր էր տեսնում. Պատճառն՝ ի հարկէ՝ ես չգիտէի, ոչ էլ փորձում էի իմանալ։ Չի՞ որ մի անգամ արդէն ասացի, թէ ենթարկուելով կեանքի հոսանքին, զինաթափ էի եղել և ինքս ինձ բոլորովին անզօր էի զգում՝ ըստ առաջնոյն, կամքիս և հաճոյքներիս վրայ իշխելու։

Եթէ ամեն ինչ մարդուս մէջ բնազդական է, գոնէ կամքի և հաճոյքի մասին այդպէս կարելի չէ դատել։ Որքան ես գիտեմ, կեանքն՝ ինքն է մարդուս կամքի և հաճոյքի ստեղծողը և ձևակերպողը։ Եւ սրանք են մարդու թէ ամենամեծ բարերարները, թէ ամենամեծ թշնամիները նրա գոյութեան ամբողջ ընթացքում։ Այդ ի հարկէ կախուած է այն բանից, թէ որպիսի հանգամանքներից են սնունդ առնում նրանք կամ որպիսի պայմաններով ձևակերպւում։

Քանի որ այդ կեանքի գոյութեան և նրա առաջադիմութեան սկզբունքն առ այժմ մեծ մասամբ անբարոյականութիւնն է, և քանի որ այդ կեանքը՝ քաղաքակրթութեան ու լուսաւորութեան դիմակի տակ ծածկուած՝ առաջադիմում է աւելի շռայլ ղեխի ու մոլի ճանապարհով,—այնժամանակ հասկանալի է իւրաքանչիւր մի անհատի կամ մի ժողովրդի բարոյական անկման գլխաւոր պատճառը և աղբիւրն այն նախազգացման, որ հայրերն ու մայրերն ունենում են իրենց զաւակների ապագայի մասին։

Թերևս մօրս նախազգացումն էլ հենց այդ աղբիւրից էր բղխում և նա նայելով ապականուած կեանքի ու այլասե-

ռուած հասարակութեան վրայ, կասկածանքով էր նայում ապագային...

Է.

Այդ տարուայ թատրոնական սեզոնի վերջին ներկայացումը, որ «Վարդանայ Պատերազմ» ողբերգութիւնն էր, տեղի ունեցաւ բուն բարիկենդան հինգշաբթի օրը, Վարդանանց տօնին։ Եղանակը սաստիկ փոփոխական լինելով, ես ցուրտ առայ, այնպէս որ բոլորովին կազդուրուելու համար, վճռեցի մի քանի օր տանից դուրս չելնել։ Սակայն նոյն շաբթի ուրբաթ օրը՝ երեկոյեան տոմսակ ստացայ տեսչից, որով հրաւիրում էր սիրողների պատուին տրուելիք ճաշկերոյթին ներկայ գտնուելու, որ տեղի պիտի ունենար շաբաթ օրը, իւր տան մէջ։

Անշուշտ կը մերժէի այդ հրաւէրը, եթէ դա լոկ քէֆի համար լինէր և կապ չունենար մեր թատրոնական աշխատանքի հետ։ Բայց որովհետև նա տրւում էր խմբի պատուին, ուր պիտի քննուէր և վաւերացրուէր նաև մի տարուայ ներկայացումների ելևմտից հաշիւը—ես ստիպուած էի գնալու։ Բացի այդ համոզուած էի, որ Եփիմէն էլ այնտեղ կը լինէր, որին հանդիպելու և նրա քաղցր ներկայութիւնը վայելելու համար պատրաստ էի ամեն տեսակ զոհաբերութեան։

Միւս օրն առաւօտեան բաւական առողջ էի զգում ինձ, ուստի որոշեալ ժամին ճանապարհ ընկայ դէպի տեսչի տունը։ Հրաւիրուածները բոլորն էլ այնտեղ էին։ Երևում էր, որ ամենքն էլ ուրախ տրամադրութեան տակ էին, որովհետև նրանց աղմկալից զրոյցն ու ծիծաղը լսւում էր փողոցում։

Մտնելով դահլիճը, սովորական բարևի հետ միասին աչքերս անգիտակցաբար սկսեցին փնտրել Եփիմէին։ Խմբի երկսեռ բոլոր անդամներն այնտեղ էին, իսկ Եփիմէն չկար։ Ցանկարծ տխրեցի և երկրորդ անգամ նայեցի շուրջս։ Բացի այն, որ ողմկալից խօսակցութիւնը յանկարծ դադարել էր. ես տեսնում էի,

որ ամենքն էլ նայում են ինձ և թէ նրանց նայուածքի մէջ կար ինչ-որ ցաւակցական բան։ Ծանր տպաւորութիւնն ինձնից վանելու մտքով մի քանի անկապ հարցեր արի. նոյն իսկ ժըպտացի, բայց տեսայ որ ձայնս կեղծ է հնչում, որ սիրտս ճմըլւում է։ Առաջին պատահած աթոռն առնելով, նստեցի ազատ անկիւններից մէկում, երբ աչքս ընկաւ Յովհաննէսին։ Նա էլ նայում էր ինձ, բայց չգիտեմ ինչու իսկոյն գլուխը քարշ գցեց, թէև տեսայ, որ տխուր էր։

Այդ ժամանակ միւս դրնից ներս մտաւ տեսչի աղջիկը, մատուցարանը ձեռքում,—ուր դրուած էր մի բաժակ խմիչք և այլ քաղցրաւենիք,—մօտեցաւ ինձ և խնդրեց ընդունել։ Ես ուզեցի հրաժարուել, որովհետև դեռ առաջին տխուր տպաւորութեան տակ էի գտնւում. երբ նա ասաց։

— Լաւ ընդունեցէք... գիտենք ի՞նչու էք տխուր, սակայն հենց հիմայ Ափիկեանը ասում էր, որ խմիչքը մարդուս տրխրութիւնը փարատում է։

Օրիորդի անորոշ խօսքերն ինձ տակնուվրայ արին։ Կրկին նայեցի շուրջս և նոյն տարօրինակ նայուածքներին հանդիպելով, հարցրի։

— Լաւ, մի ծածկէք, մենք արդէն գիտենք, կրկնեց օրիորդը նոյն ոճով։

— Բայց ի՞նչ է պատահել, ի՞նչ գիտէք կամ ի՞նչ եմ ծածկում. պարզ խօսեցէք, խնդրեմ։

— Որ Եփիմէն նշանուել է...

Կարծես մի կոտ սառը ջուր թափեցին գլխիս։ Սիրտս սկսեց տրոփել աչքերս մի տեսակ ամպակալեցին և ծնկներս սկսեցին դողալ։ Ինձ այնպէս թւաց՝ թէ ներսս մի չէնք քայքայւում է և ինչ-որ մի բան կտրուելով սրտիցս վայր է ընկնում։

Բայց այդ բոլորը մի քանի վայրկեան միայն տեւեց, դրութեանս անհեթեթութիւնն զգալով, լարեցի բոլոր ուժերս և յաջողուեց ինձ ինքս ինձ տիրապետել։ Ու ուրախութիւն կեղծելով ասացի։

— Ձեր անորոշ խօսքերով ինձ լաւ վախեցրիք, օրիորդ, ես կարծեցի մի մեծ դժբաղդութիւն է պատահել։

— Հապա ի՞նչ է, հարցրեց օրիորդը անփորձ աղջկայ միամտութեամբ։

— Դա բաղդաւորութիւն է, որի համար պէտք է ուրախանալ և ոչ տխրել... մեր խմբի անդամուհիներից մէկը, ինչպէս ասում էք, նշանուել է և պէտք է ամուսնանայ, այսինքն նա հասել է իւր նպատակին, ինչու ուրեմն մենք տխրենք... Ես խմում եմ նրա կենացը առանց պայմանի, իսկ նրա ամուսնացուի կենացը՝ պայմանով, եթէ նա մեր խմբին չի զրկի նրա մասնակցութիւնից։

Ու կեանքիս մէջ առաջին անգամը լինելով դատարկեցի օրիորդի մատուցած ոգելից խմիչքով լի բաժակը։

Այդ բաժակը խմելով, միտք ունէի իմ ներս բռնկուած հրդեհը մարելու, փոթորիկը խեղդելու։ Բայց նա աւելի ևս սաստկացրեց։ Այնուամենայնիւ ամբողջ ժամանակ կարողացայ խեղդուած պահել իմ մէջ դառն զգացումները և աշխատեցի կարելոյն չափ անտարբեր և ուրախ ձևանալ, որպէս էի սովորական ժամանակ։ Եւ այդ ինձ այնքան յաջողեց, որ շատերը սկսեցին համոզուել, թէ վարկենական չփոթումս առաջ էր եկել ոչ թէ Եփիմէի նշանադրութիւնից, այլ օրիորդի խօսակցութեան անորոշութիւնից։

Ի հարկէ այս բանում ես պարտական էի բեմական արուեստին։ Եթէ դերասանը իւր հոգեկան տրամադրութեան ամենաուրախ ժամին կարողանում է հասարակութեան առաջ ներկայացնել մի շատ տխուր պատկեր, կամ՝ սրա հակառակ՝ նոյն դերասանը իւր ամենատխուր րոպէում եթէ կարող է հանդէս գալ մի շատ ուրախ դերում, ինչու ուրեմն նա չի կարող թատրոնից դուրս, կեանքի մէջ ևս, ըստ պահանջել հարկին, կատարել իւր տրամադրութեան բոլորովին հակառակ դերեր։

Ճաշը մի փոքր ուշ սկսուած լինելով, բաւական երկար տևեց։ Որքան գինին շատ էր սպառւում, այնքան հիւրերի դէմքերը փայլում էին, այնքան աւելանում էր ուրախութիւնը, քէֆը, զուարճութիւնը։ Իսկ սրա հակառակ, որքան ուրիշները ուրախանում էին, այնքան աւելի ես տխրում էի և զղում, որ չպիտի կարողանամ մինչև վերջը տանել, որ ներսս աստիճանաբար սաստկացող փոթորիկը պիտի պայթի։ Ուստի հիւանդութիւնս պատճառ բերելով, որի մասին արդէն գիտէին ամենքը, ներողութիւն խնդրեցի ու դուրս ելայ։

Բայց հիւրերի մէջ կար մէկը, որ կարողացել էր ժամանակին գուշակել, թէ արտաքին խաղաղութեանս տակ հոգեկան որպիսի տառապանքներ են թագնուած։—Դա Յովհաննէսն էր, որի տխրութիւնը, ինչպէս առաջ ասացի, ես նկատել էի առաջին րոպէից և որը տևեց մինչև վերջը։ Նա իմ ետևից թողնելով ճաշի սեղանը, ճանապարհի կէսին հասաւ ինձ։

— Այդ ի՞նչ էին ասում, Իվան. ասա՛ խնդրեմ, կատա՛կ էին անում. հարցրի ես առանց նախաբանի։

— Դժբաղդաբար ո՛չ, ասաց նա դողացող ձայնով,—բայց կայ մի բան, որ դու գուցէ չգիտես, թէև այս րոպէիս ամբողջ քաղաքի խօսակցութեան նիւթն է կազմում։

— Ի՞նչ բան է հարցրի անհամբերաբար։

Նա երևի մտքերն ամփոփելու համար իսկոյն չպատասխանեց։

Ես յուզուած կրկնեցի.

— Հ՞ը, ի՞նչ բան է. շուտ պատասխանիր, աղաչում եմ... երևակայել չես կարող, թէ այս վարկեանիս ամեն մի քողարկուած միտք կամ բառ որքան ծանր է ազդում վրաս... ես կընխելագարուիմ...

— Խելքի արի. դժբաղդութիւնների ու արգելքների մէջից կարելի է յաղթանակով դուրս գալ պաղարիւն դատողութեամբ միայն։ Դիւրագրգռութիւնը ընկճման նշան է, նա տանում է դէպի կորուստ։

— Հոգեբանական դասախօսութիւն անելու ժամանակ

գտար... լաւ, թող քո ասածը լինի, կաշխատեմ պաղարիւն լսել և պաղարիւն դատել—դէհ ասա, մի ուշացնի...

— Եփիմէի հարնախօսութեան և նշանադրութեան հարցը վճռուել է երեկ և այդ ճիշտ է, բայց ճիշտ է նոյնպէս, որ այդ բանը կատարուել է հակառակ օրիորդի կամքին։ Նա ծնողների ու հիւրերի ներկայութեամբ բացարձակ յայտարարել է, որ ինքը քեզնից բացի ոչ ոքի չի գնալ։

— Այդ դու ո՞րտեղից գիտես, ուրախութեամբ հարցրի։

— Ասածս ճիշտ է. ինձ պատմել է նոյն հիւրերից մէկը։

Ես ադատ շունչ առայ, կուրծքս ճնշող ծանր լեռը գլորուեց ցած և գլխիցս փարատուեց այն քաօսը, որ այնպէս տակնուվրայ էր արել ուղեղս։

— Գի՞տես ով է նրա ձեռքը խնդրողը։

— Ապրօն... կարծեմ նրան ճանաչում ես, այն երիտասարդը, որ մի ինչ որ քէֆում, հասարակ հակաճառութեան պատճառով, դաշոյնով վիրաւորեց Բ.-ին և որը երկար տանջուելուց յետոյ՝ վերջապէս՝ մեռաւ։

— Այո, ճանաչում եմ, բաւական հարուստ է, բայց խելքով ադքատ, անբարոյական անպիտանների մէկը... խե՜ղճ Եփիմէ...

— Անպիտանութիւնը, անբարոյականութիւնը, նոյն իսկ ոճրագործութիւնը ոչինչ են, արատներ չեն, բաւական է որ հարուստ է։ Ոսկին աւելի մեծ կեղտոտութիւններ է ոսկեզօծում, աւելի մեծ ոճիրներ ծածկում։ Հենց այս հարցում էլ գլխաւոր դեր խաղացողը ոսկին է եղել։ Հաւատի աղբիւրից գիտեմ, որ մի քանի օր առաջ Ապրօն երկու հազար բուբլի է տուել Եփիմէի հօրը, իսկ մի քանի օր յետոյ խնդրել է աղջկայ ձեռքը, փոխ տուած դրամը յետ չստանալու պայմանով։ Այդ լուրը այնքան ճիշտ է, որքան ճիշտ է, որ ես Յովհաննէսն եմ։ Արդէն այդ ձեռով վարուել է նաև միւս աղջիկների ամուսնութեան ժամանակ։ Դրա համար է, որ նրա աղջիկներին «բանկի բիլետ» են կոչում։

— Այդ բոլորը ես գիտեմ, գիտեմ նոյնպէս, որ փեսաներից մէկին էլ հասցրեց խելագարութեան։

— Ուրեմն ի՞նչ կարելի է սպասել այնպիսի մի հօրից, որ ընտանեկան ամենափոքր խնդիրների մէջ էլ իւր մասնաւոր շահերն ու հաշիւներն է որոնում կամ ի՞նչպէս կարելի չհաւատալ, թէ նա աղջկայ սիրտը, սէրը, կեանքն ու երջանկութիւնը ծախել է երկու հազարով։

Որքան էլ աշխատում էի պաղարիւն մնալ, չվրդովուել—չէր լինում։ Լսելով այդ ամենը յիշելով դրանց քսամնելի արարքները—արիւնը խփում էր գլուխս, զանազան չար ու բարի մտքեր մղում էին ինձ դէպի վրէժխնդրութիւն, ստիպում էին ճակատ առ ճակատ համար ու հաշիւ պահանջելու բռնաւոր հօրից։

Սակայն հարցը դեռ պարզուած չէր, ուստի դարձայ Յովհաննէսին։

— Մի բան ես չեմ կարողանում լաւ մարսել. ախար առանց աղջկայ բացարձակ հաւանութեան հայրն ի՞նչպէս կարող էր խօսք տալ մինչև անգամ թոյլ տալ, որ նշան բերեն։

— Եւ դիւրին մարսելու էլ բան չէ, եթէ ընդհանուր մարդկային իրաւունքների տեսակէտից դատելու լինինք, պատասխանեց Յովհաննէսը կանգ առնելով։—Բայց մի մոռանաք որ մեր ժողովուրդը ունի իւր առանձին օրէնքը, առանձին հասկացողութիւնը։ Մեղանում հայրը իւր աղջկայ բացարձակ տէրն է. հայրը աղջկայ վրայ նայում է որպէս մի առարկայի վրայ, իսկ առարկաները կարող չեն կամք ու իրաւունք ունենալ։ Մեղանում հայրը իւր աղջկան կարող է տալ մի աղամարդի, թէև աղջիկը նրան ատելիս լինի կամ սրա հակառակ կարող է չտալ նրա սրրտի սիրածին։ Թէև հարցը վերաբերում է բացառապէս աղջկան, թէև դա նրա համար կեանքի ու մահու խնդիր է, այնուամենայնիւ երկու դէպքում էլ իրաւունք չունի ընդդիմանալու հօր կամքին։ Աղջիկը պարտական է սիրելու մէկին, եթէ հայրն այդպէս է կամենում է կամ խեղդելու իւր մէջ դէպի մի ուրիշն ունեցած սիրոյ զգացումը, եթէ հօրն այդ հաճելի չէ կամ հակա-

ռակ է նրա շահերին, նրա ինչ-ինչ հաշիւներին։ Մի խօսքով մեր աղջիկները ոչնչով տարբեր չեն հրապարակում վաճառուող ձիերից, էշերից և այլ անասուններից, որոնց տէրերը կարող են ծախել ումն էլ կամենան։

— Իսկ եթէ աղջիկը՝ դուրս գալով առարկայական կամ անասնական դրութիւնից, մտածէ իւր արդար իրաւունքները պաշտպանել, ինչպէս՝ քո ասելով՝ արել է Եվիմէն... բարկութիւնս զսպել չկարողանալով նկատեցի ես։

— Դա բացառութիւն է... Որքան յիշում եմ մեղանում մի այդպիսի դէպք դեռ չի պատահել,—պատասխանեց նա մտաղրաղ ձևով։

— Կարող է մինչև այսօր չպատահած լինել, բայց այսօր՝ ահա պատահում է... Դու չասացիր թէ օրիորդը բացարձակապէս մերժել է ինձնից բացի մի ուրիշի հետ ամուսնանալ. ուրեմն այս դէպքում ինչ կարող է անել հայրը։

Յովհաննէսը դառն ժպիտը շրթունքին կրկնեց.

— Հայրը...

Ապա ձեռքերը տրորելով ասաց.

— Հայրը շատ բան կարող է անել, մինչդեռ նրա հետ է ամբողջ քաղաքը, հասարակութեան կարծիքը։ Հայրը կբռնադատի նրան, կը տայ զօրով, ամեն ներելի ու աններելի միջոցներով կստիպէ, հակառակ դիպուածում կըտանջի, քաղցած՝ ծարաւ կըպահի, մինչև որ խելքի կըգայ, մինչև որ կը հնազանդի հօր կամքին...

Յովհաննէսը խօսելու ժամանակ միշտ քջջում էր գլխի մազերն ու շիկագոյն նօսր մորուքը, որպէս սովոր էր անել բարկացած կամ որևէ մի ծանր խնդրի մասին խօսելիս։

Նա լռութեամբ մի քանի քայլ անելուց յետոյ, շարունակեց.

— Ենթադրենք թէ աղջիկը՝ դուրս գալով առարկայական դրութիւնից, իւր իրաւունքները պաշտպանելու հաստատ որոշմամբ, դիմանալով տանջանքներին ու զրկանքներին, չուզեց հնազանդել հօր կամքին, այլ՝ այսպէս ասենք՝ մտածեց բողոքել

այդ բոլորի դէմ։ Զատ լաւ, բայց ո՞ւմ կարող է բողոքել նա։ Հասարակութեան, չէ՞ որ հասարակութիւնը ոչնչով տարբեր չէ նրա հօրից։ Դատարանին,—չէ՞ որ այնժամանակ ամբողջ քաղաքը կը թքէ նրան, կըխայտառակի, ծաղր ու ծանակի առարկայ կըդարձնի...

Նա կրկին սկսեց մազերն ու մօրուքը քջջել և վերջը եզրակացրեց.

— Չէ, աղջիկն անզօր է, ամեն իրաւունք հօր ձեռքին է, որին ակներև կերպով պաշտպանում ու քաջալերում է հասարակութիւնը, որովհետև բոլորն էլ մի ապականուած օղի ծնունդ են, մի սանրի կտաւ։

Ես էլ լաւ ճանաչում էի մեր հասարակութիւնը և սկսեցի համոզուել, որ Յովհաննէսի կարծիքը ճիշտ էր, որ հակառակ դիպուածում կարող էին օրիորդին բռնադատել, կարող էին ճնշում բանեցնել, տանջել, մինչև որ նա կըհամաձայնէր։

— Եթէ այդպէս է, էլ ինձ համար ինչ օգուտ ունի օրիորդի ընդդիմութիւնը, որով առաջ այնքան յուսադրեցիր ինձ։

— Այն օգուտը, որ դու կաս, իսկ քո հետ կըլինին և շատերը, եթէ չասեմ ամբողջ երիտասարդութիւնն ու մամուլը։ Երիտասարդութիւն և մամուլ—սրանք ամբոխի ինստինքներով չեն առաջնորդւում, սրանք ամբոխի խաւից բարձր են և ամբոխի տեսակէտից չեն նայում ամուսնական խնդրի ու իրաւունքների վրայ։ Ասել է թէ Եվիմէն գտնւում է բացառական պայմանների վրայ։ Ասել է թէ Եվիմէն գտնւում է բացառական պայմանների մէջ, նա անպաշտպան չէ։ Ի հարկէ ինչ էլ որ լինի, հասարակութիւնը այդ ըմբռնութեան վրայ հաշտ աչքով չի նայի, սակայն այդ հասարակութիւնը ինչ անուն ուզում է, թող տայ օրիորդին, այնուամենայնիւ նա քո տան մէջ, քո շրջանում միշտ կըվայելի ամենապատուաւոր կնոջ պատիւը...

Յանկարծ խօսքը փոխելով դարձաւ ինձ ու հարցրեց։

— Հայրը երբ և իցէ աղջկայ ամուսնութեան մասին խօսել է քո հետ կամ դու մերժել ես ամուսնանալ։

— Ո՛չ. նա բացարձակ ոչինչ չի խօսել հետս... Հա՛, որ-

քան յիշում եմ, սրանից մօտ մի ամիս առաջ, այն էլ միջանկեալ, խօսք բացեց և ասաց թէ Եփիմէի ձեռքը խնդրողներ կան ու յիշեց մի քանի անուններ... Ենթադրելով թէ նա խորամանկութեամբ ուզում է ինձնից խօսք դուրս քաշել և քաղաքում տարածուած լուրերն ստուգել—շատ անորոշ պատասխան տուի, ես ասացի՝ թէ իզուր է շտապել, թէ օրիորդը դեռ փոքր է, ուսումը չի վերջացրել, թէ պէտք է թողնել, որ նա մտաւորապէս ու ֆիզիքապէս հասունանայ, թէ այնժամանակ գուցէ լոյս ընկնին աւելի համապատասխան երիտասարդներ... Ապա աւելացրի, որ ես օտար մէկն եմ և կարծիքս չի կարող իրենց համար մի մեծ հեղինակութիւն համարուել, որ ինքը որպէս հայր ի հարկէ կարող է իւր աղջկայ ապագայի մասին աւելի նպաստաւոր կարգադրութիւն անել...

— Ուրիշ...

— Ուրիշ ոչինչ...

Նա շարժեց գլուխը, ապա ասաց.

— Իսկ նա հաւատացնում է աղջկան, թէ դու բացարձակապէս մերժել ես և այդ լուրը, ի հարկէ կողմնակի միջոցներով, աշխատում է տարածել քաղաքի մէջ։

Այդ ժամանակ մենք թեքուեցինք մեր փողոցը։ Մեր բակի դրան առջև, որ շատ էլ հեռու չէր, կանգնած էր մի անծանօթ մարդ։ Ինչպէս երևում էր, նա ճանաչում էր ինձ, որովհետև տեսնելուն պէս իսկոյն շտապեց դէպի ինձ։ Խորին կերպով գլուխ իջեցնելով, նա կանգնեց մեր առաջ, ու ձեռքը ծոցը տանելով ինչ-որ դուրս հանեց։ Ապա հանդարտ ու մեծ զգուշութեամբ բաց արեց փաթեթը, ապա մի ուրիշ փաթեթ, վերջը բաց արեց մի թղթի կտոր և միջից փակ ծրար դուրս քաշելով մեկնեց ինձ։

— Ցանձնարարութիւնից էլ ծանր բան չկայ, ասաց նա, փառք Աստծու որ պարտականութիւնս սրբութեամբ կատարեցի, այժմ գնում եմ խաղաղ սրտով։

Եւ գնաց, առանց պատասխանի կամ շնորհակալութեան սպասելու։

Ը.

Երեկոյեան ժամը երեքն անց էր. Հիւսիսից փչում էր բաւական ցուրտ քամի և թափանցում մինչև մարդուս ոսկրները։ Ես մրսում էի և զգում, որ երեսս մորթը զգալի կերպով ձըգձըգւում է, իսկ երբեմն ամբողջ մարմնով սարսռում։

Նախորդ օրուայ հիւանդութեան բոլոր նշաններն էին, որ կրկնւում էին։ Բայց ես առաջուայ նման այլևս ուշադրութիւն չէի դարձնում. ինձ կլանել էր մի ուրիշ հոգս, ուրիշ մտածում, որ առողջութիւնից աւելի ծանրակշիռ էր։ Մտանք տուն։ Մայրս զբաղուած էր երեկոյեան ընթրիքի պատրաստութեամբ։ Նա հազիւ ժամանակ գտաւ մեզ դիմաւորելու և Յովհաննէսի հասցէին մի քանի նախատական խօսք ուղղելուց յետոյ, որ նա շատ ուշ-ուշ էր գալիս մեզ մօտ, իրեն թանկ էր ծախում,—կըրկին գնաց իւր գործին։ Մենք մնացինք մենակ։

— Ի՞նչի մասին էինք խօսում,—ընդմիջուած խօսակցութիւնը շարունակելու մտքով հարցրի։

Յովհաննէսը մի շատ տարօրինակ ձևով նայեց ինձ, որի մէջ կար և՛ կասկած և՛ զարմանք։

Յիշելով ընդմիջուած խօսակցութիւնն ասացի.

— Հա՜, իրը թէ ես մերժողական պատասխան եմ տուել հօրը և...

— Զարմանալի բան խօսքս կրկին ընդմիջելով ասաց Յովհաննէսը ուսերքը վեր քաշելով։

Յետոյ հարցրեց.

— Դու նամակաբերին չճանաչեցիր։

— Ո՛չ. ի՞նչ կայ որ... բայց թողնենք այդ. ով ուզում է, թող լինի, ինձ համար միևնոյնն է. այս բոպէիս դրանցով հետաքրքրուելու և մանաւոր նամակներ կարդալու գլուխ չունիմ...

— Սատանայի մանաւոր նամակ չպիտի լինի. բերողը նրանց այդպիսին էր։ Ես նրան լաւ եմ ճանաչում և յիշում եմ

նրա խօսքերը նամակը քեզ տալու ժամանակ։ Կարծում եմ, որ այդ նամակը շատ բան պիտի պարզի։

Ես կարծես սթափուեցի խոր քնից և շտապեցի դուրս հանել ծրարը։

— Իրաւունք ունիս, Յովհաննէս, սա նրա ձեռագիրն է,— բացականչեցի ես և ծրարը պատռելով խորին երկիւղով դուրս քաշեցի նամակը։

Սիրաս այդ րոպէին տրոփում էր անսովոր արագութեամբ ուրախութիւն և վիշտ, յոյս ու յուսահատութիւն, քաջութիւն և վեհերոտութիւն— այս բոլորը խառնուել էին միմիեանց, կուռում, պատերազմում էին, առաջ բերելով զգացումների մի կատաղեալ քաոս։

«Արդեօք ինչ է բերում ինձ այս նամակը, ինչ պիտի ասի, խէր, թէ չառ» մտածեցի ես և բոլոր քաջութիւնս ժողովելով, սկսեցի կարդալ։

Նամակի սկիզբն այնքան էլ չէր հետաքրքրում ինձ, որովհետև օրիորդը Յովհաննէսի տեղեկութիւններն էր հաստատում։ Նա գրում էր երկու հաղար ռուբլու մասին, որ ստացել էր հայրը փեսացուից, յիշում էր իրը իմ մերժողական պատասխան տուած լինելուս մասին և ի միջի այլոց գրում էր։

«Հայրական տան մէջ, ուր ծնուել ու սնուել եմ, այդ տան մէջ բանտարկուած եմ ես, որպէս յանցագործ։ Յանցանքս կայանում է նրա մէջ, որ պաշտպանելով իրաւունքներս ամուսնութեանս խնդրում, ընդդիմանում եմ հօրս կամքին, չեմ ուզում գնալ նրան, որին չեմ կարող սիրել։ Արտաքին բոլոր յարաբերութիւններից զրկուած եմ. եթէ մօտս եկողներ էլ լինում են, գալիս են նրա համար միայն, որ նախատեն, թքեն, մրեն և ստիպեն ինձ զիջանել հօրս կամքին։ Ի՞նչեր առես չեն ասում. և՛ աղաչում, խնդրում են, և՛ սպառնում ու տանջում են։ Այսպէս են վարւում հետս և՛ կանայք և՛ տղամարդիկ... բոլորը միացած ձգտում են մի բանի միայն—խլել սիրտս մէկից, որին վաղուց, շատ վաղուց տուել եմ և տալ մէկին, որի անունն իսկ զզուանք

է բերում ինձ... Սակայն թող ինչ կուզեն անեն. եթէ նրանց ոյժերը բաւական չեն, թող օգնութեան կանչեն սատանաներին, այնուամենայնիւ որոշմանս վրայ հաստատ եմ և նրան քանդել չի կարող ոչ ոք։ Ցանջանքի ու տառապանքի մէջ, վշտի ու յուսահատութեան մէջ՝ կայ մի բան որ սիրտ է տալիս ինձ—դա այն համոզումն է, թէ արդար եմ, թէ պաշտպանում եմ իմ իրաւունքը։ Չէ՞ որ ես եմ ամուսնացողը, իմս պիտի լինի ամուսինը, մինչև գերեզման ես պիտի ապրեմ նրա հետ, ուրեմն ինչ են կամենում այդ մարդիկ... Հայրս ասում է, որ դուք մերժել էք... նոյնը հաստատում են ինձ մօտ եկող ամենքը... ես չեմ հաւատում, ոչ, չեմ հաւատում։ Եւ տանջում է ինձ այն միտքը, թէ ինչ են ուզում ձեզնից, ինչու կամենում են անպատճառ ցեխոտել ձեզ իմ առաջ, կարել սիրտս ձեզանից...

«Գրիչ առայ ձեռքս միմիայն երկու տող գրելու. բայց սիրտս այնքան լիքն է, այնքան լիքը, որ ակամայ երկարեց նամակս, այնինչ բուն խնդրի մասին դեռ չեմ գրել։ Ես հաւատացած եմ, որ լսելով ինձ հետ պատահած դէպքը, չէիք կարող անտարբեր մնալ, կրփութայիք պաշտպանել ինձ։ Աղաչում եմ, չլինի թէ մի այդպիսի փորձ անէք։ Նա (որի անունը զզուանք է բերում ինձ) իմ ներկայութեամբ սպառնաց սպանել ձեզ, եթէ այստեղ տեսնէ... Ո՜հ, ես վախենում եմ, ընդդումս ինձ ասում է, որ նա չար է, վատ է, ընդունակ է ձեր կեանքի դէմ սուր շարժելու։ Այդ պատճառով էլ շտապում եմ գրել ձեզ, որ ոչ մի փորձ չանէք... յոյս ունիմ թէ ես ինքս պիտի կարողանամ դուրս խրկել անկոչ փեսացուին։ Հաւատացէք, որ ոչ մի հանգամանք ինձ չպիտի կարողանայ ընկճել։ Թերևս շուտով առիթ ունենաք այս բոլորը երազ կարծելու»...

Նախ քան սոյն նամակն ստանալը, Յովհաննէսի հաղորդած լուրերի վրայ հիմնուելով, վճռել էի օրէնքով պաշտպանել օրիորդին նրա հօր և անկոչ փեսացուի բռնութիւնների դէմ։ Ինձ այս պատասխանատու քայլն անել դրդողը լոկ սէրը չէր, այլ աւելի մեծ բան։ Իմ պարտականութիւնը անձնական սիրոյ սահ-

մանից դուրս գալով, տարածւում էր բոլոր օրիորդների վրայ, որոնք նոյնքան հլու զոհ էին տիրապետող կարգերի առաջ։ Ես ի հարկէ չէի կարող ուրանալ ծնողների իրաւունքը դէպի իրենց զաւակները։ Ծնողների պարտականութիւնը ծանր է որպէս իրենց զաւակների, նոյնպէս ազգի և ամբողջ մարդկութեան առաջ։ Բացի այդ հայրը որպէս փողոցի մարդ, նա աւելի ձեռնտաս է ճանաչելու մարդկանց, որով իրաւունք ունի արգելք դառնալու աղջկայ ընտրութեանը եթէ աղջիկը սխալուած է, բայց ոչ մի հայր իրաւունք չունի աղջկանը վաճառելու, վարուելով նրա հետ որպէս մի առարկայի հետ։ Չէ՞ որ սա գերեվաճառութիւնից աւելի քոմմնելի է։

Աչքի առաջ ունենալով այս ընդհանուր նշանակութիւն ունեցող հանգամանքը, ես մտածել էի արձագանք տալ Եփիմէի օրինաւոր բողոքին, որով թերևս կարելի լինէր օրիորդական դասակարգը առարկայական դրութիւնից հանելով, հասցնել մարդավայել դիրքի, ճանաչել տալ այդ անզօր տարրի սեփական իրաւունքները։ Իմ վճիռն աւելի յանդուգն էր, հաստատ որոշել էի կանգ չառնել ոչ մի արգելքի առաջ, ոչ մի խոչնդոտի առաջ, մինչև անգամ զոհել կեանքս, եթէ բռնաբարուած իրաւունքների վերականգնումն ինձնից պահանջելու լինէր մի այդպիսի զոհ։

Այո՛ ես այդպէս էի վճռել։

Բայց Եփիմէի նամակը քանդեց ամեն ինչ։ Ես ստիպուած էի օրիորդի թախանձանքին զիջանելու, սակայն տեղի տալու, առժամանակեայ կերպով յետաձգելով ծրագրիս իրագործումը, մինչև որ հանգամանքները ցոյց կրտային ինչ անելիքս։ Որքան էլ յուսահատական լինէին Յովհաննէսի կարծիքները, այնուամենայնիւ ես գալիս էի այն համոզման, որ խաղը դեռ տանուլ տուած չէ։ Հայրը աղջկայ վրայ բռնութիւն գործ դնելով հանդերձ, դժուար թէ ծայրահեղ միջոցների դիմէր այն համոզմամբ, թէ ես կարող եմ միջամտել և գործին սուր կերպարանք տալ։ Բացի այդ կար նաև ուրիշ մխիթարիչ հանգամանք,

այն է մինչև մեծ պաս, երբ պսակակատարութիւնը դադարում է, մնացել էր մի երկու տասնեակ ժամ միայն։ Ինչ կարող էին անել այդ մի քանի ժամում, մանաւանդ որ օրիորդը հակառակ էր այդ բանին և՛ ըստ իւր նամակի, հակառակ էլ պիտի մնար մինչև վերջը...

Իմ կարծիքի հետ համաձայն գտնուեց նաև Յովհաննէսը։ Արդէն մութը կոխել էր, երբ նա դուրս գնաց, խոստանալով միւս օրը աւելի մանրամասն տեղեկութիւն բերել։ Նա աւելացրեց նոյնպէս, որ եթէ հանգամանքները դէպի վատը փոխուելու լինին, անշուշտ օրիորդը կըշտապի հաղորդել։

Ես մնացի մենակ, ամեն բոլէ սպասելով մի նոր նամակի կամ տեղեկութեան։ Յուսահատութիւնը կրկին սկսեց պաշարել ինձ, ժամերն անցնում էին աւելի դանդաղ, աւելի երկար, քան յաւիտենականութիւնը։ Բայց ոչ մի տեղեկութիւն, ոչ մի նոր լուր։ Դիշերուայ մեծ մասն անցրի անքուն, կեղեքիչ մտածումներով պաշարուած, իսկ միւս մասը սոսկալի երազների ու հոգեկան տանջանքների մէջ։ Ի՞նչեր էի երազում, ինչ հրէշաւոր պատկերներ ասես, որ չէի տեսնում։ Գնում եմ ես, ճանապարհը երկայն է ու անծայր. բայց նա ծանօթ է. հանդիպում են և ծանօթ դէմքեր։ Ես մտնում եմ մի սիրուն պարտէզ, ինձ թւում թէ այդ պարտէզը Եփիմէենց պարտէզն է ուր մի ամբողջ գիշեր լուսացրի։ Շտապում եմ դէպի ծայրը, որտեղից քչքշալով անցնում է առուակը։ Յոյս ունիմ այնտեղ գտնել Եփիմէին։ Եւ ահա նա առուակի միւս ափին կանգնած։ Դժգոյն է նա որպէս մահ, տխուր՝ որպէս մթին գիշեր։ Բայց որքան լայնացել է այդ առուն։ Նա դարձել է մի հսկայական գէտ փրփրալից ու պղտոր ուր լողում են անթիւ ճճիներ, զեռուններ, օձ ու կարիճներ, կարծես գետը կազմուած է հէնց դրանցից։ Իսկ այն կողմից կանչում է Եփիմէն։ Նրա ձայնը չեմ լսում, բայց տեսնում եմ ձեռքի շարժումները։ Նա օգնութիւն է կանչում։ Ի՞նչ կայ... ի՞նչ է պատահել... Ու ինքս ինձ նետում եմ այդ թունաւոր զեռուններով լի գետի մէջ և դարձնում եմ... Դիշերուայ ժամը եր-

կուն է, գլուխս բոցերի մէջ այլուում է, ուղեղս հալուում, խաշող քրտնքի մէջ ողողուած եմ։ Այնուամենայնիւ կրկին քունս տանում է և... ինքս ինձ գտնում եմ թունաւոր ղեռուներով ու սողուններով լի գետի միւս ափին։ Դա այլևս պարտէզ չէ, այլ մի անծանօթ անապատ ուր կարծես մարդկային ոտք դեռ չի կոխել։ Եփիմէն այնտեղ չէ։ Կոկորդիս ամբողջ լայնութեամբ կանչում եմ «Եփիմէ»... Ու զարթնում եմ, աւելի ճիշտն ասած մայրս զարթնացնում է ինձ։ Մի քառորդ ժամի չափ անկողնում տապակուելուց յետոյ դարձեալ քնում եմ ու կրկին ինքս ինձ զգում նոյն ամայի անապատի մէջ։ Ես չեմ մոռացել, որ կանչել եմ Եփիմէին ու վազ եմ տալիս ահագին տարածութեան մէջ նրան գտնելու մտքով, բայց յանկարծ առջևս ցցւում է մի կանացի դէմք։ Ինձ թւում է թէ նա գետնից բուսաւ ու ուզում եմ յետ դնալ։ Նա կարում է առջևս և ասում.

— «Դու կանչեցիր...

— «Ես կանչեցի Եփիմէին։

— «Կուզես քեզ տանեմ նրա մօտ... գնանք։

Ու ուրուականը բռնում է թևերս։ Նրա հպաւորութիւնը կարծես թունաւորում է ինձ, նա սառն է ինչպէս սառոյց։

— «Դու ով ես, հարցնում եմ ակռաներս կափկափելով։

— «Դագաղը... պատասխանում է դժոխային ձայնով։

Ես ճչացի ու զարթնեցի, բայց երկար ժամանակ չէի կարողանում ինքս ինձ գտնել։ Վերջապէս դա մի տաժանելի դիշեր էր ինձ համար։ Խեղճ մայրս մի քանի անգամ ստիպուած եղաւ ինձ զարթնացնելու, միշտ կրկնելով, «Ախար ի՞նչ պատահեց քեզ այս գիշեր»... Նա միամիտ էր ոչինչ չգիտէր, ոչ էլ ես մտածում էի պատմել այն դժբաղդութեան մասին, որ պատահել էր ինձ։

Առաւօտեան զարթնելով տեսայ որ գլուխս ծանրացել է, բարձից չի բարձրանում, կարծես կապարով լցուած լինէր։ Ամբողջ մարմինս ցաւում էր, ոսկրներս փշրուում էին և ինքս ինձ

սաստիկ յոգնած էի զգում, կարծես մի ահագին բարձրութիւնից ընկած, ջախջախուած լինէի։

Բուն բարեկենդանի կիրակի օրը լինելով, հետզհետէ մեզ մօտ էին գալիս մեր մերձաւոր ազգականները, ըստ սովորութեան, բարիկենդանը, միասին, մի ընդհանուր սեղանի վրայ անելու և մեծ պասին միասին դիմաւորելու։ Դուրսն էլ մեծ ոգևորութիւն էր տիրում, չորս կողմից դափ ու զուռնայի, երգ ու ուրախ աղաղակներ էին լսւում։ Բայց այդ բոլորը ոչ միայն ինձ չէին զրաղեցնում, այլ՝ ընդհակառակը՝ աւելի ձանձրացնում, բարկացնում էին։ Թւում էր թէ այդ բոլորն ինձ ծաղրելու, այպանելու համար են սարքուած, որ մահու չափ ծանր էին ազդում։

Ինձ վրայ ծանր էին ազդում և ազգականներիս հարցուփորձը։ Ամենքն էլ պնդում էին, որ չափազանց գունատ եմ և աչքերս կորցրել են իրենց փայլը։ Ապա խումբ խումբ ժողովուած, ինչ-որ խորհրդաւոր ակնարկներ էին անում ու քչփչում որոնք աւելի ևս յուսահատեցնում էին ինձ։ Դրանցից խոյս տալու մտքով մտածեցի դուրս գալ փողոց, բայց երբ հայելու մէջ դէմքս տեսայ, զզուանքս եկաւ, կարծես գերեզմանից դուրս քաշած մեռել լինէի կամ քսան տարով ծերացած։ Ուստի քաղաք դուրս գալու միտքը թողեցի և մտայ առանձնասենեակս։

Սրանից մի կէս ժամ չանցած ներս մտաւ Յովհաննէսը։ Նա սաստիկ մռայլ էր, յօնքերն ու բռունցքը սեղմած, աչքերը փայլում էին վայրագ գազանի կատաղութեամբ։ Նա այնքան յուզուած էր, որ «բարի լոյս» տալիս շրթունքը ցնցւում էին, իսկ ձայնը դողում։

— Ի՞նչ լուր ունիս Եփիմէից, հարցրի ես տնհամբերութեամբ, թէև նրա դէմքի արտայայտութիւնից գուշակում էի, որ նա ինձ համար բարի լուր չէր բերել, որ ինչ-որ աւելի ծանր դժբաղդութիւն է պատահել։

Յովհաննէսն խկոյն չպատասխանեց, նա նախ գլուխը քարշ դցեց ու սկսեց ժամացոյցի շղթայի հետ խաղալ, ապա նայեց

ինձ, ուղիղ աչքերիս մէջ, կարծես ուզում էր գուշակել թէ կարող եմ դիմանալ հարուածին։ Յետոյ տարօրինակ, անընական ձայնով պատասխանեց։

— Նա ամուսնացաւ...

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն։

Չգիտեմ քանի օր կամ շաբաթ էր անցել այդ օրից, բայց գիտեմ որ աչքս բանալով ինքս ինձ գտայ անկողնում, ազգականներով շրջապատուած, ձեռքս մի ակնոցաւոր երիտասարդի ձեռքի մէջ, որ զարկերակս էր քննում։ Յիշում եմ նոյնպէս, որ նա՝ այդ ակնոցաւոր երիտասարդը դարձաւ Յովհաննէսին և ցածրը ձայնով ասաց.

— Այժմ կարող եմ ասել, որ տագնապն անցած է։

Իսկ մայրս ուրախութիւնից լաց եղաւ։

Այդ օրից սկսած ես սկսեցի ապաքինել, բայց ապաքինումս աւելի ֆիզիքական էր։ Ես ոչ միայն անցեալից ոչինչ չէի յիշում և չէի մտածում, այլև ոչ մի բան ինձ չէր հետաքրքրում։ Ի հարկէ ես տեսնում էի այն բոլորն ինչ որ անցնում էր շուրջս և ինչ որ գտնւում էր աչքիս առաջն, բայց ուղեղս չէր գործում, կարծես նա մեռած լինէր կամ կտրուած այն հաղորդակցութեան թելը, որով աչքը հաղորդում է ուղեղին։ Սակայն այս դրութիւնը երկար չտևեց կամաց կամաց գլուխս էլ սկսեց կաղդուրուել, հետաքրքրութիւնս զարթնեց. զարթնեց և յիշողութիւնս։ Մի առաւօտ, գիշերուայ խաղաղ քնից զարթնելով յիշեցի Եփիմէին. սակայն թւաց ինձ, թէ այդ անունը ես լսել եմ երկար, շատ երկար տարիներ առաջ, ինչպէս մէկը յիշում է տասնեակ տարիներ առաջ մեռած իւր թէկուզ ամենաթանկագին անձին։

Մի կիրակի օր, երբ այնքան կազդուրուել էի, որ բժիշկի թոյլտուութեամբ դուրս էի եկել գարնան ազատ օդը շնչելու, խօսք բաց արի Եփիմէի մասին։

— Մթթէ դեռ չես մոռացել, հարցրեց Յովհաննէսը։

— Չեմ մոռացել, բայց թւում է ինձ, թէ նրա յիշատակը տեսնում եմ ես մի տեսակ թանձր վարագոյրի ետև։

— Եւ յիշում ես ամեն բան։

— Այո, մի քանի օր է, որ յիշում եմ և հենց այդ է պատճառը, որ հետաքրքրւում եմ։

Յովհաննէսը ըստ երևոյթին չէր ուզում այդ մասին երկար խօսել հետս։ Նկատելով այդ, աւելացրի։

— Գիտեմ, դժուարանում ես խօսել, բայց միամիտ կաց։ Ամենագլխաւորը՝ նրա ամուսնութիւնը յիշում եմ և տեսնում ես, որ այլ ևս ազդեցութիւն չի գործում վրաս։ Սրանից բացի ուրիշ ինչ կարող է պատահած լինել, որ ես չկարողանամ տանել։

— Իսկապէս ոչ մի առանձին բան էլ չի պատահել, որ կարողանար հետաքրքրել քեզ։

— Ինձ հետաքրքրում է այն, թէ ինչպիսի պայմանների մէջ տեղի ունեցաւ այդ բռնի ամուսնութիւնը, որ Եփիմէն ստիպուեց հնազանդելու։

— Ահա թէ ինչպէս. բարեկենդան շաբաթ օրը ամեն միջոց գործադրելուց յետոյ, երբ Եփիմէն չի զիջանում, կասկած է զարթնում նրանց մէջ, թէ բո և նրա մէջ գաղտնի հաղորդակցութիւն կայ յաջողեցնում են լոյս հանել Եփիմէի քեզ նամակ գրած լինելու գաղտնիքը։ Այն ժամանակ վճռում են ամուսնութիւնը չհետաձգել։ Եւ նոյն գիշերը նստեցնելով կառքը, իսկ կառքը շրջապատելով մի խումբ զինուած մարդկանցով, տանում են եկեղեցի։ Եկեղեցում նա բողոքում է այդ իւր կամքի հակառակ ամուսնութեան դէմ, յուսալով, թէ գէթ Աստուծոյ պաշտօնեան, սրբազան տաճարի մէջ կրելի իւր բողոքը և ըստ օրինի կրպաշտպանի իւր իրաւունքը։ Բայց կաշառուած քահանան ոչ միայն չի

լսում նրան, այլ և ստիպում է լռել և հնազանդել հօր կամքին...

— Բռնութեամբ ամուսնացնում են ու ապրում է այն տղամարդի հետ, որի անունը զզուանքով էր յիշում։

— Այո, ամուսնացնում են բռնութեամբ, բայց նա քո աստծի նման չի ապրում ատելի տղամարդի հետ։

— Հապա... թողեց...

— Ամուսնութիւնից մի շաբաթ յետոյ հողին յանձնեցինք նրա մարմինը... թոյն էր ընդունել և մեռաւ։

— Մեռաւ... խե՜ղճ Եփիմէ։

Ու աչքերս լցուեցին արտասունքով։

— Նա ազատուեց. յաւիտենական տանջանքից ազատուեց, ասաց Յովհաննէսը երևի ինձ սփոփելու համար։

Բայց ես սփոփանքի պէտք չունէի, տաժանելի հիւանդութիւնը անյետ ջնջել էր այն զգացումը, որի շնորհիւ անկարող գտնուեցի տանելու նրա ամուսնութեան հասցրած ծանր հարուածը։

ՎԵՐՋ։

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՍՅԱՍԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
4106

ՀՀ Ազգային գրադարան
NL0350504

42